ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՄԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.02-«Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գիտական ղեկավար՝
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Վ. Ստեփանյան

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Պետական կառավարման ձևի հասկացությունը և դասակարգման հիմնախնդիրները……..…….....….8
2. Պետական կառավարման արդի հիմնական ձևերը. արժանիքներ և թերություններ……..…….....26

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՍԱՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության «հիբրիդային» կառավարման մոդելը ……..…….....60
2. Հայաստանի Հանրապետության նախագահակենտրոն կառավարման մոդելը…….....…….…….70
3. Հայաստանի Հանրապետության խորհրդարանական-նախագահական կառավարման մոդելը.....……..…….....97

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԸ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ազգային ժողովը՝ որպես պետական իշխանության համակարգի կենտրոն……..…….....…….111
2. Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակը ՀՀ խորհրդարանական կառավարման մոդելում……..…….....128
3. Կառավարությունը ՀՀ խորհրդարանական կառավարման համա-կարգում……..…….....137
4. Դատական իշխանության անկախության ապահովման հիմնա-խնդիրները……..…….....152

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……166

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..…….....169

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի հետազոտման արդիականությունը: Իրավական պետության կառուցման գործընթացում կարևոր նշանակություն ունի ճիշտ՝ տվյալ պետության գոյատևման պայմաններին առավել համապատասխանող պետական կառավարման մոդելի ընտրությունը: Պետական կառավարման արդյունավետ մոդելի ընտրության հիմնախնդիրը առավել արդիական է Արևելյան Եվրոպայի և, մասնավորապես, հետխորհրդային պետությունների համար: Այդ երկրներում կատարվել և կատարվում են մեծածավալ և մեծաքանակ սահմանադրական փոփոխություններ, որոնք առաջին հերթին առնչվում են հենց պետական կառավարման մոդելների կատարելագործմանը:

Բացառություն չէ Հայաստանի Հանրապետությունը: 1991 թվականից մինչ օրս պետական կառավարման մոդելն այստեղ ենթարկվել է էական փոփոխությունների: Այդ մոդելների առանձնահատկությունների գիտական վերլուծությունը հնարավորություն է ընձեռնում բնութագրելու գործընթացի ընդհանուր միտումները և օրինաչափությունները:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվել են խորհրդարանական կառավարման սահմանադրական հիմունքները: Փոփոխված Սահմանադրությունը բովանդակում է բազմաթիվ սկզբունքային իրավադրույթներ, որոնք պետք է կոնկրետացվեն ընդունվելիք սահմանադրական օրենքներով և օրենսգրքերով: Ուստի խորհրդային կառավարման ՀՀ մոդելի առանձնահատկությունների գիտական վերլուծության հիման վրա հնարավորություն է ստեղծվում ձևակերպել մի շարք գիտականորեն հիմնավորված առաջարկություններ՝ ուղղված սահմանադրական դրույթների առավել արդյունավետ իրացմանը: Պետք է նաև հաշվի առնել, որ փոփոխված Սահմանադրության տեքստում առկա են նաև որոշակի իրավական բացեր, ոչ հստակ կամ հակասական ձևակերպումներ, որոնք մեկնաբանման, այդ թվում՝ դոկտրինալ մեկնաբանման կարիք ունեն:

Վերը նշված հանգամանքներով է հիմնավորվում ատենախոսության թեմայի հետազոտնման տեսական և գործնական արդիականությունը:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Պետական կառավարման ձևի հասկացության բացահայտմանը, կառավարման տարբեր ձևերի, տարատեսակների և կոնկրետ մոդելների առանձնահատկությունների, դրանց արժանիքների և թերի կողմերի ուսումնասիրությանը արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ ավանդապես հատկացվել է լուրջ ուշադրություն: Այդ հիմնախնդիրների քննարկմանն են նվիրված, մասնավորապես, Մ.Վ. Բագլայի, Ա. Բեբլերի, Մ. Դյուվերժեի, Ս. Հոլմսի, Գ.Ն. Մանովի, Վ.Ն. Շապովալի, Վ.Ե. Չիրկինի, Բ.Ա. Ստարաղուբսկիյի, Յ. Յոհերի, Ֆ. Արդանի, Մ. Մորաբիտոյի և մի շարք այլ հեղինակների աշխատությունները: Այդուհանդերձ գիտական ուսումնասիրությունների այս ոլորտում առկա են բազմաթիվ վիճահարույց հարցեր, որոնց վերաբերյալ դեռևս շարունակվում են սուր քննարկումները:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ, մասնավորապես՝ սահմանադրական իրավունքի տեսության հայրենական իրավագետների կողմից, ՀՀ պետական կառավարման ձևի համալիր ուսումնասիրություններ չեն իրականացվել: Հետազոտությունները հիմնականում ուղղված են եղել ՀՀ պետական կառավարման համակարգի առանձին ինստիտուտների (հիմնականում՝ նախագահի, խորհրդարանի, դատական համակարգի) իրավական կարգավիճակի գիտական վերլուծությանը կամ Հայաստանի Հանրապետության կառավարման առանձին մոդելների էական

հատկանիշների բացահայտմանը: Այս առումով պետք է նախ նշել Ն. Այվազյանի, Գ. Դանիելյանի, Հ. Հակոբյանի, Գ. Հարությունյանի, Ա. Հարությունյանի, Վ. Պողոսյանի, Ժ. Ջհանգիրյանի, Վ. Ստեփանյանի աշխատությունները:

Սույն ատենախոսությունը ՀՀ պետական կառավարման տարբեր մոդելների գիտական վերլուծության առաջին փորձն է, որում հեղինակը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի կատարելագործման գործընթացի հիմնական փուլերը և միտումները:

Հետազոտության օբյեկտը ՀՀ պետական կառավարման ձևի կատարելագործմանն առնչվող հիմնախնդիրներն են:

Հետազոտության առարկան ՀՀ պետական կառավարման տարբեր մոդելների առանձնահատկություններն են, ինչպես նաև կառավարման ձևի կատարելագործման հիմնական միտումները:

Հետազոտության նպատակն է ՀՀ կառավարման մոդելների հաջորդական փոփոխությունների գործընթացի վերլուծության հիման վրա բացահայտել երկրի կառավարման ձևի զարգացման հիմնական օրինաչափությունները:

Հետազոտության խնդիրներն են «կառավարման ձև» հասկացության բնորոշումը, ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող հիմնական հանրապետական կառավարման ձևերի համեմատական վերլուծությունը, ՀՀ կառավարման կիսանախագահական ձևի հիմնական մոդելների արժանիքների և թերությունների բացահայտումը, ՀՀ խորհրդարանական կառավարման մոդելի իրացման հետ կապված հիմնախնդիրների բացահայտումը և այդ մոդելի արդյունավետ իրացմանն ուղղված՝ գիտականորեն հիմնավորված առաջարկների ձևակերպումը:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը ամենից առաջ արտահայտվում է նրանով, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել Հայաստանի երրորդ Հանրապետության կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները, բացահայտել այդ գործընթացի հիմնական օրինաչափություններն ու միտումները և այդպիսի ուսումնասիրության հիման վրա ձևակերպել ու հիմնավորել մի շարք նորարարական առաջարկություններ՝ ուղղված խորհրդարանական կառավարման ՀՀ մոդելի առավել արդյունավետ իրացմանը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են՝

1. Իրավաբանական գրականության մեջ նկատվում է կառավարման ձևի և պետական ռեժիմի նույնականացման միտում: Տարանջատվում են պետական ռեժիմի և դրան համապատասխան՝ պետական կառավարման երեք հիմնական մոդելներ. իշխանությունների միաձուլման ռեժիմ (բացարձակ միապետություն), իշխանությունների բաժանման ռեժիմ (նախագահական հանրապետություն) և իշխանությունների համագործակցության ռեժիմ (խորհրդարանական հանրապետություն): Սակայն այս մոտեցումը ունի խոցելի կողմեր՝ ա) իշխանությունների միաձուլում առկա է ոչ միայն բացարձակ միապետություններում, այլ նաև կարծր ավտորիտար ռեժիմի որոշ նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգերում, բ) նախագահական հանրապետություններում (օրինակ՝ ԱՄՆ-ում) առկա է ոչ միայն իշխանությունների բաժանում, այլև համագործակցություն, գ) բազմաթիվ ժամանակակից կիսանախագահական և խորհրդարանական կառավարման երկրների սահմանադրություններում հստակ ամրագրված է իշխանությունների բաժանման

սկզբունքը, դ) տվյալ դասակարգումից դուրս է մնում կիսանախագահական կառավարման ձևը, որն ըստ ներկայումս առավել ճանաչում ունեցող տեսակետի՝ կառավարման ինքնուրույն ձև է։

2. Անցած 26 տարիների ընթացքում ՀՀ կառավարման ձևը փոփոխվել է արդեն չորս անգամ։ 1991 թվականին սահմանադրական օրենքների հիման վրա խորհրդային կառավարման ձևից անցում կատարվեց կառավարման մի նոր ձևի, որն առավել դիպուկ կերպով կարելի է բնորոշել որպես «հիբրիդային», քանի որ ներառում էր ինչպես խորհրդային (սովետական), այնպես էլ նախագահական և կիսանախագահական կառավարման մոդելներին բնորոշ տարրեր։ 1995 թվականի Սահմանադրությամբ ձևավորվեց խիստ նախագահակենտրոն կիսանախագահական կառավարման մոդելը։ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում էականորեն սահմանափակվեցին ՀՀ նախագահի լիազորությունները և ընդլայնվեցին խորհրդարանի և Կառավարության իրավասությունների շրջանակները. արդյունքում ձևավորված կիսանախագահական կառավարման մոդելը կարելի է բնորոշել արդեն որպես խորհրդարանական-նախագահական։ Վերջապես, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում անցում է կատարվում խորհրդարանական կառավարման մոդելի։

3. 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորված խորհրդարանական կառավարման մոդելն ունի մի շարք ընդհանրություններ հայտնի այլ մոդելների հետ և, միևնույն ժամանակ, մի շարք այնպիսի էական յուրահատկություններ, որոնք որոշակի հիմքեր են տալիս այդ մոդելը որպես առանձնահատուկ «հայկական» մոդել գնահատելու համար։

4. Ազգային ժողովի կենտրոնական դերը պետական իշխանության համակարգում առանձնակի արդիականության է հաղորդում այդ մարմնում կայուն մեծամասնություն ապահովելու հիմնախնդրին։ Այդպիսի կայունությունը Ազգային ժողովի կողմից իր գործառույթների արդյունավետ իրականացման անհրաժեշտ նախապայման է։ Բացի դրանից՝ խորհրդարանի կայունությունը պարտադիր նախապայման է գործադիր իշխանության ամբողջ համակարգի, ներառյալ՝ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Կառավարության կայունության ապահովման համար։

5. Տեսականորեն, Ազգային ժողովի գործառույթների արդյունավետ իրականացման համար կայուն մեծամասնությունը, թերևս, պետք է բաղկացած լինի պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդից։ Սակայն կարևոր է հաշվի առնել, որ սահմանադրական օրենքների ընդունման, ինչպես նաև առանձին բարձրագույն պաշտոններում նշանակման կամ սահմանադրական մարմինների կազմավորման համար ձայների որակյալ մեծամասնության սահմանումը ոչ թե ինքնանպատակ է, այլ խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության միջոց։ Ուստի առավել ընդունելի կարելի է համարել այնպիսի մեծամասնության առկայությունը, որը մի կողմից Ազգային ժողովին հնարավորություն է տալիս արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները, իսկ մյուս կողմից՝ սահմանադրական օրենքների ընդունման և սահմանադրական կարևորագույն մարմինների ձևավորման ժամանակ ստիպում խորհրդարանական մեծամասնությանը հաշվի առնել ընդդիմության դիրքորոշումները։ Ուստի առավել ընդունելի կարելի է համարել այն մեծամասնությունը, որը մոտ է, սակայն չի հատում

պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի սահմանը: Խորհրդարանական մեծամասնության ավելի մեծ «կայունությունը» կարող է հղի լինել մեկ կուսակցության կամ խորհրդարանական մեծամասնություն կազմող մի քանի կուսակցությունների դիկտատուրայի հաստատման վտանգով:

6. Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակի հիմունքների և լիազորությունների համակարգի վերլուծության արդյունքում գալիս ենք եզրահանգման, որ նախագահի լիազորությունները, նույնիսկ այլ խորհրդարանական կառավարման մոդելների համեմատ, խիստ սահմանափակված են: Ավելին, Սահմանադրությամբ ամրագրված են այդ սահմանափակ լիազորությունների իրականացման այնպիսի ընթացակարգեր, որոնք նախագահին փաստորեն զրկում են սահմանված լիազորություններն ինքնուրույն իրականացնելու հնարավորությունից: Ուստի կարելի է փաստել, որ Հանրապետության նախագահի մասնակցությունը պետական կառավարման ընթացակարգերին զուտ ձևական բնույթ է կրում:

7. Հանրապետության նախագահի լիազորությունների կտրուկ սահմանափակման պայմաններում Կառավարությունն է իրականացնում բարձրագույն քաղաքական ղեկավարությունը և պետության գործերի ընդհանուր կառավարումը: Այն պատասխանատու է խորհրդարանի առջև, որը, սակայն, արձակվում է իրավունքի ուժով, եթե չի կարողանում ընտրել վարչապետ կամ հավանություն տալ Կառավարության ծրագրին: Նկատենք նաև, որ վարչապետի դերակատարությունն այդ գործընթացներում, ինչպես նաև Կառավարության գործունեության կազմակերպման ոլորտում, հիմք է տալիս արձանագրելու, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ձևավորվող խորհրդարանական կառավարման համակարգը կրում է վարչապետակենտրոն բնույթ:

8. Կիսանախագահական կառավարման համակարգի փոխարինումը խորհրդարանական կառավարման մոդելով ինքնին բավականին լայն հնարավորություններ է ստեղծել ՀՀ դատական իշխանության գործունեության օբյեկտիվության, արդյունավետության և իշխանության տվյալ թևի անկախության մակարդակը որակապես բարձրացնելու համար: Սահմանադրությամբ արդեն ամրագրված են դրա համար անհրաժեշտ հիմքերը: Կարևոր է ընթացիկ օրենսդրությամբ, առաջին հերթին՝ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով և Դատական օրենսգրքով, մաքսիմալ չափով իրացնել այդ հնարավորությունները:

9. Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման ընթացակարգն արհեստականորեն բարդեցված է: Ըստ էության, Հանրապետության նախագահին որևէ գործառույթ վերապահված չէ: Նա պարզապես դատավոր է նշանակում Ազգային ժողովի կողնից ընտրված անձին: Կարելի էր պարազապես Հանրապետության նախագահին վերապահել Բարձրագույն դատական խորհրդի կողմից յուրաքանչյուր տեղի համար ներկայացված երեք թեկնածուներից մեկին ընտրերելու և նշանակելու լիազորությունը: Այս դեպքում էականորեն կսահմանափակվեր նաև իր էությամբ քաղաքական մարմնի՝ Ազգային ժողովի, ներգործության հնարավորությունը Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման գործընթացի վրա և այդ ներգործությունից բխող՝ դատավորների քաղաքականացման վտանգը: Սահմանադրությամբ սահմանված չէ վարչական դատարանի դատավորների և նախագահի նշանակման կամ ընտրության որևէ ընթացակարգ: Մինչդեռ 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը առանձնահատուկ տեղ է

զբաղեցնում դատական համակարգում և չի դասվում ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանների թվին, իսկ գործնականում այն կարելի է դիտարկել որպես մասնագիտացված դատարան: Ելնելով վերը նշվածից՝ կարծում ենք, որ ճիշտ կլիներ ավելացնել առանձին մաս, որով կսահմանվեր «մասնագիտացված դատարան» եզրույթը և դրա կազմավորման կարգը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հիմքերն են կազմել գիտության ընդհանուր մեթոդները (սկզբունքները)՝ դիալեկտիկական, պատմական, համակարգային և կառուցվածքային, տրամաբանական, տարրալուծման և համադրման, ինչպես նաև իրավագիտական ուսումնասիրությունների մասնավոր մեթոդները՝ համեմատական-իրավական, ձևական-իրավական, իրավաբանական որոշումների մշակման, իրավական ակտերի մեկնաբանման:

Հետազոտության արդյունքների նշանակությունը: Ատենախոսական հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պետական կառավարման ձևերի և, մասնավորապես, ՀՀ կառավարման ձևի հետագա գիտական ուսումնասիրությունների ընթացքում: Դրանք կարող են օգտագործվել նաև պետության և իրավունքի տեսության, ՀՀ սահմանադրական իրավունքի, համեմատական սահմանադրական իրավունքի դասընթացներում: Հետազոտության որոշ կոնկրետ դրույթների օգտագործումը կարող է նաև նպաստել 2015 թվականին փոփոխված Սահմանադրության 4-7-րդ գլուխներում ամրագրված մի շարք իրավադրույթների՝ ընթացիկ օրենսդրությամբ առավել արդյունավետ իրացմանը:

Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի մեկ մենագրությունում և չորս հոդվածներում, ինչպես նաև քննարկվել են ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստերում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված 9 պարագրաֆներից, եզրահանգումներից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Պետական կառավարման ձևի հասկացությունը և դասակարգման հիմնախնդիրները

Պետական կառավարման ձևին առնչվող հիմնախնդիրների վերլուծությանը իրավաբանական գրականության մեջ ավանդապես հատկացվել է մեծ ուշադրություն։ Կարելի է արձանագրել, որ չնայած նրան, որ տրվում են այդ հասկացության տարբեր բնորոշումներ, քաղաքագիտական և իրավաբանական գրականության մեջ ձևավորվել է այն միասնական մոտեցումը, որ պետական կառավարման ձևը ներառում է բարձրագույն պետական իշխանության կազմակերպման եղանակը, պետության բարձրագույն մարմինների իրավական կարգավիճակը, նրանց միջև փոխհարաբերությունների սկզբունքները, այդ մարմինների ձևավորման գործընթացում քաղաքացիների մասնակցությունը։[1]

«Պետական կառավարման ձև» հասկացության մեջ ներառվող հարցերի շրջանակից արդեն իսկ հասկանալի է, թե ինչու է այդպիսի մեծ ուշադրություն հատկացվել դրան՝ ինչպես ժամանակակից փիլիսոփայական, քաղաքագիտական և իրավաբանական գրականության մեջ, այնպես էլ հին մտածողների կողմից։ Քննարկվող թեմայի արդիականությունն առավել կարևորվում է հետսոցիալիստական երկրների պարագայում, որտեղ արմատական սոցիալական վերափոխումների միջոցով իրականացվող անցումը հին պետական իշխանության համակարգից դեպի նորը անխուսափելիորեն հանգեցնում է պետական կառավարման ձևերի փոփոխության։ Ընդսմին պետք է նկատել, որ նոր պետական իշխանության բովանդակությունը և գործառույթները ավելի արագ են փոփոխվում, քան պահպանողական տարր հանդիսացող պետական կառավարման ձևը։ Պետական կառավարման ձևի փոփոխության համար ավելի երկարատև ժամանակ է

[1] Տե՛ս, օրինակ, Конституционное право зарубежных стран, под ред. М.В. Баглая, Ю.И. Лейбо, Л.М. Энтина. М., 2008, էջ 143; Шаповал В.Н. Сравнительное конституционное право. Киев, 2007, էջ 126; Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Այվազյան Ն. Ա., Երևան, 2012, էջ 424; Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ. ընդ. խմբ. Հարությունյան Գ., Վաղարշյան Ա., Երևան, 2010, էջ 54 և այլն։

պահանջվում, քանի որ այն կարող է վերափոխվել միայն սահմանադրական փոփոխությունների կամ նոր սահմանադրության ընդունման միջոցով։

Այս առումով պետք է համաձայնվել Վ. Ե. Չիրկինի այն դիտարկման հետ, որ անցումային ժամանակաշրջանի պետության կառավարման համակարգը կրում է «հիբրիդային» բնույթ և ներառում է տարբեր ձևերին հատուկ բազմազան հատկանիշներ։[2]

Պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականին ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով,[3] ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին»,[4] «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին»[5] օրենքներով նույնպես ձևավորվեց և մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը գործում էր պետական կառավարման մի այնպիսի «հիբրիդային» համակարգ, որն իր մեջ ներառում էր ինչպես միայն խորհրդային (սովետական) կառավարմանը, այնպես էլ նախագահական և խորհրդարանական կառավարմանը բնորոշ հատկանիշներ։ Նախատեսվում էին, մասնավորապես, նախագահի և փոխնախագահի պաշտոններ (ինչը հատկանշական է նախագահական կառավարման ձևի համար) և վարչապետի պաշտոն (ինչը բնորոշ է կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերին)։[6] Ավելին, նախարարների խորհրդի (կառավարության) նախագահի պաշտոնի առկայության պայմաններում, «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, հենց Հանրապետության նախագահն էր ղեկավարում կառավարության գործունեությունը և նախագահում կառավարության նիստերին։

Վերջին տարիներին նույնպես բավականին հետաքրքրական զարգացումներ են տեղի ունենում նորանկախ պետությունների պետական կառավարման համակարգերում։ Այսպես, Ղրղզստանում սոցիալական սուր բախումների

---

[2] Чиркин В.Е. Основы сравнительного правоведения. М, 1997, էջ 17:
[3] Տե՛ս ՀՀ ԳԽՏ,1991/18:
[4] Տե՛ս ՀՀ ԳԽՏ, 1991/15:
[5] Տե՛ս ՀՀ ԳԽՏ, 1991/22:
[6] Մանրամասն տե՛ս Ստեփանյան Վ. Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում // Օրենք և իրականություն, 2003, N 16, էջ 1-2: Ստեփանյան Վ. Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն // Օրենք և իրականություն, 2003, N 19-20, էջ1-3:

արդյունքում կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարվեց խորհրդարանական համակարգի: Վրաստանում ներմուծվեց կառավարման այնպիսի մոդել, որը կրում է «հիբրիդային» բնույթ և դժվար է դասել ժամանակակից կառավարման որևէ հիմնական ձևի կամ տարատեսակի: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում անցում է կատարվում կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականի:

Ուստի կարելի է արձանագրել, որ հետսոցիալիստական պետությունների դեպքում, որտեղ դեռևս շարունակվում են պետական կառավարման առավել ընդունելի մոդելների փնտրտուքները, այս հիմնախնդիրների գիտական վերլուծության անհարժեշտությունը առավել արդիական է: Պետական կառավարման ձևի հետ կապված հիմնախնդիրների գիտական վերլուծությունը, պետական կառավարման տարբեր ձևերի դրական և բացասական հատկանիշների բացահայտումը ունի ոչ միայն տեսական, այլ նաև արդիական գործնական նշանակություն: Այդպիսի հետազոտությունների արդյունքում կարող են ձևակերպվել և ներկայացվել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ՝ ուղղված, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում առավել արդյունավետ մոդելի կայացմանը: Ճիշտ է, այդ մոդելի հիմնական տարրերն արդեն ամրագրված են 2015 թվականի փոփոխված Սահամանադրությունում, սակայն բազմաթիվ նրբերանգներ պետք է սահմանվեն ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերով, առաջին հերթին՝ օրենքներով: Նախատեսվում է իրականացնել լայնածավալ օրենսդրական փոփոխություններ՝ «ելնելով 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով պայմանավորված՝ Սահմանադրության նոր դրույթների ամբողջական կենսագործման, ընդունման ենթակա իրավական ակտերի շրջանակի հստակեցման, դրանց մշակման գործընթացի համակարգման անհրաժեշտությունից»:[7] Ակնհայտ է, որ այս խնդիրների շարքում առավել կարևորվում են սահմանադրական բարեփոխումների արդյունքում ներմուծված նոր կառավարման մոդելի օրենսդրական ապահովման հիմնախնդիրները:

[7] http://www.president.am/hy/decrees/item/2566/

Չնայած նրան, որ պետական կառավարման ձևի հիմնախնդիրների քննարկմանը գրականության մեջ ավանդաբար հատկացվել է մեծ ուշադրություն, գիտական հետազոտությունների տվյալ ոլորտում կան բանավեճերի տեղիք տվող բազմաթիվ հարցեր: Այդպիսի իրավիճակը բացատրվում է այն հանգամանքով, որ պետական կառավարման ձևերին բնորոշ է մեծ բազմազանությունը: Դրանք կազմավորվում են պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակույթային, կրոնական գործոնների համակարգերի ազդեցության արդյունքում:

Պետական կառավարման ձևի վրա ազդեցություն են գործում պատմական ավանդույթները (միապետությունը Մեծ Բրիտանիայում), ներքաղաքական պայքարի առանձնահատկությունները (կառավարման ձևի բազմակի վերափոխումները Աֆրիկայի մի շարք երկրներում), հասարակության մեջ իշխող կրոնական արժեքների համակարգը (աստվածապետությունը Իրանում):[8]

Տարաձայնություններ են առաջանում արդեն պետության ձև, պետական կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև և քաղաքական ռեժիմ հասկացությունների հարաբերակցության հարցի քննարկման ժամանակ:

Առավել տարածված է այն տեսակետը, ըստ որի՝ պետական կառավարման ձևը՝ պետական կառուցվածքի ձևի և քաղաքականական ռեժիմի հետ, պետության ձևի բաղադրատարրերից է:[9] Սակայն որոշ հետազոտողներ պետական կառավարման ձևը նույնականացնում են քաղաքական ռեժիմի հետ: Այսպես, Գ. Ն. Մանովի կարծիքով՝ «քաղաքական ռեժիմը» նույնական է պետության ձևի հետ, իսկ պետական կառավարման ձևը և պետական կառուցվածքի ձևը հանդիսանում են դրա բաղադրատարրերը:[10] Բ. Ա. Ստարոդուբսկին նույնպես գտնում է, որ առավել հաճախ քաղաքական ռեժիմը պետական կարգի հոմանիշն է:[11] Դժվար չէ նկատել, որ Բ. Ա. Ստարոդուբսկին քաղաքական ռեժիմ հասկացությունը նույնականացնում է նույնիսկ ավելի լայն հասկացության՝ պետական կարգի հետ, քան պետության ձևը՝ ներառյալ

[8] Տե՛ս, օրինակ, Конституционное право зарубежных стран, էջ 141:
[9] Տե՛ս Шаповал В.Н. Сравнительное конституционное право, էջ 126-127; Конституционное право зарубежных стран, էջ 142; Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, էջ 423-445 և այլն:
[10] Տե՛ս Манов Г.Н. О понятии форма государства // Учен. зап. Таджикского у-та, 1956. Т.3. Вып. 4, էջ 7:
[11] Տե՛ս Стародубский Б. А. О классификации форм буржуазных государств. Свердловск, 1989, էջ 84:

պետության ձևի երկու բաղադրատարրերը՝ պետական կառուցվածքի ձևն ու պետական կառավարման ձևը:

Այդպիսի տեսակետ է առաջադրվել նաև որոշ արևմտյան գիտնականների կողմից: Ելնելով այս դրույթից՝ տվյալ ուղղության կողմնակիցները տարանջատում են պետական ռեժիմի և դրան համապատասխան՝ պետական կառավարման երեք հիմնական մոդելներ՝ իշխանությունների միաձուլման ռեժիմ (բացարձակ միապետություն), իշխանությունների բաժանման ռեժիմ (նախագահական հանրապետություն) և իշխանությունների համագործակցության ռեժիմ (խորհրդարանական հանրապետություն): Սակայն շարադրված դասակարգումը, որը հիմնված է քաղաքական ռեժիմի հասկացության անհամաչափորեն լայն մեկնաբանության վրա, արժանացել է արդարացի քննադատության: Այսպես, ֆրանսիացի գիտնական Մ. Դյուվերժեն գտնում է, որ նշված դասակարգումը կարելի է դիտարկել որպես օժանդակ, քանի որ այդպիսով իրականացվում է միայն կառավարական կառույցների դասակարգում:[12]

Պետք է նկատել, որ քննարկվող մոտեցումն ունի նաև այլ խոցելի կողմեր: Այսպես, իշխանությունների միաձուլում առկա է ոչ միայն բացարձակ միապետություններում, այլ նաև կարծր ավտորիտար ռեժիմի որոշ նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգերում: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, միջինասիական այն հետխորհրդային երկրներին, որտեղ նախագահն ընտրվում է ցմահ և պաշտոնապես հռչակվում «առաջնորդ» կամ «ժողովրդի հայր», իսկ իշխանությունը փաստացի կրում է միաձույլ բնույթ:

Դժվար է նաև համաձայնվել այն կարծիքի հետ, որ նախագահական հանրապետություններում (օրինակ՝ ԱՄՆ-ում) առկա է միայն իշխանությունների բաժանում, և բացակայում է նրանց միջև համագործակցությունը: Մասնավորապես, ԱՄՆ-ում իշխանությունների համագործակցությունն ակնհայտ է կաբինետի ձևավորման կամ Դաշնային գերագույն դատարանի անդամների նշանակման գործընթացներում: Միևնույն ժամանակ, բազմաթիվ ժամանակակից կիսանախագահական և խորհրդարանական կառավարման երկրների

[12] Մանրամասն տե՛ս Duverger M. A. Institution politiques et droit constitutionnel. Paris, 1970, էջ 46; A New Political System Model: Semi-Presidential Government // European Journal of Political Research. Vol. 8, issue 2, 1980, էջ 165:

սահմանադրություններում հստակ ամրագրված է իշխանությունների բաժանման սկզբունքը: Այսպես, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքն ամրագրված է ինչպես կիսանախագահական կառավարման համակարգ սահմանած՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (ներառյալ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները) 5-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում խորհրդարանական կառավարման ձև ներմուծող Սահմանադրության 4-րդ հոդվածով: Նկատենք նաև, որ տվյալ դասակարգումից դուրս է մնում կիսանախագահական կառավարման ձևը, որն ըստ ներկայումս առավել ճանաչում ունեցող տեսակետի՝ կառավարման ինքնուրույն ձև է:

Իրավաբանական գրականության մեջ փորձ է արվել հիմնավորել պետական կառավարման ձևերի դասակարգման ևս մեկ տարբերակ: Որոշ հեղինակներ գտնում են, որ արդի պայմաններում պետությունների ավանդական դասակարգումը միապետությունների և հանրապետությունների դեռևս բավարար չէ, քանզի վերջիններս կարող են հիմնված լինել ինչպես մենիշխանության, այնպես էլ իշխանությունների բաժանման սկզբունքի վրա: Առաջարկվում է իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված իրավական պետությունների կառավարման ձևերը բաժանել երեք խմբի՝ դուալիստական, խորհրդարանական և խառը, որոնցից յուրաքանչյուրն ունի տարատեսակ դրսևորումներ՝ դուալիստական միապետություն, դուալիստական կամ նախագահական հանրապետություն, խորհրդարանական միապետություն կամ հանրապետություն, կիսանախագահական հանրապետություն:[13]

Կարծում ենք, որ այս դասակարգման նորույթը ոչ թե պետական կառավարման ձևերի, այլ քաղաքական ռեժիմների մեջ է, քանի որ մենիշխանությունն անխուսափելիորեն հանգեցնում է ավտորիտար քաղաքական ռեժիմի, իսկ իշխանությունների լավագույնս տարանջատումը, իշխանության տարբեր թևերի միջև

[13] Տե՛ս Калинович А. Формы правления в правовом государстве (теоретико-правовой аспект). Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Санкт-Петербург, 2008, էջ 14-15; Սարգսյան Մ., ՀՀ կառավարման ձևի բարեփոխման հրամայականը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համատեքստում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 67-68:

զսպումների և հակակշիռների արդյունավետ մեխանիզմների ամրագրումը հանգեցնում են ժողովրդավարական քաղաքական ռեժիմի։ Պետք է նաև արձանագրել, որ պետական կառավարման ձևերի ավանդական դասակարգումը չի սահմանափակվում միայն միապետական և հանրապետական ձևերի տարանջատմամբ, այլ նաև դրանցից յուրաքանչյուրն իր հերթին բաժանում է որոշակի տարատեսակների, որոնք, ըստ էության, նույնականորեն ներկայացվում են Ա. Է. Կալինովիչի կողմից։ Ուստի ներկայացվող «նորարական» դասակարգման տեսական և գործնական նշանակությունը կասկածելի է։

Գրականության մեջ լայն տարածում ունեն մի կողմից կոնկրետ պետության էության, բովանդակության ու գործառույթների և մյուս կողմից նույն պետության ձևի միջև պատճառահետևանքային կապի մասին տեսությունները։ Այդպիսի դետերմինիստական մոտեցում առաջադրել է դեռևս Լ. Գումպլովիչը, ով գտնում էր, որ պետության ձևը միշտ հանդես է գալիս որպես դրա էության և բովանդակության անմիջական արտահայտություն։[14] Ինչպիսին պետության էությունը և բովանդակությունն (գործառույթներն) են, վերջին հաշվով այդպիսին է նրա ձևը։ Տվյալ մոտեցման հետ չի կարելի համաձայնվել։ Նախ նշենք, որ ժողովրդավարական իրավական պետությունը կարող է ստանալ և՛ հանրապետական, և՛ միապետական կառավարման ձև։ Ճիշտ այդպես էլ, կարծր ավտորիտար համակարգը նույնպես կարող է ստանալ նշված պետական կառավարման երկու ձևերից ցանկացածը։

Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետության պատմական փորձը նույնպես ապացուցում է, որ պետության էության, բովանդակության և գործառույթների միջև ուղղակի կապը բացակայում է։

Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Հարությունյանը, հետխորհրդային երկրներում ամբողջատիրական համակարգից դեպի ժողովրդավարություն անցման նպատակը քաղաքացիական հասարակության ձևավորումն էր։[15] Սեփականաշնորհման միջոցով սեփականության վերաբաշխումը մասնավոր սեփականության առաջացման հնարավորություն ստեղծեց, որը քաղաքացիական հասարակության ձևավորման կարևոր նախապայմաններից է։ Սակայն

[14] Տե՛ս Гумплович Л. Общее учение о государстве. СПб, 1910, էջ 221։
[15] Տե՛ս Арутюнян А. Конституционализм: проблемы постсоветской реальности. М., 2013, էջ 89։

քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ էին ոչ միայն տնտեսական (սեփականության ձևերի բազմազանություն և տարբեր ձևերի հավասար իրավական պաշտպանություն), այլև քաղաքական հիմքեր (առաջին հերթին՝ բազմակուսակցական քաղաքական համակարգ)։ Հատկանշական է, որ դեռևս 1990-1991 թվականներին, երբ մեր երկրում կառավարման ձևի նշանակալի փոփոխություններ չէին կատարվել, և հիմնականում պահպանված էր խորհրդային կառավարման համակարգը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց մի շարք օրենքներ, որոնք ուղղակիորեն հակասում էին խորհրդային կարգերի էությանը, բովանդակությանը և գործառույթներին և, վերջին հաշվով, ուղղված էին քաղաքացիական հասարակություն ձևավորելուն։ Այսպես, «Սեփականության մասին» օրենքով ամրագրվեց մասնավոր սեփականության իրավունքը և ապահովվեց սեփականության տարբեր ձևերի հավասար իրավական պաշտպանության սկզբունքը,[16] «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքով վերացվեց Կոմունիստական կուսակցության դերը՝ որպես «հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժի», և դրվեցին բազմակուսակցական քաղաքական համակարգի օրենսդրական հիմքերը։[17]

Որոշակի տարակարծություններ կան նաև պետությունների և, մասնավորապես, պետական կառավարման ձևերի հստակ դասակարգման հնարավորությունների և այդպիսի դասակարգումների տեսական և գիտական ներուժի վերաբերյալ։ Այսպես, Յ. Յոհարիի կարծիքով՝ թերևս չկա միասնական իրավական կամ այլ սկզբունք կամ չափանիշ, որի հիման վրա հնարավոր կլինի կատարել պետությունների գոհացուցիչ դասակարգում։ Ուստի պետությունների բարդ և յուրահատուկ բնույթի պատճառով, դրանց տարբերակման և դասակարգման ցանկացած փորձ գիտական տեսակետից կլինի ապարդյուն և կտա ոչ նշանակալի գիտական արժեք և գործնական արդյունքներ։[18] Այս տեսակետը նույնպես քննադատության է արժանացել։ Մասնավորապես, Ա. Բեբլերն արդարացիորեն արձանագրում է, որ համեմատական քաղաքագիտության ոլորտում առանց

[16] ՀՀ ԳԽՏ, 1990/20
[17] ՀՀ ԳԽՏ, 1991/4
[18] Տե՛ս Johari J.C. Principles of Modern Political Science. New Deli. Sterling Publ. Private Ltd., 1989, էջ 407:

դասակարգումների դժվար թե կարելի լինի ակնկալել հետագա զարգացում։[19] Նկատենք, որ իրավագիտության, մասնավորապես՝ պետության և իրավունքի ընդհանուր տեսության ու սահմանադրական իրավունքի տեսության ոլորտում պետությունների և, առաջին հերթին, պետության կառավարման ձևերի տարբերակումն ու դասակարգումն ունեն ավելի մեծ տեսական և գործնական նշանակություն։

Այդպիսի տարբերակումն ու դասակարգումը հնարավորություն են ընձեռնում իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ բացահայտել պետական կառավարման տարբեր ձևերի դրական և բացասական հատկանիշները և արդյունքում մշակել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ՝ ուղղված տվյալ երկրի համար առավել ընդունելի և արդյունավետ կառավարման ձևի և կոնկրետ մոդելի սահմանադրական և օրենսդրական ամրագրմանը։

Բացի դրանից՝ կառավարման ձևի պարզումը կարևոր միջոց է համապատասխան նորմերի՝ ոչ միայն սահմանադրական դոկտրինայի շրջանակներում, այլ նաև սահմանադրական դատարանի կողմից մեկնաբանման համար։ Դրա ցայտուն օրինակներն են Լիտվայի Սահմանադրական դատարանի 1998 թվականի հունվարի 10-ի և 1998 ապրիլի 21-ի որոշումները, որոնցում պետական մարմինների լիազորությունների կոնկրետ բովանդակությունը մեկնաբանվեց խորհրդարանական կառավարման ձևի լույսի ներքո։[20]

Միևնույն ժամանակ պետք է համաձայնվել Յ. Յոհարիի այն դիտարկման հետ, որ չկա այնպիսի իրավական սկզբունք կամ չափանիշ, որի հիման վրա կարելի կլինի կատարել պետությունների ձևերի (այդ թվում՝ պետական կառավարման ձևերի) հիմնավոր և անվիճելի դասակարգում։ Հենց այդ հանգամանքով է բացատրվում գիտական հետազոտությունների քննարկվող ոլորտում բազմաթիվ տարաձայնությունների և չհամընկնող դասակարգումների առկայությունը։

Թերևս, առավել լայն ճանաչում է գտել պետական կառավարման ձևերի տարանջատումը երկու հիմնական խմբերի՝ միապետություն և հանրապետություն։ Դրանցից յուրաքանչյուրն ունի իր տարատեսակները։

---

[19] Bebler A. Introduction// Bebler A. and Seroka J. (eds.). Contemporary Political Systems. Classifications and Typologies. Boulder and London: Lynne Rienner Publishers, 1990, էջ 6։

[20] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 28։

Միապետության հիմնական հատկանիշն այն է, որ պետության գլուխը՝ միապետը (կայսրը, թագավորը, ցարը, սուլթանը և այլն) ունի հատուկ իրավական կարգավիճակ. նրա լիազորությունները կրում են առաջնային՝ պետության մյուս բոլոր իշխանություններից անկախ բնույթ, նա իր կարգավիճակը ձեռք է բերում, որպես կանոն, ժառանգաբար և պահպանում ցմահ:[21]

Հանրապետությունն այնպիսի կառավարման ձև է, որի պայմաններում բարձրագույն պետական մարմինները (նախագահը, խորհրդարանը, կառավարությունը) ընտրովի և փոփոխելի են. ընդսմին միայն խորհրդարանն է առանց բացառության բոլոր հանրապետական կառավարման մոդելներում ընտրվում անմիջապես բնակչության կողմից:[22]

Միապետական կառավարման ձևի դասակարգման հարցում իրավաբանական գրականության մեջ էական տարաձայնություններ չկան: Բոլոր հեղինակները համակարծիք են, որ կառավարման այդ ձևի հիմնական տարատեսակներն են բացարձակ և սահմանափակ միապետությունները: Վերջիններս իրենց հերթին տարանջատվում են դուալիստական և խորհրդարանական (սահմանադրական)[23] միապետությունների:

Բացարձակ միապետություններում միապետն ունի անսահմանափակ իշխանություն օրենսդիր, գործադիր և դատական ոլորտներում: Օրենքները հրապարակվում են միապետի անունից, նա է ձևավորում և նրան է ենթարկվում ամբողջ պետական մեխանիզմը: Բացարձակ միապետություններում գոյություն չունի որևէ ընտրովի մարմին: Կառավարման այս ձևը բնորոշ էր ավատատիրական հասարակության զարգացման վերջին փուլին: Այսօր այն անախրոնիզմ է և պահպանվել է արևելքի 6 երկրներում (Սաուդյան Արաբիա, Օման, Բահրեյն և այլն):

Դուալիստական միապետությունը բնութագրվում է խորհրդարանի և միապետի միջև իշխանության բաժանմամբ: Սակայն այդպիսի բաժանման ժամանակ

[21] Տե՛ս, օրինակ, Конституционное право зарубежных стран, էջ 143:
[22] Տե՛ս նույն տեղում:
[23] Իրավաբանական գրականության մեջ օգտագործվում են «խորհրդարանական միապետություն» և «սահմանադրական միապետություն» հասկացությունները: Մեր համոզմամբ՝ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է, ըստ էության, միևնույն կառավարման ձևին: Պարզապես առաջին դեպքում շեշտվում է միապետի իշխանությունը սահմանափակող մարմինը, իսկ երկրորդ դեպքում՝ այն ակտը (գրված կամ չգրված սահմանադրությունը), որով այդ իշխանությունը սահմանափակվում է:

միապետի իշխանությունն ակնհայտորեն գերակշռում է: Միապետի լիազորությունները որոշակիորեն սահմանափակված են միայն օրենսդրական ոլորտում: Սակայն և այս ոլորտում խորհրդարանի կողմից ընդունված որևէ օրինագիծ չի կարող ուժի մեջ մտնել առանց միապետի համաձայնության, քանի որ վերջինս օժտված է բացարձակ վետոյի իրավունքով: Գործադիր իշխանությունն ամբողջովին պատկանում է միապետին և նրա կողմից ձևավորվող կառավարությանը, որը խորհրդարանի առջև պատասխանատվություն չի կրում: Միապետն օժտված է նաև խորհրդարանն արձակելու, արտակարգ դեկրետներ հրապարակելու և արտակարգ դրություն հայտարարելու լիազորություններով: Նա հանդիսանում է նաև բանակի գլխավոր հրամանատարը:

Կառավարման այս ձևը բավականին տարածված էր 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներում (օրինակ՝ Գերմանիայի միավորումից հետո՝ 1871 թվականի սահմանադրությամբ): Այն դեռևս պահպանվում է Մերձավոր Արևելքի մի քանի երկրներում (Հորդանան, Մարոկկո):

Խորհրդարանական (սահմանադրական) միապետության համար առավել հատկանշական է այն, որ միապետը պետական կառավարման իրական լիազորություններով օժտված չէ: Նրա լիազորությունները հիմնականում կրում են ներկայացուցչական բնույթ: Բացի դրանից՝ նա իր ստորագրությամբ հաստատում է կարևորագույն պետական փաստաթղթերը: Սակայն միապետի ստորագրությունը կրկնաստորագրման (կոնտրասիգնացիայի) կարիք ունի. միապետի կողմից ստորագրման ենթակա փաստաթղթերը պետք է նախապես ստորագրվեն վարչապետի կամ պատասխանատու նախարարի կողմից: Միապետն ստորագրում է նաև օրենսդրական ակտերը, սակայն պառլամենտի կողմից ընդունված ակտերի նկատմամբ վետոյի իրավունք կամ չունի, կամ այդ իրավունքն ավանդապես չի կիրառվում (այսպես կոչված՝ «քնած» լիազորություն):

Ժամանակակից աշխարհում կառավարման քննարկվող ձևը բավականին մեծ տարածում ունի: Այսօր այն առկա է բազմաթիվ ժողովրդավարական պետություններում (Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Ճապոնիա և այլն): Գործնականում խորհրդարանական տարբեր միապետություններում միապետների լիազորությունների ծավալը միատեսակ չէ: Այսպես, Շվեդիայում միապետը

գործնականում զրկված է պետական գործունեությանը մասնակցելու հնարավորությունից և օժտված է միայն արտաքին ներկայացուցչական լիազորություններով, մինչդեռ Իսպանիայի 1978 թվականի սահմանադրությամբ՝ միապետն օժտված է ծավալուն լիազորություններով։

Պետք է նկատել, որ խորհրդարանական միապետությունն իր բազմաթիվ էական հատկանիշներով նման է խորհրդարանական հանրապետությանը։ Այդ հանգամանքը նկատել էր դեռևս Մ. Մ. Կովալևսկին։ Նա գտնում էր, որ անգլիական միապետության քաղաքական համակարգն ավելի մեծ ընդհանրություններ ունի ֆրանսիական հանրապետական կարգերի հետ, քան Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների ժողովրդաիշխանության համակարգերը։[24] Այսօր խորհրդարանական միապետության և խորհրդարանական հանրապետության էական ընդհանրությունների մասին դրույթը լայն ճանաչում է գտել գրականության մեջ և հանգեցրել է նոր՝ «խորհրդարանային կառավարման ձև» հասկացության առաջացմանը, որը ներառում է խորհրդարանական հանրապետությունը և խորհրդարանական միապետությունը։[25]

Թերևս, խորհրդարանական միապետության և խորհրդարանական հանրապետության միակ էական տարբերությունն այն է, որ առաջինի դեպքում պետության գլուխն իշխում է գահաժառանգության կարգով որոշված սեփական իրավունքով և ցմահ, իսկ նախագահին իր մանդատը ձեռք է բերում ընտրության արդյունքում և սահմանադրությամբ սահմանված ժամկետով։ Առանձին հեղինակներ փորձում են թերագնահատել այս տարբերությունը՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ պատմականորեն եղել են դեպքեր, երբ միապետները ընտրվել են (18-19 դարերում Լեհաստան և հին Գերմանիա)։ Սակայն դրանք անհաջող բացառություններ էին, որոնք միայն հաստատում են ընդհանուր կանոնը։ Միապետի ընտրությունները կարելի է որպես բնականոն երևույթ գնահատել միայն դինաստիաների փոփոխության ժամանակաշրջանների պարագայում։

Կարծում ենք, որ խորհրդարանական միապետության և խորհրդարանական հանրապետության՝ էական հատկանիշներով նմանության վերաբերյալ դրույթը

[24] Տե՛ս Ковалевский М.М. Избранные труды в 2-х ч. М., 2010, Ч 2, էջ 19։
[25] Տե՛ս, օրինակ, Шаповал В. Н. Сравнительное конституционное право, էջ 132։

որոշակի նշանակություն ունի մեր թեմայի առանձին հետազոտական խնդիրների լուծման համար:

Մինչև նախորդ դարի կեսերը գրականության մեջ տարանջատվում էին հանրապետական կառավարման երկու հիմնական ձևեր՝ նախագահական հանրապետություն և խորհրդարանական հանրապետություն: «Կիսանախագահական հանրապետություն» հասկացությունը, Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետության կառավարման առանձնահատկությունների վերլուծության արդյունքում, առաջին անգամ շրջանառության մեջ է դրել ֆրանսիացի սահմանադրագետ Մ. Դյուվերժեն:[26]

Ներկայումս հանրապետական կառավարման տարանջատումը երեք ձևերի՝ նախագահական հանրապետություն, կիսանախագահական (կիսախորհրդարանական, խառը) հանրապետություն և խորհրդարանական հանրապետություն, լայն ճանաչում է գտել: Միայն առանձին հեղինակներ կիսանախագահական կառավարումը չեն դիտարկում որպես պետական կառավարման առանձին տարատեսակ:[27]

Քննարկվող հարցի շուրջ սեփական դիրքորոշում ձևակերպելու և հիմնավորելու համար նախ հակիրճ ներկայացնենք հանրապետական կառավարման երեք տարատեսակների առավել բնորոշ հատկանիշները:

Նախագահական հանրապետություններում իշխանությունների տարանջատումը կրում է կարծր բնույթ՝ լիովին համապատասխանելով իշխանությունների բաժանման Շ. Լ. Մոնտեսքյոյի տեսությանը: Օրենսդիր իշխանությունը պատկանում է խորհրդարանին, բարձրագույն գործադիր իշխանությունը՝ նախագահին, դատական իշխանությունն իրականացվում է դատարանների ծավալուն համակարգի միջոցով՝ ներառյալ բարձրագույն դատական ատյանը:[28]

---

[26] Տե՛ս Duverger M.A. Institution politiques et droit constitutionnel. Paris., 1970, էջ 46; A New Political System Model: Semi-Presidential Government // European Journal of Political Research. Vol. 8, issue 2, 1980, էջ 165-168; Dominique Chagnollaud de Sabouret, Droit Constitutionnel Contemporain, Dalloz, Paris, 2015, էջ 148:

[27] Տե՛ս, օրինակ, Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 80-81:

[28] Տե՛ս Dominique Chagnollaud de Sabouret, Droit Constitutionnel Contemporain, Dalloz, Paris, 2015, էջ 120; Philippe Ardant, Bertrand Mathieu, Droit Constitutionnel et Institutions Politiques, Lextenso editions, LGDJ, Issy-les-Moulineaux, 2015, էջ 52-53:

Պետական իշխանության կազմակերպման և իրականացման համակարգում նախագահն ունի գերակշիռ դեր: Բացի հանրապետական կառավարման այլ ձևերում պետության գլխին բնորոշ լիազորություններից՝ նրան վերապահված են ծավալուն լիազորություններ գործադիր իշխանության համակարգի կազմակերպման, կազմավորման և իրականացման ոլորտներում: Որպես բարձրագույն գործադիր իշխանության ղեկավար՝ նա կազմավորում է կաբինետը և նշանակում գործադիր իշխանության համակարգի բազմաթիվ այլ պաշտոնյաների: Կաբինետի անդամները քաղաքական պատասխանատվություն են կրում միայն համընդհանուր ընտրությունների միջոցով պաշտոն զբաղեցնող նախագահի առջև:

Կիսանախագահական հանրապետություններում, համաձայն ընդհանուր ճանաչում ստացած տեսակետի, կառավարման համակարգն իր մեջ ներառում է ինչպես նախագահական, այնպես էլ խորհրդարանական կառավարմանը բնորոշ տարրեր:

Նախագահն իր պաշտոնը զբաղեցնում է համընդհանուր ընտրությունների միջոցով և որպես պետության գլուխ՝ օժտված է լայն լիազորություններով: Սակայն բարձրագույն գործադիր իշխանությունն այստեղ պատկանում է ոչ թե նախագահին, այլ վարչապետի ղեկավարությամբ գործող կառավարությանը: Նախագահն էական դեր ունի կառավարության կազմավորման գործում, սակայն ստիպված է այդ գործընթացում համագործակցել խորհրդարանական մեծամասնության հետ և հաշվի առնել այդ մեծամասնության կարծիքը: Կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև, և խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու կամ, այսպես կոչված, պարսավանքի բանաձև ընդունելու դեպքում (Ֆրանսիա) կառավարությունն իր հրաժարականն է ներկայացնում նախագահին:

Թերևս, նախագահական և կիսանախագահական կառավարման ձևերի սկզբունքային և էական տարբերություններն ակնհայտ են դառնում այն դեպքերում, երբ խորհրդարանական մեծամասնությունն ընդդիմադիր է նախագահին: Այսպես, ֆրանսիական Հինգերորդ Հանրապետության փորձը ցույց է տալիս, որ այդ պայմաններում նախագահն ստիպված է լինում վարչապետի պաշտոնում առաջադրել իրեն ընդդիմադիր քաղաքական գործչի (1957, 1986, 1993 թվականներ) և

հայտնվում է «առանց բանակի գեներալի»[29] կամ որ մեր կարծիքով ավելի ճիշտ կլինի ասել, «անգլիական թագուհու» դերում:

Խորհրդարանական հանրապետություններում իշխանության կենտրոնում խորհրդարանն է: Միայն խորհրդարանն է ձևավորվում համընդհանուր ընտրությունների միջոցով: Պետական իշխանության բոլոր մյուս կառույցները ձևավորվում են խորհրդարանի կողմից կամ խորհրդարանի ակտիվ մասնակցությամբ: Բացի օրենսդրական գործառույթից՝ խորհրդարանն ունի նաև կազմակերպչական և վերահսկողական ծավալուն գործառույթներ:

Ամբողջ գործադիր իշխանությունը պատկանում է կառավարությանը, որը ձևավորվում է խորհրդարանի կողմից և միայն խորհրդարանի առջև է կրում քաղաքական պատասխանատվություն: Միևնույն ժամանակ, ունենալով խորհրդարանի մեծամասնության օժանդակությունը՝ կառավարությունը հնարավորություն ունի էականորեն ներազդել խորհրդարանի գործունեության, առաջին հերթին՝ օրենսդրական գործունեության վրա:

Խորհրդարանական հանրապետություններում նախագահը, որոշ դեպքերում նույնիսկ ձևականորեն օժտված լինելով լայնածավալ լիազորություններով, որպես կանոն, ինքնուրույն իրականացնում է միայն ներկայացուցչական գործառույթ: Նախագահն ստորագրում է կարևորագույն պետական փաստաթղթերը՝ ներառյալ օրենքները: Սակայն խորհրդարանական միապետության նման՝ պետության գլխի ստորագրությունը կրկնաստորագրման (կոնտրասիգնացիայի) կարիք ունի: Նախագահի կողմից ստորագրման ենթակա փաստաթղթերը պետք է նախապես ստորագրվեն վարչապետի կամ պատասխանատու նախարարի կողմից:

Այսպիսով, հանրապետական կառավարման տարբեր ձևերի կարևորագույն հատկանիշների նույնիսկ հակիրճ վերլուծությունը, կարծում ենք, բավարար հիմքեր է տալիս պնդելու, որ կիսանախագահական կառավարման համակարգի և հանրապետական կառավարման մյուս երկու տարատեսակների միջև կան էական տարբերություններ, և կիսանախագահական կառավարման համակարգը պետք է տարանջատվի՝ որպես հանրապետական կառավարման ինքնուրույն տարատեսակ:

[29] Տե՛ս Сахаров Н.А. Институт президентства в современном мире. М., 1994, էջ 27:

Հատկանշական է, որ Վ. Ս. Ներսեսյանցը, հանրապետական կառավարման ձևը տարանջատելով երկու հիմնական տարատեսակների, միևնույն ժամանակ առանձնացնում է նախագահական հանրապետության երեք մոդել՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և Ռուսաստանի Դաշնության։[30]

Իհարկե, պետական կառավարման առանձին ձևերի շրջանակներում յուրաքանչյուր պետության կառավարման մոդելն ունի իր առանձնահատկությունները։ Այսպես, խորհրդարանական միապետության շրջանակներում կարելի է առանձնացնել տարբեր մոդելներ՝ Մեծ Բրիտանիայի, Բելգիայի, Իսպանիայի, Շվեդիայի և այլ մոդելներ. նախագահական կառավարման շրջանակներում՝ ԱՄՆ-ի, լատինաամերիկյան և աֆրիկական տարբեր պետությունների մոդելներ և այլն։ Սակայն միևնույն կառավարման ձևի առանձին մոդելների միջև տարբերություններն էական բնույթ չեն կրում և վերաբերում են միայն բարձրագույն պետական մարմինների միջև փոխհարաբերություններին, նրանց միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմներին։

Մինչդեռ նախագահական հանրապետության ԱՄՆ-ի մոդելի և այսպես կոչված՝ Ֆրանսիայի մոդելի միջև տարբերությունները չեն սահմանափակվում վերը նշվածով։ Դրանք հիմնված են իշխանության տարանջատման տարբեր հայեցակարգերի վրա. ԱՄՆ-ի «մոդելը»՝ Շ. Մոնտեսքյոյի, իսկ Ֆրանսիայի «մոդելը»՝ Ջ. Լոքի։ Այդ երկու մոդելները նախևառաջ տարբերվում են բարձրագույն գործադիր իշխանության ձևավորման կարգով և կարգավիճակով։ ԱՄՆ-ում բարձրագույն գործադիր իշխանության կրողը՝ նախագահը, ունի առաջնային մանդատ և քաղաքական պատասխանատվություն չի կրում խորհրդարանի առջև։ Ֆրանսիայում գործադիր իշխանության բարձրագույն մարմինը՝ կառավարությունը, ձևավորվում է նախագահի և խորհրդարանի փոխգործակցության արդյունքում (չունի առաջնային մանդատ) և քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև։ Արդյունքում այդ երկու «մոդելներում» գործում են բարձրագույն պետական իշխանության մարմինների տարբեր համակարգեր։

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի և Ռուսաստանի Դաշնության կառավարման «մոդելների» հարաբերակցությանը, ապա նախ նշենք, որ կարելի է առանձնացնել ոչ

[30] Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս., նույն տեղում։

միայն այդ երկու, այլ նաև Հայաստանի Հանրապետության, Ուկրաինայի և կիսանախագահական կառավարման համակարգ որդեգրած հետխորհրդային ցանկացած այլ պետություններից յուրաքանչյուրի ինքնուրույն «մոդելները»: Սակայն հետխորհրդային բոլոր այդ հանրապետություններն ակնհայտորեն ընդօրինակել են Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետության կիսանախագահական համակարգը: Հետխորհրդային տարբեր «մոդելները» ֆրանսիականից տարբերվում են նրանով, որ դրանցում ամրագրված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմը բալանսավորված չէ:[31]

Հիմնվելով վերը շարադրվածի վրա՝ կարծում ենք, որ առավել հիմնավորված և համոզիչ է հանրապետական կառավարման ձևի երեք տարատեսակների առանձնացումը՝ նախագահական հանրապետություն, կիսանախագահական հանրապետություն, խորհրդարանական հանրապետություն:

Այստեղ պետք է արձանագրել մեր հետազոտության համար կարևոր նշանակություն ունեցող երկու հանգամանք:

Մ.Վ. Բագլայը, տարբերակելով վերը նշված երեք կառավարման ձևերը, միևնույն ժամանակ առանձնացնում է խորհրդարանական-նախագահական հանրապետությունը, որն իր էական հատկանիշներով մոտ է կիսանախագահականին, սակայն վերջինից տարբերվում է խորհրդարանի ավելի մեծ դերակատարությամբ, մասնավորապես՝ կառավարության ձևավորման ընթացքում: Ինչպես կհիմնավորվի սույն ատենախոսության երկրորդ գլխում, Հայաստանի Հանրապետությունում կիրառվել է երեք կառավարման մոդել՝ հիբրիդային (1990-1995 թթ.), կիսանախագահական (1995-2005 թթ.) և խորհրդարանական-նախագահական (2005 թվականից մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները՝ պետական կառավարման համակարգի ոլորտի հարաբերությունները կարգավորող նորմերն ամբողջողվին ուժի մեջ մտնելը):

Պետք է հաշվի առնել ևս մեկ գործոն, որն իր արտահայտությունն է գտնում երիտասարդ ժողովրդավարության երկրների մեծամասնությունում՝ անկախ պետական կառավարման ձևից: Բանն այն է, որ երիտասարդ ժողովրդավարության

[31] Մանրամասն տե՛ս. Stephen Holmes, Superpresidentalism and its problems // EECR. Vol 2.N4.Fall 1993/Vol 3. N1., Winter. 1994, էջ 123-126; Арутюнян А. Институт Президента Республики Армения. Ереван, 1996, էջ 25-33:

երկրների բնակչության մենթալիտետը մշտապես անձնավորում է ուժեղ իշխանությունը և նույնականացնում է միանձնյա իշխանության հետ: Դրա արդյունքում նախագահի իրավասությունը շատ հաճախ հարմարեցվում է այդ պաշտոնի կոնկրետ թեկնածուին:[32] Դրա հետևանքով առաջանում են տարբեր կառավարման մոդելներ, որոնք հաճախ շատ դժվար է դասել կառավարման ձևի այս կամ այն տարատեսակում:

Հանրապետական կառավարման հատուկ տարատեսակ է աստվածապետությունը (Իրանի Իսլամական Հանրապետություն, Վատիկան): Այսպես, Իրանում իրավաբանորեն ամրագրված է հոգևորականների ուղղակի մասնակցությունը ոչ միայն քաղաքական կյանքին, այլև պետական կառավարման գործընթացին: Այդ երկրի 1978 թվականի սահմանադրությամբ նախագահի պաշտոնի հետ միաժամանակ նախատեսված է ֆակիհի՝ ժողովրդի առաջնորդի պաշտոնը, որն զբաղեցնում է բարձրագույն հոգևոր պետերից մեկը: Նրա որոշումները պարտադիր են աշխարհիկ իշխանության համար և վճռորոշ ազդեցություն են գործում պետական քաղաքականության վրա:

Բացի վերը քննարկված պետական կառավարման ձևերից և դրանց տարատեսակներից՝ արդի ժամանակաշրջանում կան երկրներ, որոնց կառավարման մոդելներն այնքան յուրահատուկ են, որ դժվար է դասել կառավարման այս կամ այն ձևում կամ ենթատեսակում: Այսպես, Շվեյցարիայում պետության գլխի և գործադիր իշխանության գործառույթներն իրականացնում է մեկ կոլեգիալ մարմին՝ դաշնային կառավարությունը (Դաշնային խորհուրդ): Կառավարությունը կազմված է յոթ դաշնային խորհրդականներից, որոնք նշանակվում են դաշնային խորհրդարանի կողմից: Սակայն կառավարությունը խորհրդարանի առջև քաղաքական պատասխանատվություն չի կրում: Դաշնային խորհուրդն իր կազմից մեկ տարի ժամկետով ընտրում է դաշնության նախագահ, որն ունի զուտ ներկայացուցչական լիազորություններ և համատեղում է նախագահի և համապատասխան դեպարտամենտի ղեկավարի (նախարարի) պաշտոնները: Սան-Մարինոյում պետության գլխի գործառույթները իրականացնում են երկու կապիտան-ռեգենտներ,

[32] Մանրամասն տե՛ս Jon Elster, Bargaining over the Presidency. // EECR.Vol 2.N4. Fall 1993 / Vol 3, N1. Winter, 1994, էջ 95-98:

որոնց վեց ամիս ժամկետով ընտրում է օրենսդիր մարմինը: Կապիտան-ռեգենտները իրենց լիազորություններն իրականացնում են կոլեգիալության սկզբունքով. նրանց որոշումները պետք է փոխհամաձայնեցվեն:

Յուրահատուկ են նաև կառավարման ձևերը նախկին սոցիալիստական ճամբարի երկրներում (Չինաստան, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Կուբա), ինչպես նաև Անդորրայում:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ ժամանակակից աշխարհում ժողովրդավարական իրավական պետությանն առավել բնորոշ կառավարման ձևերն են նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական հանրապետությունները, ինչպես նաև խորհրդարանական միապետությունը: Դրանցից որևէ մեկը չունի էական առավելություն մյուսների նկատմամբ. յուրաքանչյուրն օժտված է կոնկրետ պայմաններում դրական և բացասական հատկանիշներով: Ուստի հետագա սահմանադրական զարգացումների համատեքստում պետք է հաշվի առնել, որ նախընտրելի է այն կառավարման ձևը, տարատեսակը կամ կոնկրետ մոդելը, որն առավելագույն չափով համապատասխանում է պետության գոյատևման ներքին (քաղաքացիական հասարակության և քաղաքական համակարգի զարգացվածության աստիճանը) և արտաքին (այլ պետությունների հետ հարաբերությունների բնույթն ու կոնկրետ վիճակը) պայմաններին: Այս հանգամանքները կարևոր է հաշվի առնել հետագա սահմանադրական զարգացումների համատեքստում:

1.2. Պետական կառավարման արդի հիմնական ձևերը. արժանիքներ և թերություններ

Ժամանակակից աշխարհի կառավարման հանրապետական երեք հիմնական ձևերի՝ նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական, հարաբերակցության հարցը սուր բանավեճերի տեղիք է տալիս: Այդ հիմնահարցի տեսական վերլուծություններն առավել արդիական են հետսոցիալիստական, մասնավորապես՝ հետխորհրդային հանրապետություններում: Տարակարծությունները վերաբերում են կառավարման յուրաքանչյուր ձևի դրական և բացասական հատկանիշներին:

Պետք է նկատել, որ հեղինակների մեծամասնությունն առավելությունը տալիս են խորհրդարանական կառավարման ձևին՝ համարելով դա քաղաքական իշխանության կազմակերպման ավելի բարձր տիպ, քան նախագահականն ու կիսանախագահականը: Այս տեսակետի կողմնակիցները նշում են խորհրդարանական կառավարման ձևի հետևյալ առավելությունները՝ կառավարության կողմից որոշումների ընդունումը խորհրդարանական մեծամասնության հիման վրա. բազմակուսակցականության պայմաններում կառավարելու ավելի բարձր ունակությունը. գործադիր իշխանությանը հեռացնելու ավելի պարզ մեխանիզմների առկայության շնորհիվ՝ դրա ավելի մեծ հակվածությունը՝ պահպանելու սահմանադրականության պահանջները. ռազմական հեղաշրջումների սահմանափակ հնարավորությունները. գործադիր իշխանության հակվածությունը՝ ապահովելու քաղաքացիական հասարակության աջակցությունը: Ըստ այդ տեսակետի՝ խորհրդարանական համակարգի կարևորագույն հատկանիշներից է նաև այն, որ այդ համակարգն ավելի բաց է և ի վիճակի է ավելի ճկունորեն արտահայտել ընտրողների փոփոխվող տրամադրությունները և հետևաբար՝ լուծել առաջացող բախումները: Նշվում է նաև, որ խորհրդարանական պետություններում կառավարության վիճակն ավելի կայուն է, քան դուալիստականներում, որտեղ այն կախված է պետության գլխի քմահաճույքից: Ուստի առողջ պառլամենտարիզմը պետական իշխանության բոլոր գոյություն ունեցող ձևերից առավել կայունն է:[33] Խորհրդարանական պետությունը համարվում է նաև քաղաքական առումով սահմանադրականության պահանջներին ավելի համապատասխանող: Մի շարք հեղինակներ ուղղակիորեն էին նշում այդ առավելությունները, իսկ այլ հեղինակների աշխատություններից կարելի է հանգել այդ եզրակացությանը:[34]

Նախագահական և կիսանախագահական հանրապետություններում այդպիսի հատկանիշների բացակայությունը գնահատվում է որպես դրանց թերություն: Հաճախ այդ կարծիքը հիմնավորելու համար հղում է կատարվում արևմտյան դրական

[33] Տե՛ս Гессен В. М. Основы конституционного права. Пг., 1917, էջ 431:

[34] Котляровский С.А. Конституционное государство. Опыт политико-морфологического обзора. СПб, 1907, էջ 208; Հարությունյան Գ. Գ., Սահմանադրական մշտադիտարկում, Երևան, 2016, էջ 62-63:

խորհրդարանական փորձի և Լատինական Ամերիկայի պետությունների անհաջող նախագահական փորձի վրա։[35]

Կարծում ենք, որ այդպիսի մոտեցումը նախ խոցելի է մեթոդաբանական տեսանկյունից։ Նույն հաջողությամբ կարելի է շեշտել կառավարման նախագահական մոդելի առավելությունները (իշխանությունների երեք թևերի հստակ տարանջատում, քաղաքական կայունության պահպանման ավելի բարձր ներուժ) և կիսանախագահական կառավարման առավելությունները (ավելի բարձր կայունության աստիճան, մանավանդ՝ անցումային ժամանակահատվածում, ավելի բարձր արդյունավետություն՝ պառլամենտական հստակ մեծամասնության բացակայության պայմաններում, ինչը բնութագրական է անցումային փուլում գտնվող պետությունների բացարձակ մեծամասնության համար) և խորհրդարանական կառավարման պարագայում դրանց բացակայությունը գնահատել որպես վերջինիս ակնհայտ թերություններ։ Խոցելի են նաև կոնկրետ հաջողված կամ անհաջող օրինակների հիման վրա կառավարման այս կամ այն մոդելի առավելությունների հիմնավորման փորձերը։ Այսպես, կարելի է հղում կատարել նացիստական Գերմանիայի և հետպատերազմյան Ֆրանսիայի, Իտալիայի և մի շարք այլ պետությունների փորձին, որտեղ խորհրդարանական կառավարման մոդելները հանգեցրեցին կամ ավտորիտար քաղաքական ռեժիմի հաստատման (Գերմանիա), կամ մշտական կառավարական և խորհրդարանական ճգնաժամերի։

Ուստի հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ հիմնավորվում են նաև տրամագծորեն հակադիր տեսակետներ։ Այսպես, Վ. Դ. Զորկինը գտնում է, որ Ռուսաստանի համար առավել գերադասելի է նախագահական հանրապետությունը, քանի որ այն բնութագրվում է կայունությամբ և աչքի է ընկնում ճկունությամբ, տարբեր իրավիճակների և քաղաքական ուժերի իրական դասավորմանը հարմարվելու ունակությամբ։[36] Մանրամասնորեն վերլուծելով տարբեր կառավարման մոդելների առանձնահատկությունները՝ Ռուսաստանի

[35] Մանրամասն տե՛ս Медушевский А. Н. Сравнительное конституционное право и политические институты. М., 2002, էջ 204-205:

[36] Տե՛ս Зорькин В.Д. О президенте в конституционном строе РФ // Конституционный вестник, 1990, N 2, էջ 50:

Դաշնության համար նախագահական կառավարման ձևի նպատակահարմարության մասին կարծիք է հայտնում նաև Մ. Ա. Կրասնովը:[37]

Գիտական գնահատականների օբյեկտիվության պահանջից ելնելով՝ առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել այս համակարգերից յուրաքանչյուրի էական հատկանիշները և միայն դրանից հետո գնահատականներ տալ: Կարծում ենք, որ կառավարման երեք հիմնական ձևերի արժանիքներն ու թերություններն օբյեկտիվորեն գնահատելու համար պետք է դրանք դիտարկել հետևյալ տեսանկյուններից. ա) տվյալ ձևի առաջացման կոնկրետ պատմական՝ ներքաղաքական և արտաքին քաղաքական պայմանները, բ) դրանց զարգացումը՝ փոփոխվող քաղաքական իրողություններին զուգընթաց, գ) ժամանակակից իրավական ժողովրդավարական պետություններում այդ ձևերի կոնկրետ դրսևորումները:

Խորհրդարանական ռեժիմը ձևավորվել է Մեծ Բրիտանիայում երկարատև զարգացումների արդյունքում, որոնց սկիզբը դրվել է 1688 թվականի Փառավոր հեղափոխությամբ: 18-րդ դարում ձևավորվեց սովորույթ, համաձայն որի՝ միապետը կառավարության ղեկավար էր նշանակում խորհրդարանական մեծամասնության ղեկավարին, իսկ 1834 թվականին ստիպված էր հրաժարվել կառավարության ղեկավարին հրաժարականի պահանջ ներկայացնելու իրավունքից: Պատմական զարգացման ընթացքում դասական մոդելներում կառավարությունը հետզհետե հեռանում է պետության գլխից և սկսում է հենվել պառլամենտական մեծամասնության վրա: Այս առումով հատկանշական է, որ քաղաքական կյանքի՝ երկկուսակցական համակարգի շուրջ կառուցմամբ են պայմանավորված Մեծ Բրիտանիայում պետական ինստիտուտների գործունեության առանձնահատկությունները:[38]

Ժամանակակից Եվրոպայում առավել տարածված է պետական կառավարման հենց խորհրդարանական համակարգը (խորհրդարանական հանրապետություն և խորհրդարանական միապետություն):

---

[37] Տե՛ս Краснов М.А. Россия как полупрезидентская республика: проблема баланса полномочий // Государство и право, 2003, N 10, էջ 23:

[38] Philippe Foillard, Droit constitutionnel et institutions politiques, Groupe Larcier s. a., Bruxelles, 2015, էջ 121:

Իրավաբանական գրականության մեջ միանման և սկզբունքորեն ճիշտ են ներկայացվում խորհրդարանական կառավարման առավել էական և բոլոր մոդելներին հատուկ հատկանիշները (բնութագրիչները)։[39] Սակայն կարծում ենք, որ մեթոդական առումով առավել նպատակահարմար է խորհրդարանական կառավարման հատկանիշների համակարգում առանձնացնել մեկ սկզբունքայնորեն կարևոր հատկանիշ, որի ածանցյալն են այդ կառավարման համակարգի մյուս առանձնահատկությունները։ Այդպիսի սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ խորհրդարանական կառավարման դեպքում պետական մարմինների ամբողջ համակարգում միայն խորհրդարանն է ձևավորվում համընդհանուր ընտրությունների արդյունքում, ունի առաջնային մանդատ և որպես հետևանք՝ լեգիտիմության առավել բարձր մակարդակ։ Նախագահին ընտրվում է խորհրդարանի կողմից (օրինակ՝ Իտալիայում) կամ հատուկ ընտրական կոլեգիայի կողմից (օրինակ՝ ԳԴՀ-ում), և նրա լեգիտիմության մակարդակը շատ ավելի նեղ է, քան նախագահական կամ կիսանախագահական հանրապետություններում։ Արդյունքում միապալատ կամ երկպալատ խորհրդարանը հայտնվում է իշխանության կենտրոնում։[40] Մնացած մյուս առանձնահատկություններն այդ սկզբունքային հատկանիշի հետևանքն են։

Խորհրդարանի կենտրոնական տեղը պետական իշխանության համակարգում արտացոլվում է նախևառաջ հենց այդ մարմնի իրավական կարգավիճակում։ Ինչպես նշում է Ր. Վ. Ենգիբարյանը, «Ժամանակակից խորհրդարանը համապետական ներկայացուցչական մարմին է, որի գլխավոր գործառույթը իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր իշխանության իրականացումն է։ Այն ներառում է նաև պետական գանձարանի բարձրագույն ղեկավարումը, այսինքն՝ պետական բյուջեի ընդունումը և դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը։ Ցանկացած խորհրդարան շատ թե քիչ՝ կախված պետական կառավարման ձևից, նաև

[39] Տե՛ս, օրինակ, Alfred Stepan, and Cindy Skach, Constitutional frameworks and democratic consolidation. Parliamentarianism versus presidentialism, World Politics, vol. 46, No. 1, 1993, էջ 1-22; Конституционное право зарубежных стран, էջ 150-151:

[40] Տե՛ս Ստեփանյան Վ., Հանրապետական կառավարման ժամանակակից ձևերի համեմատական վերլուծություն // Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 29:

վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ»։[41] Սակայն ի տարբերություն նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգերի, որտեղ խորհրդարանի իրավասությունը կարող է լինել բացարձակապես կամ համեմատաբար սահմանափակ, խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանի սահմանադրական իրավասության ծավալը սահմանափակված չէ։[42] Այսպես, Ճապոնիայի 1946 թվականի սահմանադրության 41-րդ հոդվածն ամրագրում է՝ «Խորհրդարանը պետական իշխանության բարձրագույն մարմինն է և պետության միակ օրենսդիր մարմինը», և չի պարունակում այդ մարմնի լիազորությունների ցանկ։

Բացի բոլոր կառավարման ձևերում խորհրդարաններին բնորոշ օրենսդիր գործառույթից՝ խորհրդարանական կառավարման դեպքում խորհրդարանն օժտված է նաև հիմնադիր (կազմակերպիչ) գործառույթով։

Նախ՝ խորհրդարանի կողմից կամ խորհրդարանի վճռորոշ ազդեցությամբ է ընտրվում պետության գլուխը։ Խորհրդարանական կառավարման երկրների մեծամասնությունում (Ալբանիա, Հունգարիա, Հունաստան և այլն) նախագահն ընտրվում է խորհրդարանի կողմից։ Եթե խորհրդարանը երկպալատ է, ապա քվեարկությունն անցկացվում է պալատների համատեղ նիստի ժամանակ։ Որոշ երկրներում նախագահն ընտրվում է հատուկ կոլեգիայի կողմից, որի հիմքը, սակայն, կազմում են խորհրդարանականները։[43]

Խորհրդարանը վճռորոշ դեր ունի նաև կառավարության կազմավորման ժամանակ։ Ձևականորեն կառավարությունը կազմավորում է նախագահը, սակայն ոչ թե սեփական հայեցողությամբ, այլ խորհրդարանում մեծամասնություն կազմող քաղաքական ուժերի (կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների) որոշմանը համապատասխան։ Սովորաբար նախագահը որպես կառավարության ղեկավար է ներկայացնում ընտրություններում հաղթած քաղաքական ուժի առաջնորդին և միայն խորհրդարանի կողմից կառավարության ղեկավարին (կամ

[41] Енгибарян Р. В. Конституционное развитие в современном мире: основные тенденции. М., 2010, էջ 353։
[42] Տե՛ս նույն աշխ., էջ 353-357։
[43] Մանրամասն տե՛ս նույն աշխ., էջ 342-343։

կառավարության կազմին՝ ամբողջությամբ) վստահության քվե տրվելուց հետո է նախագահը նշանակում կառավարություն։

Խորհրդարանը, որպես կանոն, ակտիվ մասնակցություն ունի նաև պետական այլ բարձրագույն պաշտոնների նշանակման և դատական իշխանության կազմավորման գործընթացներում։

Խորհրդարանի կենտրոնական դերը պետական իշխանության համակարգում դրսևորվում է ոչ միայն պետության գլխի ընտրության, կառավարության ձևավորման և բարձրագույն այլ պետական պաշտոններում նշանակումների գործընթացներում, այլ նաև խորհրդարան-պետության գլուխ, խորհրդարան-կառավարություն հարաբերությունների ամբողջ համակարգում։

Խորհրդարանական կառավարման դեպքում պետության գլուխը՝ նախագահը կամ միապետը, բավականին համեստ տեղ է զբաղեցնում պետական մարմինների համակարգում։ Ձևականորեն նա կարող է օժտված լինել նույնիսկ լայնածավալ լիազորություններով։ Սակայն այդ դեպքում ևս նրա իրավասությունը գործնականում սահմանափակվում է ներկայացուցչական գործառույթներով։ Նախագահին ստորագրում է բոլոր պետական փաստաթղթերը՝ ներառյալ օրենքները։ Բայց նա իրավունք չունի բովանդակության հետ համաձայն չլինելու հիմնավորմամբ հրաժարվել դրանք ստորագրելուց։ Նախագահին ուղղված բոլոր պետական փաստաթղթերը պետք է կրկնաստորագրվեն (կոնտրասիգնացիա) կառավարության ղեկավարի կամ պատասխանատու նախարարի կողմից։[44]

Ամբողջ գործադիր իշխանությունը պատկանում է կառավարությանը, որը վճռորոշ դեր ունի պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակման, ձևակերպման և իրականացման ոլորտներում։ Այսպես, Իսպանիայի սահմանադրության համաձայն՝ «Կառավարությունը ղեկավարում է ներքին և արտաքին քաղաքականությունը, քաղաքացիական և զինվորական վարչակազմը և երկրի պաշտպանությունը։ Այն իրականացնում է գործադիր իշխանությունը՝ երկրի Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան» (հոդ. 97)։ ԳԴՀ Հիմնական օրենքի (հոդ. 65) և Իտալիայի սահմանադրության (հոդ. 95) համաձայն՝ քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման և ընդհանուր

[44] Մանրամասն տե՛ս Конституционное право зарубежных стран, 143-144։

ղեկավարման իրավասությունները վերապահված են կառավարության ղեկավարին: Ուստի պետք է համաձայնվել այն հեղինակների հետ, ովքեր համարում են, որ խորհրդարանական կառավարման համակարգում պետական ներկայացուցչական գործառույթը պատկանում է պետության գլխին (միապետին կամ նախագահին), իսկ իրական իշխանությունը՝ վարչապետին (ԳԴՀ-ում կանցլերը և այլն):[45]

Միևնույն ժամանակ, կառավարությունն ուղղակի քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև: Խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում, որպես կանոն, կառավարությունը հրաժարական է տալիս:

Խորհրդարանական կառավարման դեպքում կառավարության գործունակությունը համընկնում է խորհրդարանի իրավասությունների ժամկետների հետ: Կառավարության ղեկավարի պաշտոնաթողությունը կատարվում է նրա սեփական կամարտահայտության հիման վրա, ինչպես նաև նրան (կամ կառավարության ամբողջ կազմին) խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելու կամ վստահության քվե չտալու դեպքում: Կառավարության ղեկավարի իրավասության դադարեցումը՝ անկախ հիմքից, հանգեցնում է կառավարության ամբողջ կազմի հրաժարականին:

Գործող կառավարության կողմից վստահության քվե տրվելու հարցը սովորաբար բարձրացվում է այն դեպքում, երբ կառավարությունը կոնկրետ միջոցառումների իրականացման համար խորհրդարանի աջակցության կարիքն ունի: Ամեն դեպքում պետք է տարբերակել վստահության քվեն անվստահության քվեից: Առաջին դեպքում նախաձեռնությունը լինում է կառավարության կողմից, իսկ երկրորդում՝ խորհրդարանական ընդդիմության կողմից:[46]

Սակայն խորհրդարանի վճռորոշ ազդեցությունը պետական իշխանության ամբողջ համակարգի կազմակերպման, կազմավորման և գործառնության ընթացակարգերի վրա ամենևին չի նշանակում նրա նկատմամբ զսպումների և հակակշիռների մեխանիզմի բացակայություն:

---

[45] Տե՛ս Alfred Stepan, and Cindy Skach, Constitutional frameworks and democratic consolidation. Parliamentarianism versus presidentialism, World Politics, vol. 46, No. 1, 1993, էջ 18:

[46] Մանրամասն տե՛ս В.Н. Шаповал. Сравнительное конституционное право, էջ 349-351:

Նախ՝ պետք է նկատել, որ կառավարությունը, որը հենվում է խորհրդարանական մեծամասնության վրա, իր հերթին հնարավորություն ունի էականորեն ազդելու խորհրդարանի ամբողջ գործունեության, առաջին հերթին՝ օրենսդրական գործունեության վրա: Հատկանշական է, որ խորհրդարանում քննարկվող օրինագծերի բացարձակ մեծամասնությունը ներկայացվում են հենց կառավարության կողմից: Ինչպես իրավացիորեն նկատում է Ր. Վ. Ենգիբարյանը, խորհրդարանի գործունեությունը վերահսկվում է նաև սահմանադրական արդարադատության կողմից:[47]

Խորհրդարանական կառավարման ձևի երկրներում խորհրդարանի արձակումն օրգանապես կապված է խորհրդարանի առջև կառավարության քաղաքական պատասխանատվության հետ: Խորհրդարանի արձակումը զսպումների և հակակշիռների մեխանիզմի կարևորագույն բաղադրատարրերից է: Հատկանշական է, որ պետության գլուխը խորհրդարանն արձակելու իր լիազորությունն իրացնում է կառավարության ղեկավարի խորհրդով կամ համաձայնությամբ, և կառավարության ղեկավարը սովորաբար կրկնաստորագրում է պետության գլխի համապատասխան ակտը:[48] Սակայն սա ընդհանուր կարգ է, որից կան նաև բացառություններ: Այսպես, Բուլղարիայում, Հունաստանում, Չեխիայում և մի շարք այլ երկրներում նախագահի համապատասխան ակտի կրկնաստորագրում նախատեսված չէ: Իռլանդիայում և Մալթայում նախագահն արձակում է խորհրդարանի ստորին պալատը վարչապետի խորհրդով, սակայն սահմանադրությամբ նախատեսված դեպքերում նա կարող է այդ խորհուրդը հաշվի չառնել:

Որպես կանոն, սահմանադրությամբ չեն նախատեսվում խորհրդարանի արձակման կոնկրետ հիմքեր: Հետևաբար, վարչապետի համապատասխան առաջարկության դեպքում պետության գլուխը ձևականորեն ցանկացած պահի կարող է արձակել խորհրդարանը: Գործնականում խորհրդարանն արձակվում է, եթե կառավարության ղեկավարի թեկնածուին կամ ամբողջ կազմին վստահության քվե չի տրվում: Մի շարք երկրներում խորհրդարանը կարող է արձակվել, եթե որոշակի ժամանակաշրջանի ընթացքում մի քանի անգամ (երկուսից չորս) խորհրդարանը

[47] Տե՛ս Р.В. Енгибарян, նշված աշխ., էջ 353:
[48] Տե՛ս В.Н.Шаповал. Сравнительное конституционное право, էջ 272:

վստահության քվե չի տալիս ձևավորվող կառավարությանը կամ անվստահություն է հայտնում գործող կառավարությանը: Վերջին դեպքում խորհրդարանի արձակումը կառավարության հրաժարականի այլընտրանք է հանդիսանում: Սակայն այդպիսի այլընտրանք միշտ չէ, որ գոյություն ունի, և անվստահություն հայտնելը կարող է ունենալ միայն մեկ ելք՝ կառավարության հրաժարական:[49]

Նախագահական կառավարման ձևն առաջին անգամ ամրագրվեց ԱՄՆ-ի 1787 թվականի սահմանադրությամբ, որով առաջին անգամ սահմանվեց նաև նախագահի ինստիտուտը: 19-րդ դարում միայն Ֆրանսիայում ստեղծվեց պետական կառավարման հանրապետական ձև, և սահմանվեց նախագահի պաշտոն: Ուստի ժամանակակից հանրապետական կառավարման ձևերի առաջացումը կապված է ԱՄՆ-ի փորձի հետ: Այդպիսի նորարական կառավարման ձևի առաջացումը իրավացիորեն բացատրվում է այն հանգամանքով, որ ԱՄՆ-ի սահմանադրությունը ստեղծվել էր նոր երկրում՝ նախկին անգլիական գաղութների տարածքներում: Ինչպես նշում է Ա. Հարությունյանը, երբ Ջ. Լոքը և Շառլ Լուի Մոնտեսքյոն մշակում էին իշխանությունների տարանջատման տեսությունը, նրանք նպատակ ունեին ապացուցելու բուրժուազիայի՝ իշխանության գալու անհրաժեշտությունը: Անհրաժեշտ էր ներկայացուցչական մարմնում ստիպել ազնվականությանը և հոգևորականությանը նահանջել: Սակայն հյուսիսամերիկյան նահանգներում այդ խավերը գոյություն չունեին, և արդյունքում իշխանությունների տարանջատման տեսությունը ներմուծվեց բոլորովին այլ սոցիալական պայմաններում, որտեղ «դասային» ենթատեքստը բացակայում էր:[50] Հենց այդ հանգամանքը հնարավորություն տվեց ստեղծելու և ներմուծելու այդ նորարարական կառավարման ձևը:

Հետագայում կառավարման այդ ձևը լայն տարածում գտավ: Նախագահական հանրապետություններ են, մասնավորապես, Կիպրոսը, Էկվադորը, Ֆիլիպինները, Լատինական Ամերիկայի երկրների մեծամասնությունը: Խորհրդային Միության փլուզումից հետո նախագահական կառավարման ձև հաստատվեց նաև մի շարք

[49] Մանրամասն տե՛ս նույն աշխ., էջ 273:
[50] Տե՛ս Арутюнян А. Институт Президента Республики Армения (сравнительно-правовой анализ), էջ 9:

նորանկախ պետություններում (Ադրբեջան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան)։

Իրավաբանական գրականության մեջ սովորաբար առանձնացվում են նախագահական կառավարման հետևյալ հատկանիշները՝ 1) պետական իշխանության կազմակերպումը իշխանությունների՝ այսպես կոչված «կարծր» տարանջատման սկզբունքի հիման վրա, 2) գործադիր իշխանության պատկանելը նախևառաջ նախագահին, նախագահի լիազորվածությունը՝ ձևավորել կառավարությունը որպես նախարարներից կազմված կոլեգիալ մարմին կամ կոլեգիալ մարմին չհանդիսացող կաբինետ (նշանակումներ կատարել նախարարների պաշտոնների և այլ պաշտոնների գործադիր իշխանության համակարգում), 3) կառավարության անդամների (նախարարների) քաղաքական պատասխանատվությունը միայն նախագահի առջև, որն իր պաշտոնն զբաղեցվում է համընդհանուր ընտրությունների արդյունքում։[51]

Նշված հատկանիշներից կարևորագույնը իշխանությունների կարծր տարանջատումն է և այդ սկզբունքից բխող՝ զսպումների և հակակշիռների մեխանիզմի կիրառումը։ Այս առումով պետք է համաձայնվել այն դիրքորոշման հետ, որ գործնականում իշխանությունների տարանջատման սկզբունքը խստորեն պահպանվում է միայն դասական նախագահական կառավարման պայմաններում (ԱՄՆ)։ Խորհրդարանական և կիսանախագահական կառավարման համակարգերում այդ սկզբունքն ավելի շատ կրում է կողմնորոշող բնույթ։[52] Նախագահական հանրապետություններում այդ սկզբունքը, որպես կանոն, հետևողականորեն կիրառվում է նախագահ (գործադիր իշխանություն)-խորհրդարան հարաբերությունների ողջ համակարգում։

Նախագահն ունի առաջնային մանդատ. նա ընտրվում է համընդհանուր ընտրությունների արդյունքում (ԱՄՆ-ում՝ ոչ ուղղակի)։ Նա հանդիսանում է պետության գլուխը և օժտվում է պետության գլխին բնորոշ (անկախ կառավարման կոնկրետ ձևից) բոլոր ավանդական լիազորություններով։ Այսպես, ԱՄՆ-ի

[51] Տե՛ս Шаповал В.Н. Сравнительное конституционное право, էջ 337; Конституционное право зарубежных государств, էջ 148։

[52] Տե՛ս Гаганова Н.А. Концепция разделения властей и идея субсидиарности // Государство и право, 2003, N3, էջ 88։

սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ նախագահը հանդիսանում է բանակի և նավատորմի գլխավոր հրամանատարը, ունի Միացյալ Նահանգների դեմ կատարված հանցագործությունների համար դատավճիռների հետաձգման և ներման իրավունք (բացառությամբ իմպիչմենտի կարգով դատապարտման դեպքերի), Սենատի խորհրդով և համաձայնությամբ միջազգային պայմանագրեր կնքելու, դեսպաններ և այլ լիազոր ներկայացուցիչներ նշանակելու իրավունք և այլն։

Նախագահական հանրապետությունների բոլոր սահմանադրությունների համաձայն՝ նախագահն է ստորագրում խորհրդարանի ընդունած օրինագծերը և օժտված է հաղթահարելի վետոյի իրավունքով։ Միևնույն ժամանակ, նախագահը չունի խորհրդարանը կամ նրա պալատները վաղաժամկետ արձակելու իրավունք, որը, ըստ էության, կհակասեր իշխանությունների կարծր տարանջատման սկզբունքին և կխաթարեր զսպումների և հակակշիռների համակարգը։ Չնայած դրան՝ նախագահի՝ խորհրդարանն արձակելու իրավունքն ամրագրված է նախագահական համարվող որոշ պետություններում (Թուրքմենստան, Ուզբեկստան, Ուրուգվայ)։

Նախագահական հանրապետությունների բոլոր սահմանադրություններում գոյություն ունի դրույթ՝ գործադիր իշխանության՝ նախագահին պատկանելու մասին։ Այսպես, ԱՄՆ-ի սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ «Գործադիր իշխանությունն իրականացնում է Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը»։ Սակայն տարբեր նախագահական հանրապետություններում գործադիր իշխանության համակարգը, կառուցվածքը և իրականացման սկզբունքներն էականորեն տարբերվում են միմյանցից։

Համարյա բոլոր նախագահական հանրապետություններում սահմանադրություններով ուղղակի նախատեսվում է համապետական գործադիր կոլեգիալ մարմնի՝ կառավարության (նախարարների խորհրդի կամ նախարարների կաբինետի) ստեղծում։ Որոշ երկրներում (Կորեա, Ուզբեկստան) նախատեսված է նաև կառավարության ղեկավարի պաշտոն։ Սակայն կառավարության ղեկավարը այդ բոլոր երկրներում կատարում է նախագահին կից օժանդակ դեր։ Նշված հանգամանքն առավել ցայտուն արտահայտվում է նրանով, որ բացառությամբ Կորեայի՝ կառավարության ղեկավարը կառավարության ձևավորմանը չի մասնակցում։

ԱՄՆ-ի սահմանադրությամբ կառավարություն կամ կաբինետ ուղղակիորեն նախատեսված չէ: Այստեղ կաբինետի գոյությունը հիմնված է Սահմանադրության 2-րդ հոդվածի մեկնաբանության և դրան համապատասխան ձևավորված ավանդույթի վրա: Նախագահի՝ Սահմանադրության 2-րդ հոդվածով ամրագրված իրավունքը՝ պահանջելու «գործադիր դեպարտամենտների ղեկավարներից իրենց իրավասությանը վերապահված ցանկացած հարցով գրավոր կարծիք» նպաստեց կաբինետի նիստերի անցկացման պրակտիկայի ձևավորմանը: Կաբինետը գործում է որպես նախագահին կից խորհրդատվական մարմին, իսկ կաբինետի անդամները համարվում են նախագահի օգնականներ:[53] Նախագահն ինքն է ղեկավարում կաբինետը. կաբինետի ղեկավարի առանձին պաշտոն գոյություն չունի, և գոյություն չունի կառավարություն՝ որպես գործադիր իշխանության կոլեգիալ մարմին: Բացի դրանից՝ ԱՄՆ-ում դաշնային գործադիր իշխանության համակարգի բոլոր պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավազորված են նախագահի կողմից:

Նախագահական հանրապետություններում ընդունված է կառավարության ձևավորման այնպիսի եղանակ, որն ընդհանուր առմամբ բնորոշվում է որպես արտախորհրդարանական,[54] ինչը որոշ դեպքերում չի կարելի միանշանակորեն համարել ճշգրիտ բնութագրում: Լատինաամերիկյան երկրներում նախագահն իր հայեցողությամբ է նշանակում կառավարության անդամներին: Սակայն մի շարք նախագահական հանրապետություններում նշանակումների գործընթացում որոշակի մասնակցություն ունի նաև խորհրդարանը: ԱՄՆ-ի սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ բաժնի համաձայն՝ կաբինետի անդամների և գործադիր իշխանության համակարգի մի շարք պաշտոնների նշանակումը կատարվում է Սենատի «խորհրդով և համաձայնությամբ»: Միևնույն ժամանակ, գործադիր իշխանության համակարգի մի շարք պաշտոններում նախագահը նշանակումներ է կատարում սեփական հայեցողությամբ: Ֆիլիպիններում կառավարության անդամները նշանակվում են խորհրդարանի երկու պալատների կողմից պարիտետային հիմունքներով ստեղծված հատուկ հանձնաժողովի համաձայնությամբ: Ադրբեջանում միայն վարչապետն է

[53] Philippe Foillard, Droit constitutionnel et institutions politiques, Groupe Larcier s. a., Bruxelles, 2015, էջ 105:
[54] Տե՛ս, օրինակ, Шаповал В.Н., նշված աշխ., էջ 352:

նշանակվում խորհրդարանի համաձայնությամբ, իսկ Թուրքմենստանում՝ ներքին գործերի և արդարադատության նախարարները։

Որպես կանոն, նախագահական հանրապետություններում պետության գլուխը սեփական հայեցողությամբ կարող է ազատել նախարարներին կամ իր կողմից նշանակված այլ պաշտոնատար անձանց։ Սակայն այստեղ նույնպես կան բացառություններ։ Կորեայում կառավարության անդամը կարող է ազատվել պաշտոնից՝ վարչապետի առաջարկությամբ։ Տաջիկստանում և Ուզբեկստանում խորհրդարանը հաստատում է ոչ միայն նախարարների նշանակման, այլ նաև ազատման մասին նախագահի ակտերը, իսկ Թուրքմենստանում անհրաժեշտ է խորհրդարանի համաձայնությունը՝ այն անձանց պաշտոնից ազատելու համար, որոնք նշանակվում են խորհրդարանի համաձայնությամբ։

Ամփոփելով նախագահական հանրապետության առանձնահատկությունների մասին վերը նշված դրույթները՝ կարելի է միանշանակ արձանագրել, որ գործադիր իշխանության իրական ղեկավարն ամեն դեպքում նախագահն է, որը ղեկավարում է գործադիր իշխանության ամբողջ համակարգը։ Իշխանությունների կարծր տարանջատման սկզբունքին համապատասխան՝ գործադիր իշխանությունը քաղաքական պատասխանատվություն չի կրում խորհրդարանի առջև, իսկ նախագահը՝ գործադիր իշխանության իրական ղեկավարը, չի կարող վաղաժամկետ արձակել խորհրդարանը։ Միևնույն ժամանակ պետք է նաև արձանագրել, որ գոյություն ունեն նախագահական կառավարման բազմազան մոդելներ, որոնք այս կամ այն չափով «շեղված են» այդ ընդհանուր օրինաչափությունից։

Կիսանախագահական կառավարման ձևն առաջացել է դեռևս անցյալ դարի առաջին կեսին՝ Վայմարյան Հանրապետությունում (1919 թ.), Ֆինլանդիայում (1919 թ.), Իռլանդիայում (1937 թ.), Իսլանդիայում (1945 թ.)։ Սակայն կառավարման այդ ձևն օրինակ ծառայեց Եվրոպայի մի շարք երկրների համար և բավականին լայն տարածում ստացավ Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետության ձևավորումից հետո։ Ինչպես արդեն նշել էինք, հենց Հինգերորդ Հանրապետության քաղաքաիրավական պրակտիկայի ուսումնասիրման արդյունքում Մ. Դյուվերժեն շրջանառության մեջ դրեց «կիսանախագահական կառավարում» հասկացությունը։ Մինչ այդ գրականության մեջ այդ ձևը դիտարկվում էր որպես ոչ թե պետական կառավարման

ինքնուրույն, այլ դեպի նախագահական կամ խորհրդարանական հանրապետություն անցումային ձև։[55]

Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետության կայացման և գործառնության փորձը համոզիչ կերպով ապացուցում է պետության գոյատևման ներքաղաքական և արտաքին քաղաքական իրողություններին համապատասխանող և այդ պայմաններին առավել համապատասխան և հետևաբար՝ առավել արդյունավետ կառավարման ձևի որդեգրման կարևորությունը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական բազմաթիվ երկրների ավանդական քաղաքական և առաջին հերթին՝ կուսակցական համակարգերը գործնականում փլուզվել էին։ Այդ երկրների խորհրդարանական կառավարման ձևերն այլևս չէին ապահովում արդյունավետ պետական իշխանության իրականացում. հանգեցնում էին կառավարական և որպես հետևանք՝ խորհրդարանական ճգնաժամերի։ Դրա վառ օրինակն է հետպատերազմյան Իտալիան, որտեղ կառավարական և խորհրդարանական ճգնաժամերը հարատև բնույթ էին կրում։

Հետպատերազմյան Ֆրանսիայում վիճակն ավելի ծանր էր՝ պայմանավորված ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական իրողություններով։ 1946 թվականին երկրում հաստատված «ուժեղացված պառլամենտարիզմի» ռեժիմը (չորրորդ հանրապետություն) հանգեցրեց քաղաքական անկայունության աճի, «կառավարական խառնաշփոթության» և պետական իշխանությունների հեղինակազրկման։ Ծանր էին նաև արտաքին քաղաքական պայմանները։ Երկիրը վարում էր գաղութատիրական պատերազմներ Հնդկաչինում և Ալժիրում։ 1958 թվականին Ալժիրում՝ ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսում, հակահանրապետական խռովություն սկսվեց, որը ժողովրդավարական կարգերի դեմ ուղղված իրական վտանգ ստեղծեց և դարձավ մետրոպոլիայում լուրջ բախումների պատճառ։ Հատկանշական է, որ բազմաթիվ ֆրանսիացի հեղինակներ, ընդգծելով խորհրդարանական ժողովրդավարության արժանիքները, միևնույն ժամանակ նշում

[55] Տե՛ս Конституционное право зарубежных стран, էջ 151:

են դրա թերությունները՝ գործադիր իշխանության անգործունակության և նախագահական իշխանության թուլության տեսանկյունից։[56]

Ստեղծված իրավիճակում ֆրանսիական խորհրդարանն ընդունեց որոշում համազգային առաջնորդին իշխանության փոխանցման մասին, որը կարող էր երկիրը հանել խորը ճգնաժամից, նախապատրաստել սահմանադրական բարեփոխումներ՝ իշխանության հեղինակության ամրապնդման և Ֆրանսիայի վեհության վերածնման նպատակով։ Ֆրանսիայի գործող նախագահը դիմեց խարիզմատիկ առաջնորդ Շ. դը Գոլին, որը երկար տարիներ կտրված էր պետական գործերից։ Նա տվեց իր համաձայնությունը, և 1958թ հունիսի 1-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը, 329 կողմ և 224 դեմ ձայների մեծամասնությամբ, դը Գոլին օժտեց օրենսդրության ոլորտում արտակարգ լիազորություններով։ Միաժամանակ ընդունվեց սահմանադրական օրենք, որով որոշվեցին սահմանադրական բարեփոխումների շրջանակները։

Հինգերորդ Հանրապետության սահմանադրությունն ընդունվեց 1958 թվականի սեպտեմբերի 28-ին և ուժի մեջ մտավ 1958 թվականի հոկտեմբերի 4-ին։

Այդ սահմանադրության յուրահատկությունը նախևառաջ այն էր, որ դրանով ամրագրվեց գործադիր իշխանության գերակշիռ դերը պետական իշխանության ընդհանուր համակարգում։ Այն պարունակում էր նաև կանոններ, որոնք սահմանափակում էին խորհրդարանի օրենսդրական գործունեության շրջանակները և նույնիսկ նախատեսում էին գործադիր իշխանության կողմից դրա նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնելու հնարավորություն։ Սահմանադրությունը ֆրանսիական պետության գլխին օժտեց էական և ինքնուրույն լիազորություններով։ Հետագայում հանրաքվեի միջոցով սահմանադրության մեջ կատարվեց փոփոխություն, և 1965 թվականից հանրապետության նախագահին ընտրվում է համընդհանուր և ուղղակի ընտրությունների միջոցով։ Դրանով իսկ կիսանախագահական կառավարման ձևը ստացավ իր ավարտուն և տրամաբանական տեսքը։[57]

[56] Տե՛ս Philipe Ardant, Bertrand Mathieu, Droit constitutionnel et institutions politiques, Lextenso editions, LGDJ, Issy-les-Moulineaux, 2015, էջ 377; Marcel Morabito, Histoire constitutionnelle de la France, Lextenso editions, LGDJ, Issy-les-Moulineaux, 2014, էջ 429:

[57] Տե՛ս Конституционное право зарубежных стран, էջ 540-545:

Իրավաբանական գրականության մեջ կատարվել են կիսանախագահական կառավարման ձևի բնութագրական հատկանիշների համակարգ կառուցելու մի շարք փորձեր: Այսպես, Յու. Ի. Լեյբոյի կարծիքով՝ դրանք հետևյալ բնութագրիչներն են.

-նախագահն ընտրվում է անմիջապես բնակչության կողմից՝ ուղղակի ընտրությունների միջոցով.

-նախագահն օժտված է լայնածավալ իշխանական լիազորություններով. նա պետության գլուխն է, նրան են պատկանում հիմնական առանձնաշնորհները գործադիր իշխանության ոլորտում, նա է զինված ուժերի գլխավոր հրամանատարը.

-ձևավորվում է կառավարություն՝ որպես գործադիր իշխանության ինքնուրույն մարմին, որը գործում է նախագահի ընդհանուր ղեկավարության ներքո: Կառավարությունը նշանակվում է նախագահի կողմից, սակայն պետք է ունենա խորհրդարանի վստահությունը: Կառավարությանն անվստահության քվե տալը հանգեցնում է կամ կառավարության հրաժարականին, կամ նախագահի կողմից խորհրդարանն արձակելուն:[58]

Վ. Ն. Շապովալն առանձնացնում է կիսանախագահական կառավարման ձևի հետևյալ քաղաքական-իրավական հատկանիշները՝ պետական մեխանիզմի կազմակերպումը և առաջին հերթին՝ գործադիր իշխանության գործունեությունը՝ նախագահական և խորհրդարանական հանրապետություններին հատուկ բնութագրիչների սիմբիոզի (համակցության) հիման վրա. գործադիր իշխանության դուալիզմը (երկվություն) և որոշ բացառություններով հանդերձ՝ նախագահի՝ որպես գործադիր իշխանության կրողի սահմանադրական բնորոշման բացակայությունը. նախագահի՝ որպես հասարակական և պետական կյանքի որոշակի ոլորտներում արբիտրի (իրավարարի) և (կամ) երաշխավորի գործառույթների սահմանադրական ամրագրումը. նախագահի համընդհանուր և ուղղակի ընտրությունը:[59]

Կարելի է եզրահանգել, որ առաջին դեպքում շեշտը դրվում է նախագահի կարգավիճակի առանձնահատկությունների վրա, իսկ երկրորդ դեպքում՝ նախագահ-խորհրդարան-կառավարություն եռյակի փոխհարաբերությունների, նրանց միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի առանձնահատկությունների վրա: Ուստի

[58] Տե՛ս նույն աշխ., էջ 151-152:
[59] Տե՛ս В.Н. Шаповал, նշված աշխ., էջ 137:

երկու մոտեցումներն էլ կարող են արդյունավետ լինել՝ կախված կոնկրետ հետազոտական խնդիրներից:

Բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել կիսանախագահական կառավարման ձևի ևս մեկ առանձնահատկություն: Եթե նախագահը և խորհրդարանի մեծամասնությունը ներկայացնում են նույն քաղաքական ուժը, ապա պետական համակարգի տրամաբանությունը նմանվում է նախագահական հանրապետության, իսկ եթե նախագահը և խորհրդարանի մեծամասնությունն ընդդիմադիր քաղաքական բևեռներից են, ապա պետական համակարգի տրամաբանությունը նմանվում է խորհրդարանական հանրապետության:

Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ ժամանակակից աշխարհում առկա են կիսանախագահական կառավարման ձևի տարբեր մոդելներ, որոնք ունեն բազմաթիվ յուրահատկություններ: Հատկանշական է, որ տարբեր հեղինակներ կառավարման այս ձևի շրջանակներում առանձնացնում են մի շարք ինքնուրույն տարատեսակներ: Այսպես, Օ. Ի. Զազնաևի կարծիքով՝ պետք է տարբերակել կիսախորհրդարանական կառավարման ձևը, որի դեպքում նախագահը չի ընտրվում համընդհանուր և ուղղակի ընտրակարգով, իսկ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն չի կրում խորհրդարանի առջև:[60] Մ. Վ. Բագլայը, տարբերակելով խորհրդարանական, նախագահական և կիսանախագահական հանրապետությունները, միաժամանակ առանձնացնում է նաև խորհրդարանական-նախագահական հանրապետությունը, որը մոտ է կիսանախագահականին, սակայն տարբերվում է վերջինից խորհրդարանի ավելի մեծ դերակատարությամբ, այդ թվում՝ կառավարության կազմավորման ժամանակ:[61] Վ. Ե. Չիրկինն առանձնացնում է նաև կիսանախագահական-կիսախորհրդարանական կառավարման ձևը:[62]

Հատուկ ուշադրության են արժանի կիսանախագահական կառավարման այն մոդելները, որոնք ներմուծվեցին հետխորհրդային պետություններում: Հետխորհրդային երկրներում կիսանախագահական համակարգ ներմուծելու համար կային լուրջ հիմքեր: Անցումային շրջանի պետություններին բնորոշ ավտորիտար

[60] Տե՛ս Зазнаев О.И. Полупрезидентская система: теоретические и прикладные аспекты. Казань, 2006, էջ 367:
[61] Տե՛ս Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М., 2007, էջ 141:
[62] Տե՛ս Чиркин В.Е. Конституция: российская модель. М., 2004, էջ 134:

ավանդույթների և թույլ ժողովրդավարական կառույցների պայմաններում անհրաժեշտ էր համախմբող ուժ: Կիսանախագահական կառավարման դեպքում նախագահի ինստիտուտը, լինելով բավականին հզոր՝ համախմբող դեր իրականացնելու համար, միևնույն «քաղաքական խաղից» չի հեռացնում խորհրդարանին և քաղաքական կուսակցություններին: Ուստի այդ մոդելն առավել համապատասխանում է հետխորհրդային պայմաններին:[63] Սակայն փորձը ցույց տվեց, որ այդ երկրների մի մասում պարզապես միավորվեցին նախագահական և կիսանախագահական կառավարման ձևերին հատուկ նախագահի ինստիտուտի ուժեղ կողմերը՝ հիմք տալով եզրահանգել «սուպերնախագահական» ինստիտուտի առաջացման մասին:[64] Բազմաթիվ հեղինակներ հետխորհրդային երկրների կիսանախագահական կառավարման մոդելների (նախևառաջ՝ Ռուսաստանի Դաշնության) առանձնահատկությունների վերլուծության արդյունքում այդ մոդելները բնորոշում են որպես սուպերնախագահական:[65] Որոշ հեղինակներ ՌԴ կառավարման ձևը բնորոշում են որպես ընտրական միապետություն[66] կամ ընտրական դուալիստական միապետություն՝ թագաժառանգման տարրերով[67]: Մի շարք հեղինակների կարծիքով՝ ՌԴ կիսանախագահական կառավարման մոդելը մի շարք կարևոր հատկանիշներով նմանվում է լատինաամերիկյան[68] կամ աֆրո-ասիական[69] նախագահական մոդելին: Հաշվի առնելով ՌԴ կիսանախագահական կառավարման մոդելի վերաբերյալ գնահատականների այդպիսի բազմազանությունը՝ միանշանակ կարելի է համաձայնվել Ա. Գ. Շաբլինսկիի այն տեսակետի հետ,[70] որ ՌԴ կառավարման ձևի կիսանախագահական բնութագրման հետ կապված ամեն ինչ չէ, որ պարզ է:

---

[63] Տե՛ս Արտյունյան Ա., նշված աշխ., էջ 21-22:

[64] Մանրամասն տե՛ս Stephen Holmes, Superpresidentialism and its problems.// EECR.Vol 2. N4, Fall 1993/ Vol 3, N1. Winter, 1994, էջ 123-126:

[65] Տե՛ս, օրինակ, Соломанина Ю.В. Республиканская форма правления в России: история и современность. Автореф. дисс. канд.юрид. наук. Владимир, 2007, էջ 23:

[66] Տե՛ս Воеводин Л.Д. Юридическийстатус личности в России. М., 1997, էջ 256:

[67] Տե՛ս Лукьянова Е.А. Некоторые проблемы Конституции Российской Федерации // Коституционное и муниципальное право, 2007, N 15, էջ 6:

[68] Տե՛ս Мещеряков А.Н. Конституционные способы воздействия Президента Российской Федерации на исполнительную власть и связанные с ним особенности российской формы правления // Конституционное и муниципальное право, 2005, N 5, էջ 22:

[69] Տե՛ս Сахаров Н.А. Институт президентства в современном мире. М., 1994, էջ 20:

[70] Տե՛ս Шаблинский И.Г. К истории рождения российского конституционализма // Государство и право,, 2008, N 6, էջ 114:

Թվարկված մոդելներում, մասնավորապես, տարբերվում են նախագահի գործառույթները, տարբեր են կառավարության ձևավորման ընթացակարգերը, նախագահ-կառավարություն-խորհրդարան հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորումները: Տարբեր կերպ են կարգավորվում նաև կառավարություն քաղաքական պատասխանատվության հետ կապված հարաբերությունների ոլորտները: Ուստի կիսանախագահական կառավարման համակարգի բնութագրիչների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատման համար պետք է կիրառվի տարրալուծման և համադրության մեթոդը: Անհրաժեշտ է նախ բացահայտել տարբեր մոդելների յուրահատկությունները, ապա կազմել կիսանախագահական կառավարմանը հատուկ բաղադրիչների համակարգ:

Նախքան կիսանախագահական կառավարման առանձին մոդելներում նախագահի կարգավիճակի վերլուծությանն անդրադառնալը, թերևս, անհրաժեշտ է կատարել երկու վերապահում: Առաջինը՝ ատենախոսության նպատակից ելնելով՝ մենք խնդիր չենք դրել բազմակողմանիորեն վերլուծելու նախագահի կարգավիճակի բոլոր նրբերանգները: Դա հետազոտական հատուկ օբյեկտ է, որին իրավաբանական գրականության մեջ միշտ հատկացվել է արժանի ուշադրություն: Մասնավորապես, կիսանախագահական կառավարման հայաստանյան մոդելում նախագահի կարգավիճակի հետ կապված հիմնախնդիրներին բազմակողմանի և անհրաժեշտ խորությամբ անդրադարձ է կատարվել հայ իրավաբանների մի շարք աշխատություններում:[71] Մեր խնդիրն է վերլուծել տարբեր կիսանախագահական մոդելներում նախագահի կարգավիճակի այն առանձին բաղադրատարրերը, որոնք արտացոլում են կիսանախագահական համակարգում իշխանությունների տարանջատման առանձնահատկությունները ու կարևորվում են նախագահ-խորհրդարան, նախագահ-կառավարություն հարաբերությունների ոլորտում: Երկրորդ՝ տվյալ գլխում մենք չենք անդրադառնում Հայաստանի Հանրապետությունում ձևավորված կիսանախագահական մոդելի

[71] Տե՛ս, օրինակ, Арутюнян А. Институт президента Республики Армения; Шмавонян Г. А. Президентская власть и разделение властей в полупрезидентской республике: опыт Армении // Государство и право, 2000, N 1, էջ 87-97; Պողոսյան Վ., Կառավարման կիսանախագահական ձևի առանձնահատկությունները Հայաստանում. ընտրված նյութերի ժողովածու, ԵԱՀԿ, 2004, էջ 41-54:

առանձնահատկություններին: Դա նույնպես հատուկ քննարկման առարկա է, և համապատասխան հիմնախնդիրները կքննարկենք հաջորդ գլխում:

Կիսանախագահական հանրապետություններում գոյություն ունեն էական տարբերություններ՝ նախագահի ինստիտուտի սահմանադրական ամրագրման ոլորտում: Այսպես, նախագահի պաշտոնը սովորաբար բնորոշվում է «պետության գլուխ» արտահայտությամբ: Սակայն որոշ սահմանադրություններ ընդհանրապես չեն պարունակում նախագահի պաշտոնը բնորոշող դրույթներ: Այս դեպքերում պարզապես թվարկվում են նախագահի գործառույթները: Ավելին, Իռլանդիայի, Մակեդոնիայի սահմանադրություններում նախագահի գործառույթները ձևակերպված չեն, և դրանց մասին կարելի է դատողություններ անել միայն վերլուծելով նախագահի իրավասությունները:

Միևնույն ժամանակ, նախագահի ինստիտուտի սահմանադրական ամրագրումներն ունեն մեկ էական ընդհանրություն. նախագահը չի հիշատակվում օրենսդիր, գործադիր և դատական իշխանություն իրականացնող պետական մարմինների շարքում: Պետական իշխանության համակարգում նա զբաղեցնում է առանձնահատուկ տեղ: Որպես կանոն, նախագահի սահմանադրական կարգավիճակի հիմքն են կազմում արբիտրի (իրավարարի) կամ գարանտի (երաշխավորի) գործառույթները: Նրա հիմնական խնդիրը երեք իշխանությունների միջև առաջացող վեճերը լուծելն է (իրավարար) կամ սահմանադրության ու պետության կայունությունն ու երկրի տարածքային ամբողջականությունն ապահովելը (երաշխավոր): Այսպես, Ֆրանսիայի սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ նախագահը «իր իրավարարությամբ ապահովում է հանրային իշխանությունների բնականոն գործունեությունը»: Նույն հոդվածով ամրագրված է նաև, որ նախագահը հետևում է սահմանադրության պահպանմանը, հանդիսանում է ազգային անկախության, տարածքային ամբողջականության երաշխավորը: Լեհաստանի սահմանադրության 126-րդ հոդվածի համաձայն՝ Լեհաստանի Հանրապետության նախագահը հանդիսանում է պետական իշխանության անընդհատության երաշխավորը, պահպանում է պետության անվտանգությունը և նրա տարածքի ամբողջականությունը: Համանման դրույթներ են ամրագրված նաև Ռուսաստանի Դաշնության, Պորտուգալիայի, Խորվաթիայի, Ռումինիայի և

կիսանախագահական կառավարման երկրների բազմաթիվ այլ սահմանադրություններով:

Այդ գործառույթների արդյունավետ իրականացման համար կիսանախագահական կառավարման տարբեր մոդելներում նախագահին օժտվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հետ հարաբերությունների ոլորտում մի շարք էական լիազորություններով: Ուստի կարելի է համաձայնվել այն դիրքորոշման հետ, որ կիսանախագահական կառավարման համակարգը փաստորեն նախագահին հնարավորություն է տալիս վեր կանգնել իշխանությունների տարանջատման համակարգից և ակտիվորեն իրականացնել սոցիալական բարեփոխումներ: Նախագահը հանդես է գալիս որպես ոչ թե պետական իշխանության ղեկավար կամ նույնիսկ դրա մարմնավորող, այլ հզոր և հեղինակավոր պետության գլուխ:[72] Այսպիսով, կարելի է արձանագրել, որ հասարակական և պետական կյանքի որոշակի ոլորտներում նախագահի՝ որպես իրավարարի և երաշխավորի կարգավիճակի սահմանադրական ամրագրումը կիսանախագահական կառավարման ձևի գլխավոր բնութագրիչն է: Կիսանախագահական կառավարման համակարգում նախագահի ինստիտուտի մյուս բոլոր յուրահատկություններն ածանցվում են նախագահի՝ իրավարարի և երաշխավորի կարգավիճակային տարրերից:

Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ նախագահի՝ որպես իրավարարի կամ երաշխավորի դերը գրականության մեջ միանշանակ չի գնահատվում: Այսպես, Վ. Ն. Շապովալը գտնում է, որ կիսանախագահական, մասնավորապես՝ հետխորհրդային պետությունների սահմանադրությունների վերլուծությունը վկայում է այն մասին, որ գործնականում նախագահը չունի իրավարարի կամ երաշխավորի լիազորություններ: Հեղինակի կարծիքով՝ միայն Ռուսաստանում նախագահը կարող է դաշնային մարմինների և դաշնության սուբյեկտների մարմինների միջև, ինչպես նաև սուբյեկտների մարմինների միջև առաջացող վեճերը լուծելու համաձայնեցման ընթացակարգեր կիրառել: Հեղինակը որոշակի վերապահումներ է կատարում նաև նախագահի՝ որպես երաշխավորի գործառույթի վերաբերյալ: Նա գտնում է, որ

[72] Տե՛ս Конституция Российской Федерации: Коментарий. Под. общ. ред. Б. Н. Топорнина, Ю. М. Батурина, Р.Г. Орехова. М., 1994, էջ 43; Медушевский. Сравнительное конституционное право и политические институты., էջ 204-205:

նախագահի համապատասխան գործառույթների ճանաչումը կարող է նախագահի կողմից իշխանությունների երեք թևերի կլանման տեսական հիմնավորում լինել։[73] Սակայն կարծում ենք, որ գիտական հետազոտության նպատակը պետք է լինի ոչ թե ակնհայտ եղելությունների ժխտումը՝ գործնականում դրանց բացասական հետևանքների հիմնավորմամբ, այլ այդ եղելությունների օբյեկտիվ արձանագրումը և դրանցից ծագող հնարավոր բացասական հետևանքների չեզոքացմանն ուղղված՝ գիտականորեն հիմնավորված հանձնարարականների ձևակերպումը։

Կիսանախագահական կառավարման համակարգի կոնկրետ առանձնահատկություններն արտացոլվում են նախագահ-կառավարություն-խորհրդարան «եռանկյունու» փոխհարաբերությունների՝ գործնականում բոլոր ոլորտներում։ Տեսականորեն այստեղ կարելի է առանձնացնել նրանց միջև առկա փոխհարաբերությունների երեք հիմնական ուղղություններ՝ կապված՝ ա) խորհրդարանի արձակման հետ, բ) կառավարության ձևավորման և հրաժարականի հետ, գ) գործադիր իշխանության գործառույթների իրականացման հետ։ Սակայն մեթոդաբանական առումով կարևոր է հաշվի առնել, որ այդ երեք ուղղությունների միջև գոյություն ունեն համակարգային կապեր, որոնց վերլուծությունը կարող է էականորեն նպաստել ընդհանրապես կիսանախագահական կառավարման առանձնահատկությունների և մասնավորապես կիսանախագահական կառավարման առանձին մոդելների յուրահատկությունների բացահայտմանը։

Կիսանախագահական կառավարման համակարգի կարևոր յուրահատկություններից է նախագահի՝ սեփական կամարտահայտությամբ և նախաձեռնությամբ խորհրդարանն արձակելու և նոր խորհրդարանական ընտրություններ նշանակելու լիազորությունը։ Կիսանախագահական կառավարման տարբեր մոդելներում սահմանվում են խորհրդարանի արձակման տարբեր ընթացակարգեր։ Որպես կանոն, երկպալատ խորհրդարանի դեպքում նախատեսվում է միայն ստորին պալատի արձակման հնարավորություն։ Սակայն կիսանախագահական կառավարման առկա բոլոր մոդելների սկզբունքային ընդհանրությունն այն է, որ նախագահը լիազորված է արձակել խորհրդարանը (ի տարբերություն նախագահական կառավարման ձևի) և սահմանադրությամբ

[73] Տե՛ս Шаповал В.Н., նշված. աշխ., էջ 335-338։

ամրագրված լինելու դեպքերում այդպիսի որոշում կարող է կայացնել ինքնուրույն (ի տարբերություն խորհրդարանական հանրապետության)։

Կիսանախագահական կառավարման առանձնահատկությունների բացահայտման համար պետք է նաև բացահայտել նախագահի կողմից խորհրդարանի արձակման հիմքերը, ինչպես նաև վերլուծել սահմանադրություններով սահմանված՝ խորհրդարանի արձակման ընթացակարգերը։

Սովորաբար նախագահը կարող է (և նույնիսկ պարտավոր է) արձակել խորհրդարանը հետևյալ երկու հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում։ Առաջինը՝ երբ խորհրդարանական ընթացակարգերի պահպանմամբ չի հաջողվում նշանակել վարչապետ կամ ձևավորել կառավարությունն ամբողջությամբ՝ ներառյալ այն իրավիճակները, երբ խորհրդարանը վստահության քվե չի տալիս նոր ձևավորված կառավարությանը։ Խորհրդարանի արձակման հիմք է հանդիսանում նաև խորհրդարանի կողմից գործող կառավարությանն անվստահություն հայտնելը կամ վստահություն չհայտնելը։ Այս դեպքում խորհրդարանի արձակումը, որպես կանոն, հանդիսանում է կառավարության հրաժարականի այլընտրանք։ Սակայն մի շարք պետություններում այդպիսի այլընտրանքը չի նախատեսվում, և խորհրդարանի կողմից գործող կառավարությանն անվստահություն հայտնելը կամ վստահություն չհայտնելը կարող է ունենալ միայն մեկ հետևանք՝ կառավարության հրաժարական։

Բացի վերը նշված հիմքերից՝ կիսանախագահական կառավարման որոշ պետությունների սահմանադրություններով նախատեսվում են խորհրդարանի արձակման լրացուցիչ հիմքեր. խորհրդարանի անընդունակությունը՝ կայացնել որևէ կարևոր որոշում (ասենք՝ ընդունել պետական բյուջեն) կամ ընդհանրապես իրականացնել իր իրավասությունը, որոշակի ժամանակահատվածում խորհրդարանի նիստեր անցկացնելու անհնարինությունը և այլն։

Կիսանախագահական կառավարման մի շարք սահմանադրություններով ամրագրված են նախագահի՝ խորհրդարանն արձակելու լիազորության որոշ սահմանափակումներ։ Սովորաբար խորհրդարանը չի կարող արձակվել արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում, նախագահի պաշտոնանկության գործընթաց սկսվելուց հետո, երբ խորհրդարանը քննարկում է կառավարությանն

անվստահություն հայտնելու հարցը և որոշ այլ դեպքերում: Կիսանախագահական կառավարման որոշ պետություններում ամրագրված են նաև որոշակի սահմանափակումներ՝ կապված նախագահի կամ կառավարության լիազորությունների ժամկետների հետ:[74]

Որպես կանոն, նախատեսվում է, որ նախագահը մինչև խորհրդարանի արձակումը պարտավոր է կատարել որոշակի գործողություններ՝ անցկացնել խորհրդատվություններ կամ «ունկնդրել կարծիքներ»: Այսպես, Ֆրանսիայի սահմանադրությանը համապատասխան՝ նախագահը պետք է խորհրդատվություններ անցկացնի վարչապետի և պալատների նախագահների հետ, Ռումինիայում՝ պալատների նախագահների և խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների հետ, Լեհաստանում՝ խորհրդարանի պալատների նախագահների հետ և այլն:

Կիսանախագահական համակարգի առանձնահատկությունները դրսևորվում են նաև նախագահ-կառավարություն հարաբերությունների ոլորտում, որտեղ նախագահին վերապահված են վճռորոշ լիազորություններ: Կիսանախագահական կառավարման տարբեր մոդելներում այդ լիազորությունները՝ որոշ դեպքերում էականորեն, տարբերվում են:

Սակայն բոլոր դեպքերում ընդհանուր սկզբունքը պահպանվում է. նախագահն է ձևավորում կառավարությունը՝ այս կամ այն չափով համագործակցելով խորհրդարանի հետ: Թերևս, իշխանությունների տարանջատման անհրաժեշտությունն ինքնին ենթադրում է, որ կառավարության ձևավորման ընթացակարգերում նախագահի լիազորությունները պետք է հակակշռվեն օրենսդիր և գործադիր իշխանությունների՝ անհրաժեշտության դեպքում նախագահի կողմից հնարավոր կամայականությունները սահմանափակելու իրական իրավական հնարավորություններով: Ընդհանուր միտումն այն է, որ որքանով նախագահը ինքնուրույն է կառավարության ձևավորման ժամանակ, այնքանով պետք է սահմանափակված լինեն նրա հնարավորությունները կառավարության պաշտոնանկության գործընթացներում: Այսպես, Ֆրանսիայի սահմանադրության համաձայն (8-րդ հոդ.)՝ նախագահը նշանակում է վարչապետին և վերջինիս

[74] Մանրամասն տե՛ս Шаповал В. Н., նշված. աշխ., էջ 270-277:

ներկայացմամբ՝ կառավարության մյուս անդամներին: Միևնույն ժամանակ, նախագահը կարող է դադարեցնել վարչապետի կողմից իր գործառույթների իրականացումը՝ միայն վերջինիս կողմից կառավարության հրաժարականի մասին դիմում ներկայացնելու դեպքում: Սահմանադրության 50-րդ հոդվածի համաձայն, եթե Ազգային ժողովն ընդունում է պարսավանքի բանաձև կամ եթե այն հավանություն չի տալիս կառավարության ծրագրին կամ ընդհանուր քաղաքականության հռչակագրին, ապա վարչապետը պետք է Հանրապետության նախագահին ներկայացնի դիմում՝ կառավարության հրաժարականի մասին: Արդյունքում նախագահը կառավարություն ձևավորելիս գործնականում միշտ ստիպված է լինում հաշվի առնել խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը: Հինգերորդ Հանրապետությունում երեք անգամ (1986-1988 թթ., 1993-1995 թթ., 1999-2002 թթ.) նախագահները ստիպված են եղել ձևավորել խորհրդարանում մեծամասնություն կազմող և իրենց ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչներից կազմված կառավարություն:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչապետին նշանակում է նախագահը՝ Պետական Դումայի համաձայնությամբ: Չնայած այդ հանգամանքին՝ ռուսական իրավաբանական գրականության մեջ, կարելի է ասել, համընդհանուր ճանաչում են ստացել այն հիմնավորված գնահատականները, համաձայն որոնց՝ Ռուսաստանի Դաշնությունում գործնականում հենց նախագահն է գլխավորում գործադիր իշխանության ամբողջ համակարգը,[75] ձևականորեն հռչակված իշխանությունների տարանջատման պայմաններում բացակայում է զսպումների և հակակշիռների իրական մեխանիզմ,[76] Ռուսաստանի դաշնության կառավարման համակարգը կարելի է բնորոշել որպես առաջնորդային ժողովրդավարություն (вождитская демократия),[77] Ռուսաստանում պետական իշխանությունն ունի ցայտուն արտահայտված ավտորիտար ուղղվածություն:[78]

[75] Տե՛ս Чиркин В. Е. Конституционное право: Россия и зарубежный опыт. М., 1998, էջ 292:
[76] Տե՛ս Авдеев Д.А. Особенности российской модели формы правления // Государство и право, 2010, N12, էջ 21:
[77] Տե՛ս Ачкасов В.А. Президент РФ и Государственная Дума: перспективы взаимоотношений // Правоведение. 1995, N45, էջ 67:
[78] Տե՛ս Лукьянова Е.А. Некоторые проблемы Конституции Российской Федерации // Конституционное и муниципальное право, 2007, N15, էջ 6:

Բանն այն է, որ որպես «հակակշիռ» նախագահի՝ վարչապետ նշանակելու լիազորության սահմանափակմանը (ըստ որի՝ վերջինս կարող է նշանակվել միայն Պետական Դումայի համաձայնությամբ)՝ Ռուսաստանի Դաշնության նախագահին վերապահված են այնպիսի լիազորություններ, որոնք ոչ թե հավասարակշռում են պետական իշխանության համակարգը, այլ փաստորեն լրիվ ձևական են դարձնում Պետական Դումայի՝ վարչապետի նշանակմանը համաձայնություն տալու փաստը: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 111-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ ներկայացված թեկնածությունները երեք անգամ մերժվելու դեպքում նախագահը նշանակում է վարչապետ և արձակում է Պետական Դուման: Ուստի տեսականորեն չի բացառվում, որ նախագահը, հետապնդելով Պետական Դուման արձակելու ուղղակի նպատակ, կարող է երեք անգամ ներկայացնել խորհրդարանի ստորին պալատում հավանություն չունեցող թեկնածություններ և նշանակել իր նախընտրելի թեկնածուին՝ արձակելով խորհրդարանի ստորին պալատը: Այդ լիազորության դեմ խորհրդարանի համար որևէ հակակշիռ սահմանված չէ:

Ռուսաստանի Դաշնության մոդելում հավասարակշռված չեն նաև լիազորությունները՝ կառավարության հրաժարականին առնչվող հարաբերությունների սահմանադրական կարգավորման ոլորտում: Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է նախագահի իրավունքը՝ ընդունելու որոշում կառավարության հրաժարականի մասին՝ առանց խորհրդարանի որևէ մասնակցության: Ճիշտ է, նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված է նաև Պետական Դումայի՝ կառավարությանն անվստահություն հայտնելու լիազորությունը: Սակայն նախագահը կարող է կամ ընդունել կառավարության հրաժարականը, կամ չհամաձայնվել այդ որոշման հետ: Ավելին, երեք ամսվա ընթացքում խորհրդարանի ստորին պալատի կողմից կառավարությանը կրկնակի անվստահություն հայտնելու դեպքում նախագահը կարող է կամ հայտարարել կառավարության հրաժարականի մասին, կամ արձակել Պետական Դուման:

Պետք է նկատել, որ կիսանախագահական կառավարման մյուս երկրներում կիրառվում են կառավարության ձևավորման բազմաթիվ այլ սկզբունքներ և կարգեր:

Այսպես, Բուլղարիայում և Մակեդոնիայում նախագահը կառավարության ձևավորման մանդատը պետք է հանձնի խորհրդարանական մեծամասնության թեկնածուին, Պորտուգալիայում՝ պետք է հաշվառի ընտրությունների արդյունքները: Ի տարբերություն այդ մոդելների՝ Լեհաստանում, Սլովենիայում և Խորվաթիայում նախագահը մեծամասնության ներկայացուցչի ղեկավարությամբ կառավարություն ձևավորելու իրավական պարտավորություն չի կրում. կառավարության ձևավորման համար խորհրդարանի համաձայնությունը չի պահանջվում: Միևնույն ժամանակ, Լեհաստանում և Խորվաթիայում կառավարությունը իր ձևավորումից հետո երկշաբաթյա ժամկետում պետք է ստանա խորհրդարանի վստահության քվեն:[79]

Կիսանախագահական կառավարման յուրահատկություններից է նաև այն հանգամանքը, որ նախագահը՝ տարբեր մոդելներում տարբեր չափերով, սակայն միշտ օժտված է էական և լայնածավալ լիազորություններով գործադիր իշխանության իրականացման ոլորտում: Այդպիսի լիազորություններ ամրագրված են Հինգերորդ Հանրապետության Սահմանադրության մի շարք հոդվածներով: Մասնավորապես, նախագահն է նախագահում Խորհրդի նիստերում (հոդ. 9), նա է ստորագրում Նախարարների խորհրդում քննարկված օրդոնանսներն ու դեկրետները (հոդ. 13): Ավելին, կառավարության գործունեությունը ղեկավարող վարչապետը կարող է փոխարինել նախագահին՝ որպես կառավարության նիստերին նախագահողի, միայն բացառիկ դեպքերում՝ նախագահի կոնկրետ հանձնարարությամբ և որոշակի օրակարգով:

Նախագահն է հանդիսանում զինված ուժերի ղեկավարը և նախագահում է ազգային պաշտպանության բարձրագույն խորհուրդներում և կոմիտեներում (հոդ. 15): Նա նշանակումներ է կատարում քաղաքացիական և զինվորական պետական պաշտոններում (հոդ. 13): Նախագահը փաստացիորեն ղեկավարում է գործադիր իշխանության համակարգը: Այս եզրակացությունը բխում է նախագահի՝ սահմանադրորեն ամրագրված լիազորություններից և դրանցից բխող այն հնարավորություններից, որոնք վկայում են գործադիր իշխանության համակարգի հետ նախագահի կապի մասին: Նախագահը, բացի կառավարության ձևավորումից և

[79] Մանրամասն տե՛ս Краснов М.А. Россия как полупрезидентская республика: проблема баланса полномочий // Государство и право, 2003, N 10, էջ 17:

հրաժարականի հարցեր լուծելուց, նախագահում է կառավարության նիստերին և կարող է վերացնել վերջինիս որոշումները։[80]

Միևնույն ժամանակ, կառավարության գործունեությունը ղեկավարում է վարչապետը, որը կրում է պատասխանատվություն ազգային պաշտպանության համար և նույնպես նշանակումներ է կատարում քաղաքացիական և զինվորական պաշտոններում (հոդ. 21)։ Վարչապետի ղեկավարությամբ գործող կառավարությունն է որոշում և իրականացնում «ազգի քաղաքականությունը», կառավարության տնօրինության տակ են գտնվում վարչակազմն ու զինված ուժերը (հոդ. 20)։

Գործադիր իշխանության իրականացման ոլորտում մոտավորապես նույն պատկերն է եվրոպական և հետսոցիալիստական կիսանախագահական կառավարման մի շարք այլ երկրներում։ Սակայն հետխորհրդային կիսանախագահական կառավարման համակարգերն ունեն հետևյալ էական առանձնահատկությունը։ Այստեղ նախագահներն օժտված են գործադիր իշխանության ոլորտում ավելի լայն լիազորություններով։ Այսպես, Ռուսաստանի դաշնությունում նախագահն անմիջականորեն ղեկավարում է գործադիր իշխանության դաշնային մարմինների 25 տոկոսը, իսկ մնացած մասը ղեկավարում է միջնորդավորված ձևով[81] և հետևաբար՝ հիմքեր կան պնդելու, որ դաշնային մակարդակով Ռուսաստանում գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարությունը, որն իր հերթին ղեկավարվում է նախագահի կողմից։[82]

Գործադիր իշխանության այդպիսի «երկակի ենթակայության» կարգավիճակը, նախագահի և կառավարության ու վարչապետի իշխանական լիազորությունների հարաբերակցությունը բավարար հիմք են տվել՝ խոսելու կիսանախագահական կառավարման համակարգում գործադիր իշխանության դուալիստական բնույթի մասին։ Գործադիր իշխանությունն իրականացվում է կոլեգիալ գործադիր մարմնի և պետության գլխի միջև աշխատանքի յուրահատուկ բաժանման հիման վրա՝ վերջինիս գերակայության պայմաններում։ Գործադիր իշխանության դուալիզմի

[80] Տե՛ս Авдеев Д.А. Особенности российской модели формы правления // Государство и право, 2010, N 12, էջ 20։
[81] Տե՛ս Мещеряков А.Н. Конституционные способы воздействия Президента Российской Федерации на исполнительную власть и связанные с ними особенности российской формы правления // Конституционное и муниципальное право, 2005, N5, էջ 20։
[82] Տե՛ս Авдеев Д .А., նշված աշխ, էջ 15։

առանձնահատկությունը ոչ թե գործադիր իշխանության կոլեգիալ մարմնի և պետության գլխի միջև իրավասության սովորական բաժանումն է, այլ պետության գլխի հնարավորությունը՝ անմիջականորեն միջամտելու կառավարության գործունեությանը՝ օգտագործելով ենթակարգության, ենթակայության և պատասխանատվության լծակները: Մասնավորապես, նախագահելով կառավարության նիստերը՝ նախագահը կարող է որոշել (փոփոխել) գործադիր իշխանության բարձրագույն կոլեգիալ մարմնի քաղաքական կուրսը: Կառավարության ղեկավարի փաստացի դերը կախված է նախագահի քաղաքական մտածելակերպից և ամբիցիաներից:[83]

Սկզբունքորեն համաձայնվելով այդպիսի գնահատականների հետ՝ միևնույն ժամանակ արձանագրենք, որ նախագահի և կառավարության (նաև վարչապետի) փաստացի տեղն ու դերը գործադիր իշխանության համակարգում, նրանց փաստացի լիազորությունների հարաբերակցությունը մեծագույն չափով պայմանավորված են խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությամբ: Վերը նշված գնահատականները ճշմարիտ են այն պարագայում, երբ խորհրդարանական մեծամասնություն է կազմում նախագահի կուսակցությունը: Այդ դեպքում գործնականում վարչապետի դերը կարելի է բնորոշել որպես «գործադիր իշխանության ոլորտում նախագահի տեղակալ»: Հենց այդ իրավիճակներում վարչապետը, որին վերապահված է ընթացիկ կառավարում իրականացնելու դերը, երբեմն հանդես է գալիս «ծեծելու համար տղայի» դերում: Եթե ինչ-որ բան չի ստացվում, ապա պատճառը ոչ թե նախագահի քաղաքական կուրսն է, այլ այդ կուրսի վատ իրագործումը կառավարության կողմից:[84] Սակայն իրավիճակը տրամագծորեն փոփոխվում է այն դեպքում, երբ խորհրդարանական մեծամասնությունը պատկանում է նախագահական կուսակցությանն ընդդիմադիր քաղաքական ուժին (ուժերին), և նախագահը ստիպված ձևավորում է իրեն փաստորեն ընդդիմադիր կառավարություն: Այդ դեպքում խորհրդարանական մեծամասնության վրա հենվող և նախագահին ընդդիմադիր վարչապետին են անցնում գործադիր իշխանության

[83] Տե՛ս Кравец И.А. Формирование российского конституционализма (проблемы теории и практики). М.-Новосибирск 2002, էջ 53; Авдеев Д.А., նշված աշխ., էջ 19:
[84] Տե՛ս Страшун Б.А. Конституционное (государственное) право зарубежных стран. Т. 1-2, изд. 3-е. М., 1999, էջ 351:

իրական լծակները, իսկ նախագահը «կարող է հայտնվել «առանց բանակի գեներալի» դերում»:[85]

Խորհրդարանական և կիսանախագահական կառավարման ձևերի հիմնական հատկանիշների, ինչպես նաև դրանց առանձին մոդելների յուրահատկությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատելու քննարկվող կառավարման ձևերի արժանիքներն ու թերի կողմերը:

Տեսականորեն, խորհրդարանական կառավարումն ունի ժողովրդավարություն ապահովելու հզոր ներուժ: Բացի արդեն քննարկված դրական հատկանիշներից՝ կառավարման այս ձևի պայմաններում ինչպես օրենսդիր և գործադիր մարմինների կազմավորումը, այնպես էլ պետության գլխի ընտրության արդյունքները միանշանակորեն կախված են խորհրդարանական ընտրությունների արդյունքից: Այլ կերպ ասած՝ դրանք ձևավորվում են միաժամանակ և ժողովրդի մեկ կամարտահայտության արդյունքում: Այս հանգամանքն էականորեն նվազեցնում է քաղաքական և վարչական ռեսուրսների ազդեցությունն ընտրությունների արդյունքների վրա:[86]

Միևնույն ժամանակ պետք է նաև հաշվի առնել, որ կառավարման ցանկացած ձևի արդյունավետությունը և ժողովրդավարական ներուժի դրսևորման աստիճանը էականորեն պայմանավորված են տվյալ երկրում ձևավորված քաղաքական ուժերի հարաբերակցությամբ, պետության գլխի փաստացի դերով, հրապարակային իշխանության կազմակերպման սկզբունքներով, քաղաքական մշակույթի ու հասարակական իրավագիտակցության զարգացման մակարդակով, ինչպես նաև բազմաթիվ այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Յուրաքանչյուր կառավարման ձևի հակակշիռների և զսպումների համակարգը պետք է ձևավորվի հետադարձ հայացք գցելով այդ գործոնների վրա: Այդ գործոնների շարքում հատկապես պետք է առանձնացնել քաղաքական համակարգի, առաջին հերթին՝ կուսակցությունների կայացվածության աստիճանը: Վ. Ի. Գերյեի դիպուկ արտահայտությամբ՝ «պառլամենտարիզմը պետական իշխանության փոխանցումն է

[85] Տե՛ս Сахаров Н. А. Институт президентства в современном мире. М., 1994, էջ 27:
[86] Տե՛ս Ստեփանյան Վ., Հանրապետական կառավարման ժամանակակից ձևերի համեմատական վերլուծություն, էջ 31:

կուսակցություններին»:[87] Հետևաբար՝ պառլամենտարիզմի արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է կուսակցությունների՝ պետական իշխանություն իրականացնելու ունակությամբ:

Որոշակի կոնկրետ պայմաններում խորհրդարանական կառավարման առանձին հատկանիշներ կարող են բացասական դրսևորումներ ստանալ: Ասենք՝ կուսակցությունների բազմաթիվությունը և դրա հետևանքով աճող խորհրդարանական անկայունությունը պահանջում են ուժեղ գործադիր իշխանության ձևավորում և խորհրդարանի գործունեության ռացիոնալացում: Ժամանակակից պայմաններում ավելանում է սահմանադրական այն դրույթների քանակը, որոնք ուղղված են կառավարության անկայունությունը և խորհրդարանական բանավեճերում դեմագոգիան կանխելուն: Մասնավորապես՝ սահմանափակվում են խորհրդարանի նիստերի և նստաշրջանների պարբերականությունը ու տևողության ժամկետները, ապահովվում է կառավարության կողմից ներկայացվող հարցերի առաջնահերթ քննարկումը, սահմանափակվում են ուղղումներ առաջարկելու պատգամավորների հնարավորությունները, ուժեղանում է հանձնաժողովների նիստերում հարցերի քննարկման դերը և զուգահեռաբար կրճատվում է մշտական հանձնաժողովների քանակը:

Սովորաբար նախագահական կառավարման արժանիքների շարքին են դասում դրա կայունությունը և բարձր արդյունավետությունը, քանի որ նախագահը, ունենալով լայն լիազորություններ, մեծ չափով որոշում է պետության քաղաքականությունը, իսկ կառավարչական ներգործությունն ավելի նպատակաուղղված է, որովհետև բխում է կենտրոնից: Ինչպես նշում է Ա. Հարությունյանը, չնայած՝ ամերիկյան մոդելում նախագահն օժտված է լայն լիազորություններով, իշխանությունների տարանջատման սկզբունքի ուժով նա չի կարող դառնալ միանձնյա իշխանության աղբյուր: Այս ոլորտում նրան հակակշիռ են հանդիսանում օրենսդիր և դատական իշխանությունները: Միևնույն ժամանակ, Ա. Հարությունյանն արձանագրում է նաև կառավարման այս ձևի կարևոր բացասական հատկանիշները. «(...) պետք է ընդունել, որ (...) ամերիկյան մոդելը հղի է պետության

[87] Տե՛ս Герье В. И. О конституции и парламентаризме в России. М., 1906, էջ 26:

քաղաքական համակարգում օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հակադրության վտանգով, երբ նախագահը իրականացնում է իր քաղաքականությունը, իսկ խորհրդարանը իրականացնում է իր կուրսը»:[88] Ա. Հարությունյանն իրավացիորեն արձանագրում է, որ ժողովրդավարական կայացած ռեժիմի և հասուն քաղաքացիական հասարակության պայմաններում այդ հակադրությունից հիմնականում հաջողվում է խուսափել: Սակայն չկայացած ժողովրդավարության երկրները, ընդունելով ամերիկյան մոդելը, հաճախ հայտնվում են անարխիայի կամ բռնապետության հունում:[89] Նախագահական կառավարման հիմնական թերությունը մեկ անձի՝ նախագահի ձեռքերում իշխանության չափազանց մեծ կենտրոնացումն է: Այստեղից բխում է իշխանության չարաշահման վտանգը, ինչը հաճախ հանգեցնում է անհատի պաշտամունքի և նախագահական հանրապետության փոխակերպմանը սուպերնախագահականի, երբ ներկայացուցչական մարմինը կորցնում է իր նշանակությունը:[90]

Նախագահական կառավարման ձևի այսպիսի գնահատականները հիմք են տալիս պնդելու, որ նախագահական կառավարման ձևի որդեգրման նպատակահարմարությունն ու արդյունավետությունը նույնպես կախված են տվյալ պետությունում առկա կոնկրետ պայմաններից:

Կիսանախագահական կառավարման ձևի դրական հատկանիշներն առավել ցայտուն կերպով դրսևորվում են անցումային ժամանակաշրջաններում, մասնավորապես՝ դեռևս չկայացած քաղաքական համակարգի պայմաններում: Այս պայմաններում նախագահի ինստիտուտը և նախագահը ինքը կատարում են յուրահատուկ կայունացուցչի դեր: Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետության փորձը միանշանակորեն ապացուցում է անցումային (ճգնաժամային) իրավիճակներում կիսանախագահական կառավարման ձևի արդյունավետությունը, այդ թվում՝ քաղաքական համակարգի կայացման և ժողովրդավարության ինստիտուտների զարգացման ոլորտներում: Միևնույն ժամանակ, կիսանախագահական կառավարման տարբեր մոդելների համեմատական վերլուծությունը հիմք է տալիս արձանագրելու, որ կառավարման այդ ձևին հատուկ է բարձր ճկունությունը: Այն

[88] Տե՛ս Арутюнян А. Институт Президента Республики Армения, էջ 47-48:
[89] Տե՛ս նույն աշխ., էջ 48:
[90] Տե՛ս, օրինակ, Морозова Л.А. Теория государства и права, М., 2002, էջ 78:

կարող է կիրառվել տրամագծորեն հակադիր նպատակներով և հանգեցնել տրամագծորեն նույնքան հակադիր արդյունքների: Կիսանախագահական կառավարման մոդելի հիմնական թերությունը մեկ անձի մոտ իշխանության արտակարգ մեծ կենտրոնացումն է և դրանից բխող՝ իշխանության չարաշահման հնարավորությունը: Այս հանգամանքով են պայմանավորված այն իրարամերժ գնահատականները, որ տրվում են այդ կառավարման ձևին իրավաբանական գրականության մեջ:

Ուստի պետք է միանշանակորեն համաձայնվել Ի. Ա. Իլյինի այն դիրքորոշման հետ, որ յուրաքանչյուր ժողովուրդ և յուրաքանչյուր երկիր կենդանի անհատականություն է՝ իր յուրահատուկ տվյալներով, իր անկրկնելի պատմությամբ, հոգով և բնությամբ: Հենց այդ պատճառով յուրաքանչյուր ժողովուրդ հասնում է իր յուրահատուկ և անհատական պետության ձևին և սահմանադրությանը, որոնք համապատասխանում են իրեն և միայն իրեն:[91]

[91] Տե՛ս Ильин И.А. Почему мы верим в Россию. Соч. М., 2006, էջ 31:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՍԱՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

2.1. Հայաստանի Հանրապետության «հիբրիդային» կառավարման մոդելը

Անցյալ դարի 90-ական թվականներին բոլոր հետսոցիալիստական երկրներում առաջացավ կառավարման առկա մոդելներից («խորհրդային կառավարում»՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում և այսպես կոչված՝ «ժողովրդադեմոկրատական կառավարում»՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի՝ նախկինում սոցիալիստական պետություններում) ժողովրդավարության սկզբունքներին համապատասխանող կառավարման ձևերի անցնելու անհրաժեշտություն: Այդպիսի անհրաժեշտությունը պայմանավորված էր առկա կառավարման ձևերի մի շարք էական թերություններով, որոնք՝ ա) ոչ միայն չէին համապատասխանում, այլ ուղղակիորեն հակասում էին ժողովրդավարական կառավարման պահանջներին և բ) վերափոխվող հասարակության պայմաններում հետզհետե կորցնում էին արդյունավետությունը:

Սոցիալիստական երկրների պետական կառավարման համակարգերին հատուկ էին, մասնավորապես, հետևյալ բացասական բնութագրիչները՝

1) Իշխանությունների բաժանման և համեմատաբար ինքնություն ճյուղերի բացակայությունը, որի հետևանքով պետական իշխանությունը կրում էր միաձույլ բնույթ և կենտրոնացված էր մարդկանց փոքրաթիվ խմբի ձեռքերում:
2) Խորհրդային կառավարման համակարգում պետության գլխի պաշտոնի բացակայությունը: Ներկայացուցչական գործառույթները ձևականորեն իրականացնում էին Գերագույն խորհրդի նախագահը և Նախարարների խորհրդի նախագահը, իսկ պետական իշխանության բարձրագույն մարմինների աշխատանքների համակարգումը՝ «հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժի»՝ կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղարը: Բազմակուսակցական քաղաքական համակարգի ձևավորման և կոմունիստական կուսակցության «ղեկավար» դերի նվազման կամ չեզոքացման պայմաններում այդ գործառույթը «բաց էր մնում»:

3) Պրոֆեսիոնալ խորհրդարանի բացակայությունը և տարեկան 2 նստաշրջանների հրավիրումը՝ յուրաքանչյուրը 2-3 օր տևողությամբ: Այս պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել օրենքի գերակայության մասին, քանի որ հասարակական հարաբերությունների կարևորագույն ոլորտները կարգավորվում էին ոչ թե օրենքներով, այլ, որպես կանոն, Նախարարների խորհրդի և իշխող ու միակ կուսակցության կենտկոմի համատեղ որոշումներով:
4) Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների կարծր և միանշանակ կախվածությունը իշխող կուսակցական վերնախավի կամքից:

Ընդհանուր առմամբ պետք է նկատել, որ սոցիալիստական պետությունների կառավարման մոդելները (խորհրդային և ժողովրդադեմոկրատական) չէին կարող ապահովել պետության ինքնիշխանության ներքին բաղադրիչի՝ երկրի ներսում պետական իշխանության գերակայության սկզբունքի իրացումը: Ներքաղաքական կյանքում առկա էր մեկ այլ՝ կուսակցական իշխանություն, որն ուներ ակնհայտ գերակայություն պետական իշխանության նկատմամբ: Ուստի պետական կառավարման նոր՝ ժողովրդավարական մոդելների ներմուծման անհրաժեշտությունը չափազանց հրատապ էր:

Արևելյան Եվրոպայի պետություններում, որպես կանոն, անցում կատարվեց խորհրդարանական կառավարման, իսկ նորանկախ պետություններում հիմնականում ներմուծվեցին կիսանախագահական կառավարման տարաբնույթ մոդելներ:

Հայաստանի Հանրապետությունում նոր պետական կառավարման համակարգի անցնելու խնդիրն առաջին անգամ պաշտոնապես առաջադրվեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագրում: Մասնավորապես, Հռչակագրի 9-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում:[92] Սակայն Հռչակագիրը ոչ թե իրավական, այլ քաղաքական փաստաթուղթ է, իսկ նշված դրույթը ոչ թե արձանագրում էր իրական վիճակը, այլ ձևակերպում էր որոշակի նպատակ: Պահանջվեց անցումային որոշ ժամանակ՝ կառավարման նոր մոդելի ձևավորման և ներմուծման համար:

[92] Տե՛ս ՀՀԳԽՏ, 1990/16:

Երիտասարդ ժողովրդավարության այլ պետություններում կառավարման նոր ձևերի ներմուծումը նույնպես կատարվեց երկու փուլով: Առաջին՝ էվոլյուցիոն զարգացման փուլում խորհրդային տիպի սահմանադրություններում իրականացվում էին մասնակի փոփոխություններ, իսկ երկրորդ՝ հեղափոխական փուլում ընդունվեցին նոր սահմանադրություններ:

Առաջին փուլը, փաստորեն, բոլոր հետխորհրդային հանրապետություններում սկսվեց պետական անկախության մասին հռչակագրերի ընդունմամբ: Իրականացվող մասնակի բարեփոխումները վերաբերում էին պետության վերանվանմանը, հասարակական զարգացման սոցիալիստական մոդելը դեպի կապիտալիստական վերակողմնորոշելուն, մարդուն որպես բարձրագույն արժեք ճանաչելուն, իրավական պետության հայեցակարգի հաստատմանը, իրավունքի և օրենքի գերակայության ճանաչմանը, բազմակուսակցականության ամրագրմանը, սեփականության բազմազանության և սեփականության տարբեր ձևերի հավասար իրավական պաշտպանությանը:[93]

Այս առումով հիմնավորված է Ա. Հարությունյանի դիտարկումը, որ հետտոտալիտար ժամանակաշրջանում պետականության հաջորդական զարգացում հնարավոր չէ: Ամեն ինչ պետք է անել միանգամից: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության ձևավորման ռազմավարական ուղղությունը պետք է պահպանվի, ինչը, սակայն, բավականին բարդ է:[94] Ա. Հարությունյանի կողմից նշված հանգամանքն առավել ցայտուն արտահայտվեց Հայաստանի Հանրապետության առկա խորհրդային կառավարման համակարգի մասնակի կատարելագործման ժամանակ:

Կար ևս մեկ հանգամանք, որը խոչընդոտում էր պետական կառավարման նոր մոդելների ձևավորումը: Բանն այն է, որ փոփոխությունները պետք է կատարվեին խորհրդային, սոցիալիստական տիպի սահմանադրության շարունակվող գործողության և «դիմադրության» պայմաններում, երբ կառավարման առկա մոդելի ցանկացած փոփոխություն ինքնին առաջացնում էր գործող սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Մինչդեռ խորհրդարանի կողմից

[93] Մանրամասն տե՛ս Михалева Н. А. Конституционное законодательство стран СНГ на современном этапе (динамика развития) // Государство и право, 2004, N 9, էջ 73:
[94] Տե՛ս Арутюнян А. Конституционализм: проблемы постсоветской реальности. М., 2013, էջ 76:

սահմանադրական փոփոխությունները պետք է կատարվեին պատգամավորների ընդհանուր թվի ձայների որակյալ մեծամասնությամբ: Միակուսակցական խորհրդարանի պայմաններում այդ՝ առանց դժվարությունների իրագործելի խնդիրը մեծ դժվարություններ էր առաջացնում ձևավորվող բազմակուսակցականության ու ընդդիմության առկայության պայմաններում՝ դանդաղեցնելով իրականացվող բարեփոխումների տեմպերը:

Թվում էր, թե ստեղծված իրավիճակից կան պարզ ելքեր՝ անհապաղ ընդունել նոր սահմանադրություն կամ դադարեցնել խորհրդային սահմանադրության գործողությունը: Սակայն նոր սահմանադրության շուտափույթ ընդունումը հնարավոր չէր, քանի որ դեռևս մշուշոտ էին ձևավորվող պետականության զարգացման հեռանկարները: Հատկանշական է, որ հետխորհրդային երկրների սահմանադրություններն ընդունվեցին հիմնականում 1993-1995 թվականներին (Ռուսաստան՝ 1993 թ., Բելառուս, Մոլդովա, Տաջիկստան՝ 1994 թ., Հայաստան, Ադրբեջան, Վրաստան՝ 1995 թ., Ուկրաինա՝ 1996 թ.): Խորհրդային սահմանադրության գործողությունը նույնպես հնարավոր չէր դադարեցնել: Հասարակական հարաբերությունների կարևորագույն ոլորտները կարգավորվում էին սահմանադրական նորմերով, և սահմանադրության գործողության դադարեցումն անխուսափելիորեն կհագեցներ համապատասխան ոլորտների իրավական կարգավորման էական բացերի առաջացմանը: Սահմանադրական նորմերով ուղղակիորեն կարգավորվում էին, մասնավորապես, Գերագույն խորհրդի կազմավորման կարգն ու կառուցվածքը, ամրագրվում էին Գերագույն խորհրդի և դրա մարմինների լիազորությունները, կառավարության կարգավիճակի հիմունքները, դատական համակարգը և այլն:

Այս պայմաններում հետխորհրդային հանրապետությունները որդեգրեցին դասական մոտեցումը՝ գործող սահմանադրություններում կատարելով անհրաժեշտ փոփոխություններ: Սակայն այդպիսի դասական մոտեցումն արդյունավետ է միայն պետականության աստիճանական զարգացման փուլում: Անցումային, ճգնաժամային փուլում այդ մոտեցումը դանդաղեցնում էր իրականացվող բարեփոխումների

տեմպերը։ Ուստի 1990 թվականի դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետությունում որդեգրվեց խնդրի նկատմամբ սկզբունքորեն այլ մոտեցում։[95]

Ընդունվեց ««Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքը, որի համաձայն՝ «Մինչև Հայաստանի Հանրապետության սահմանադրության ընդունումը դադարեցվում է գործող սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին»։[96]

Սահմանադրական օրենքը չդադարեցրեց խորհրդային սահմանադրության գործողությունը և դրանով իսկ չստեղծեց բացեր սահմանադրական կարգավորման ոլորտում։ «Այդ օրենքը պարզապես զրկեց գործող սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժից, ավելի ճիշտ՝ սահմանադրությունը վերափոխեց այլընտրանքային իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ-իրավական ակտի։ Այն պահպանեց իր բարձրագույն իրավաբանական ուժը բոլոր նորմատիվ-իրավական ակտերի, այդ թվում՝ օրենքների նկատմամբ, բացառությամբ Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքների։ Վերջիններս իրենց հերթին գործող սահմանադրության նկատմամբ ստացան ավելի բարձր իրավաբանական ուժ»։[97]

Սահմանադրական օրենքի ընդունմամբ լեգալ հիմքեր և հնարավորություններ ստեղծվեցին պետական կառավարման նոր մոդելի առանձին տարրերի օրենսդրական ամրագրման համար։ Այդ գործընթացում կարևորագույն դեր ունեցավ «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքը,[98] որի միջոցով սահմանվեց ցանկացած ժողովրդավարական պետության համար պարտադիր՝ պետության գլխի պաշտոնը։

Միևնույն ժամանակ, օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց մի այնպիսի «հիբրիդային» կառավարման համակարգ, որը ներառում էր

---

[95] Մանրամասն տե՛ս Ստեփանյան Վ., Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում // Օրենք և իրականություն, 2003, N 16, էջ 1-2։
[96] ՀՀԳԽՏ, 1991/6
[97] Ստեփանյան Վ., նշված աշխ., էջ 2։
[98] Տե՛ս ՀՀԳԽՏ, 1991/15։

խորհրդային (սոցիալիստական), նախագահական և կիսանախագահական կառավարման ձևերին հատուկ տարրեր։

Օրենքի 1-ին հոդվածով սահմանվում էր. «Հայաստանի Հանրապետության նախագահը Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է Հանրապետության գործադիր իշխանությունը»։ Այս ձևակերպումը կարելի է համարել նախագահական հանրապետությունում նախագահի կարգավիճակի դասական սահմանում։ Նախագահը Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է (ինչը հատկանշական է պետության գլխի համար) և ղեկավարում է Հանրապետության գործադիր իշխանությունը։

Օրենքով ամրագրված էր նախագահի լիազորությունների մի այնպիսի «հիբրիդային» համակարգ, մասնավորապես՝ նախագահ-կառավարություն, նախագահ-խորհրդարան, խորհրդարան-կառավարություն հարաբերությունների ոլորտներում, որն անհնար է մեկնաբանել կառավարման որևէ հայտնի տարատեսակի համատեքստում։

Օրենքում անորոշ կերպով, ոչ հստակ էր սահմանված բարձրագույն գործադիր իշխանության համակարգը։ Այսպես, գլխավորելով Հանրապետության գործադիր իշխանությունը (հոդ. 1) և ղեկավարելով Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունը (հոդ. 8, կետ 7)՝ նախագահը միևնույն ժամանակ նշանակում և ազատում է կառավարության նախագահին, նրա համաձայնությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին, ընդունում է կառավարության հրաժարականը (հոդ. 8, կետ 6)։ Ավելին, Հայաստանի Հանրապետության նախագահի հետ ընտրվում էր նաև փոխնախագահը (հոդ. 10, մաս 1), որը նախագահի հանձնարարությամբ կատարում էր նրա առանձին լիազորությունները (հոդ. 10, մաս 4)։ Արդյունքում ստացվում է, որ գործադիր իշխանությունն ունի երեք ղեկավար՝ Հանրապետության նախագահ, Հանրապետության փոխնախագահ (որին նախագահը կարող է տալ հանձնարարություն՝ իրականացնելու որոշակի լիազորություններ նաև գործադիր իշխանության ոլորտում) և անորոշ կարգավիճակով կառավարության նախագահ (կառավարությունն ունի նախագահ, սակայն կառավարության գործունեությունը

ղեկավարում է ոչ թե կառավարության նախագահը, այլ Հանրապետության նախագահը կամ փոխնախագահը)։

Օրենքով ամրագրված՝ գործադիր իշխանության անհստակ համակարգը որոշակի հակասություններ է առաջացնում օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերություններում։ Այսպես, կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև։ Գերագույն խորհուրդը պատգամավորների ձայների պարզ մեծամասնությամբ Հանրապետության նախագահին կարող է առաջարկել վերանայել կառավարության, դրա նախագահի կամ որևէ անդամի նշանակման հարցը։ «Հանրապետության նախագահի կողմից իր ընդունած որոշումը պաշտպանելու դեպքում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով դադարեցնել նշված պաշտոնատար անձանց լիազորությունները» (հոդ. 8, կետ 6)։ Սակայն գործադիր իշխանությունը գլխավորող և կառավարության գործունեությունը ղեկավարող նախագահը և նաև գործադիր իշխանության ոլորտում նրա հանձնարարությունները կատարող փոխնախագահը կարող են պաշտոնանկ արվել միայն այն դեպքում, եթե մեղավոր են ճանաչվել հայրենիքին դավաճանելու, կաշառակերության կամ այլ հանցագործությունների կատարման մեջ (հոդ. 11, մաս 1)։ Իր հերթին, նախագահն օժտված չէ խորհրդարանն արձակելու լիազորությամբ այն դեպքում, երբ իր ղեկավարած կառավարությունը խորհրդարանական պատասխանատվության սուբյեկտ է։

Օրենսդիր և գործադիր իշխանությունների հարաբերությունները կարգավորող որոշ իրավադրույթներ ոչ միայն չէին համապատասխանում, այլև ուղղակիորեն հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրով որդեգրված իշխանությունների տարանջատման ժողովրդավարական սկզբունքին։ Այսպես, օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահի և փոխնախագահի պաշտոնները միաժամանակ թափուր մնալու դեպքում նախագահի պաշտոնը զբաղեցնում է Գերագույն խորհրդի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալը։ Դժվար չէ նկատել, որ նշված դեպքերում օրենսդիր և գործադիր իշխանության

բարձրագույն պաշտոնները կենտրոնանում են մեկ անձի ձեռքում, որն օժտված է նաև պետության գլխի լիազորություններով։

Իշխանությունների տարանջատման սկզբունքին հակասում էին նաև օրենքով Հանրապետության նախագահին և Գերագույն խորհրդին վերապահված՝ իրենց բնույթով դատական իշխանությանը հատուկ որոշ լիազորություններ։ Այսպես, 8-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ նախագահը «վերացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության առանձին նախարարությունների, Հայաստանի Հանրապետության պետական կոմիտեների, մյուս գերատեսչությունների, տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների այն որոշումները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումներին և իր հրամանագրերին»։ Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն. «Նախագահի այն հրամանագրերը և կարգադրությունները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը և օրենքներին, սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա վերացվում են Գերագույն խորհրդի կողմից»։ Արդյունքում ստացվում է, որ սահմանադրական դատարանի եզրակացությունները կրում էին զուտ խորհրդատվական բնույթ, իսկ վերջնական որոշումը կայացնում էր Գերագույն խորհուրդը։

Անկախության հանրաքվեից հետո՝ 1991 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունված «Անկախ պետականության սահմանադրական հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով պետական կառավարման համակարգում որևէ էական փոփոխություն չարձանագրվեց։

1991 թվականի նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին»[99] օրենքի 1-ին հոդվածով Գերագույն խորհուրդը բնութագրվեց որպես պետական մարմին, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ։ Այս փոփոխության սկզբունքային նշանակությունն ընդգծելու համար, նշենք որ դեռևս գործող ՀԽՍՀ սահմանադրության 98-րդ հոդվածով

[99] ՀՀԳԽՏ, 1991/22

Գերագույն խորհուրդը բնորոշվում էր որպես պետական իշխանության բարձրագույն մարմին, որը բացի սահմանադրությամբ իրեն ուղղակիորեն վերապահված լիազորություններից՝ կարող էր նաև քննարկել և լուծել հասարակական և պետական կյանքի ցանկացած կարևորագույն հարց։ Դրական կարելի է գնահատել նաև նույն հոդվածում ամրագրված իրավադրույթն այն մասին, որ Գերագույն խորհուրդը մշտապես գործող մարմին է։

Քննարկվող առաջին դրույթը համապատասխանում էր իշխանությունների տարանջատման սկզբունքին, իսկ երկրորդով որոշակի հիմք ստեղծվեց ապագայում պրոֆեսիոնալ խորհրդարանի ձևավորման համար։

Միևնույն ժամանակ պահպանվեցին և նույնիսկ ավելացվեցին խորհրդարանի՝ դատական իշխանության համար բնութագրական գործառույթները։ Բացի «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված լիազորությունից՝ Գերագույն խորհրդին վերապահվեցին նաև այլ «դատական գործառույթներ». Գերագույն խորհուրդը որոշում է կայացնում պատգամավորների լիազորությունները ճանաչելու կամ առանձին պատգամավորների ընտրություններն անվավեր ճանաչելու մասին (հոդ. 4, մաս 3), վերացնում է պատգամավորների շրջանային և հանրապետական ենթակայության քաղաքների քաղաքային խորհուրդների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող որոշումները (հոդ. 10, կետ 34)։

Այդպիսով, 1991 թվականի աշնանը Հայաստանի Հանրապետությունում քննարկվող օրենքների միջոցով ձևավորվեց և մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը պահպանվեց պետական կառավարման մի այնպիսի մոդել, որը կրում էր «հիբրիդային» բնույթ և տարբերվում էր հայտնի բոլոր կառավարման մոդելներից՝ ներառելով այդ մոդելներին բնորոշ ամենազանազան հատկանիշներ։ Այդ մոդելի համար հատկանշական էին միջհամակարգային (իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև) և ներհամակարգային (գործադիր և դատական իշխանության համակարգերում) բազմաթիվ հակասություններ։ Որոշ օրենսդրական լուծումներ ուղղակիորեն հակասում էին Անկախության հռչակագրում ամրագրված իշխանությունների տարանջատման սկզբունքին։ Իշխանության տարբեր թևերի միջև հարաբերությունները

հավասարակշռված չէին, ձևավորված չէր զսպումների և հակակշիռների շատ թե քիչ արդյունավետ մեխանիզմ։

Իհարկե, գործնականում իշխանությունների հստակ բաժանումը պահպանվում է միայն դասական նախագահական հանրապետություններում (ԱՄՆ)։ Խորհրդարանական կառավարման և խառը կառավարման հանրապետություններում այդպիսի հստակություն պահպանել հնարավոր չէ, և կարելի է խոսել միայն որոշակի սկզբունքի մասին։ Պետական մարմինների միջև գործառույթների և իրավասության բաշխման տարբերակները ձևավորվում են պատմականորեն։ Նրանք նույնը չեն, ասենք, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում։ Խնդիրն այն է, որ պետք է պահպանվեն իշխանությունների տարանջատման ելակետային կողմնորոշիչները։[100] Սակայն Հայաստանի Հանրապետության անցումային շրջանի կառավարման մոդելում այդ սկզբունքը միշտ չէ, որ պահպանվում էր, իսկ առանձին օրենսդրական լուծումներ ուղղակիորեն հակասում էին այդ սկզբունքին։

Անցումային ժամանակաշրջանում գտնվող մի շարք այլ երկրներում նույնպես ձևավորվել էին պետական կառավարման «հիբրիդային» ձևեր։ Հետխորհրդային երկրների փորձն, ընդհանրապես ապացուցում է, որ անցումային ժամանակաշրջանի կառավարման ձևը զուրկ է կայունությունից և հավասարակշռությունից։[101] Սակայն պետք է նաև արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում կառավարման այդ մոդելը գործեց բավականին արդյունավետորեն։ Հարց է առաջանում՝ որոնք են այդ՝ տեսականորեն անարդյունավետ մոդելի արդյունավետության պատճառները։

Նախ պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետության անցումային շրջանի կառավարման մոդելն առանձնանում էր հզոր, ավելի շուտ՝ ամերիկյան տիպի նախագահական իշխանությամբ։ Պետք է համաձայնվել Ա. Հարությունյանի այն դիտարկման հետ, որ անցումային շրջանի տրամաբանությունը պահանջում է միանձնյա ղեկավարություն, որն ունակ է համախմբել իշխանությունը, դարձնել այն շարժուն և գործունակ։ Այդ խնդիրը կարող է լուծել միայն նախագահը, որը ոչ թե

[100] Տե՛ս, օրինակ, Гаганова Н. А. Концепция разделения властей и идея субсидиарности. // Государство и право, 2003, N 3, էջ 88-91։
[101] Տե՛ս Чиркин В.Е. Основы сравнительного правоведения. М., 1997, էջ 117։

կզբաղվի անվերջանալի բանավեճերով, այլ կընդունի որոշումներ և կապահովի դրանց կատարումը։[102]

Գործադիր իշխանության ոլորտում ներհամակարգային հնարավոր հակասությունների չեզոքացմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1991 թվականի նախագահական ընտրություններից հետո կառավարության նախագահի պաշտոնակատար նշանակվեց Հանրապետության փոխնախագահը, ինչի արդյունքում բացառվեց փոխնախագահի և կառավարության նախագահի միջև միջանձնային հակասությունների վտանգը։ Որոշակի դրական դեր ունեցավ նաև այն հանգամանքը, որ խորհրդարանը կազմավորվել էր ղարաբաղյան շարժման հզոր ազդեցության տակ, ուստի օրենսդիր և գործադիր իշխանությունների քաղաքական նպատակները համընկնում էին։ Այս հանգամանքը հնարավորություն տվեց խուսափելու օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև այն հակասություններից, որոնցով հղի էին անկատար օրենսդրական լուծումները։ Իհարկե, այդպիսի իրավիճակի համար բնութագրական է ավտորիտարիզմի վտանգը. այս առումով՝ նախագահական իշխանությունն ինքնին վտանգավոր է։[103] Սակայն ինչպես նշում է Վ. Վ. Յարուզելսկին. «նախագահական համակարգը միշտ էլ վիճակախաղ է, և դրա գործունեությունը հսկայական չափով կախված է այդ պաշտոնում ընտրվածի անձնական հատկանիշներից»։[104]

2.2. Հայաստանի Հանրապետության նախագահակենտրոն կառավարման մոդելը

1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրությամբ որոշակի, առանձին դեպքերում՝ էական շտկումներով պահպանվեցին «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին», «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքներով, ինչպես նաև «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով ամրագրված պետական կառավարման ձևի սկզբունքային հատկանիշները։ Այդպիսի

[102] Տե՛ս Арутюнян А. Конституционализм: проблемы постсоветской реальности. М., 2013, էջ 69:
[103] Տե՛ս Арутюнян А, Конституционализм: проблемы постсоветской реальности., էջ 69-70:
[104] Մանրամասն տե՛ս Osiatynski W., A Note on General Wojciech Jaruzelski // EECR, 1994, Vol. 3, N 1, էջ 48:

«շտկումների» արդյունքում Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման մոդելն ավելի մեծ ընդհանրություններ ձեռք բերեց դասական՝ ֆրանսիական կիսանախագահական կառավարման մոդելի հետ, ինչն էլ բավարար հիմքեր է տալիս՝ այդ մոդելը արդեն որպես ոչ թե «հիբրիդային», այլ կիսանախագահական կառավարման մոդել գնահատելու համար։

Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի կողմից կիսանախագահական կառավարման ձևին նախապատվություն տալու պատճառները հիմնավորվել են սահմանադրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Վ. Ստեփանյանի կողմից։ Նա նշում է, որ ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի շրջանակներում նախապատրաստված Սահմանադրության առաջին նախագծում որդեգրված էր ամերիկյան տիպի նախագահական կառավարման ձև։ Սակայն այդ նախագիծը լայն շրջանառության մեջ չդրվեց նույնիսկ սահմանադրական հանձնաժողովի ներսում, քանի որ չէր կարող արդյունավետորեն գործել երկրում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում։ Նախագահական կառավարման ձևն առավել արդյունավետ է այն դեպքերում, երբ՝ ա) տնտեսությունը հիմնականում ապապետականացված է և բ) պետական կառուցվածքի ձևը դաշնային է։ Այդ պայմաններում գործադիր իշխանության լիազորությունների շրջանակն էականորեն սահմանափակվում է. խնդիրների մի մասը լուծում են հենց մասնավոր սեփականատերերը, իսկ մյուս մասը փոխանցվում է դաշնության սուբյեկտների գործադիր իշխանության մակարդակ։ Բացի դրանից՝ պետական կառուցվածքի դաշնային ձևն էականորեն չեզոքացնում է բռնապետության հաստատման վտանգը, ինչը բնորոշ է կառավարման նախագահական ձևին։

Պարզ էր նաև, որ գոյություն ունեցող քաղաքական պայմաններում կառավարման խորհրդարանական ձևի միջոցով նույնպես չէր կարող ապահովվել պետական իշխանության արդյունավետ իրականացում։ Խորհրդարանական կառավարման համակարգն արդյունավետ է գործում միայն այն ժամանակ, երբ գոյություն ունի կուսակցությունների կայուն համակարգ։ Հակառակ դեպքում հարատև կառավարական և խորհրդարանական ճգնաժամերն անխուսափելի են։

Ուստի, հեղինակի կարծիքով՝ կիսանախագահական կառավարման ձևը գոյություն ունեցող կոնկրետ պատմական պայմաններում գործնականում այլընտրանք չուներ։[105]

Վ. Պողոսյանի և Հ. Թովմասյանի կարծիքով՝ կիսանախագահական կառավարման մոդելի ընտրությունը պայմանավորված էր զուտ սուբյեկտիվ գործոններով։ Նրանք գտնում են, որ «Հայաստանում կառավարման համակարգի կիսանախագահական մոդելի ընդունումը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով։ 1991 թվականին արդեն գոյություն ուներ ուղղակիորեն ընտրված Հանրապետության Նախագահի պաշտոն, և իշխող վարչակազմը՝ Հանրապետության Նախագահի գլխավորությամբ շահագրգռված էր այդ պաշտոնի պահպանմամբ և ուժեղացմամբ։ Կառավարող մեծամասնության մտահոգությունը միայն այն էր, թե Հանրապետության Նախագահի ուժեղ դիրքի ամրագրման որ մոդելն է ավելի նախընտրելի (…) Կառավարող մեծամասնության ընտրությունը կանգ առավ հենց այս մոդելի վրա, քանի որ այն հնարավորություն էր տալիս ճգնաժամային իրավիճակներում հակամարտությունը միշտ լուծել Հանրապետության Նախագահի օգտին՝ պառլամենտի լուծարմամբ»։[106]

Գնահատելով այս երկու տրամագծորեն հակառակ տեսակետները՝ նախ պետք է ևս մեկ անգամ արձանագրել, որ կառավարման ձևի կամ կոնկրետ մոդելի ընտրությունը միշտ պայմանավորված է լինում բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, և ճիշտ չէ այդպիսի ընտրությունը բացատրել որևէ մեկ գործոնի ազդեցությամբ, մանավանդ՝ սուբյեկտիվ գործոնի։ Ուստի պետք է համաձայնվել Ա. Հարությունյանի դիրքորոշման հետ, ըստ որի՝ երկրում հզոր նախագահական իշխանության ամրագրումը պայմանավորված էր բազմաթիվ հանգամանքներով, ընդ որում՝ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ։[107] Հիմնավոր է նաև նույն հեղինակի տեսակետը, որ նախագահական իշխանության հզորացումը ունի նաև դրական կողմեր, քանի որ հասարակական կարգի բարեփոխումների պայմաններում պետությունը դարձնում է

[105] Մանրամասն տե՛ս Стефанян В., Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն // Օրենք և իրականություն, 2003, N 19-20, էջ 1-2:
[106] Պողոսյան Վ., Թովմասյան Հ., Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005, էջ 15:
[107] Տե՛ս Арутюнян А. Институт президента Республики Армения. Ереван, 1996, էջ 103:

մոբիլ: Սակայն այդպիսի հզորացումը չպետք է հասցվի իշխանությունների տարանջատման սկզբունքին սպառնացող աստիճանի:[108]

Պետական կառավարման ձևի հիմնախնդիրների հետազոտման տեսանկյունից հատկանշական է Սահմանադրության կառուցվածքը: Պետական կառավարման համակարգի ինստիտուտներից նախ սահմանադրորեն ամրագրված են Նախագահի ինստիտուտի նորմերի (գլուխ 3), հետո հաջորդաբար՝ Ազգային ժողովի (գլուխ 4), կառավարության (գլուխ 5) և դատական իշխանության (գլուխ 6) ինստիտուտները կազմող նորմերը:

Կիսանախագահական կառավարման բազմաթիվ այլ երկրների սահմանադրությունների օրինակին հետևելով՝ ՀՀ Սահմանադրության մեջ չէր տրվում Նախագահի ինստիտուտի բնորոշումը: Դրա փոխարեն սահմանված էին Նախագահի գործառույթներն ու կոնկրետ լիազորությունները, իսկ առանձին դեպքերում՝ դրանց իրականացման կարգը:

Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հանրապետության Նախագահը Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է»: Ի հավելումն այս գործառույթների՝ Սահմանադրության 94-րդ հոդվածով ամրագրված է ՀՀ Նախագահի ևս մեկ գործառույթ՝ Նախագահը դատական մարմինների անկախություն երաշխավորն է:

Կարծում ենք, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովման գործառույթն ինքնին ենթադրում է, որ Նախագահի ինստիտուտը չի կարող հանդիսանալ իշխանությունների թևերից որևէ մեկի բաղադրատարր: Դա ուղղակիորեն կհակասեր Սահմանադրության 5-րդ հոդվածով հստակ ամրագրված և պետական իշխանության ամբողջ համակարգի համար հիմնարար նշանակություն ունեցող՝ իշխանությունների տարանջատման սկզբունքին: Եթե նախագահական իշխանությունը որևէ համակարգի տարր է, ապա ստացվում է, որ իշխանություն մեկ թևի ինստիտուտն ապահովում է իշխանության

[108] Տե՛ս նույն աշխ., էջ 101-102:

մյուս երկու թևերի բնականոն գործունեությունը և, ավելին, ապահովում է դատական իշխանության անկախությունը: Ելնելով այս հանգամանքից՝ չենք կարող համաձայնվել Գ. Ա. Շմավոնյանի այն քննադատական գնահատականի հետ, ըստ որի՝ ՀՀ Սահմանադրությանը բնորոշ է իշխանությունների տարանջատման համակարգում նախագահական ինստիտուտի բնույթի անհստակ և անհետևողական սահմանումը:[109]

Բանն այն է, որ նախագահի կարգավիճակի այդպիսի անհստակությունն ու որոշակի հակասականությունը կիսանախագահական կառավարման համակարգի բոլոր մոդելների ընդհանուր յուրահատկությունն է: Ինչպես նշում է Վ. Ե. Չիրկինը, ընդհանուր առմամբ՝ խառը կառավարման մոդելների սահմանադրություններում նախագահական իշխանության նորմատիվ կառուցակարգման եղանակները, նախագահի կարգավիճակի բնորոշումը և որակավորումը տարբեր են. մի դեպքում նախագահը բնորոշվում է որպես պետության գլուխ, մեկ այլ դեպքում օգտագործվում են ընդհանուր գործառութային ձևակերպումներ, երրորդ դեպքում առանց որևէ կարգավիճակային բնորոշման թվարկվում են նրա լիազորությունները: Սակայն, այսպես թե այնպես, նախագահական իշխանության իրավաբանական բնույթի մասին հարցը սահմանադրությունների մեծամասնությունում բաց է մնում, քանի որ այդ ինստիտուտն ուղղակիորեն չի կապվում իշխանության որևէ մեկ թևի հետ:[110]

Դա է պատճառը, որ իրավաբանական գրականության մեջ լայն տարածում են գտել կիսանախագահական կառավարման համակարգում նախագահական իշխանության՝ որպես իշխանության չորրորդ ճյուղի մասին պնդումները:[111] Մասնավորապես, Ա. Հարությունյանը գրում է. «(…) այն երկրներում, որտեղ նախագահը չի մտնում գործադիր իշխանության համակարգի մեջ, պետք է տարբերակել և նախագահական իշխանությունը կամ, ինչպես այն անվանում է Վ. Ե. Չիրկինը, արբիտրաժային իշխանությունը, որն ապահովում է, ինչպես դա նշվում է,

[109] Տե՛ս Шмавонян Г. А. Президентская власть и разделение властей в полупрезидентской республике: опыт Армении // Государство и право, 2000, N 1, էջ 87-88:
[110] Տե՛ս Чиркин В.Е. Президентская власть // Государство и право, 1997, N 5, էջ 15:
[111] Տե՛ս Ноздрачев А.Ф. Конституционные основы исполнительной власти в РФ // Исполнительная власть в РФ. Под. ред. Ноздрачева А.Ф., Тихомирова Ю.А. М.,1996, էջ 4-5; Окуньков Л.А. Президент Российской Федерации. Конституция и политическая практика. М.,1996, էջ 3-21; Авакьян С.А. Конституция России: природа, эволюция, современность. М., 1997, էջ 156-157 և այլն:

օրինակ, Ֆրանսիայի, Ռումինիայի, Հայաստանի սահմանադրական տեքստերում, հանրային իշխանությունների բնականոն գործունեությունը: Այդպիսի երկրներում նախագահական իշխանությունն իրավաբանորեն չի կարելի նույնացնել գործադիր իշխանության հետ: Սակայն միևնույն ժամանակ այդ իշխանության կարևորությունը (…) պահանջում է իշխանության նոր թևի՝ «նախագահական» իշխանության ճանաչում»:[112]

Այդպիսի դիրքորոշումը որոշ հեղինակների կողմից ենթարկվում է քննադատության: Մասնավորապես, Մ. Վ. Բագլայը համարում է, որ նախագահական իշխանությունը չի կարելի գնահատել որպես իշխանության առանձին թև, քանի որ ժողովրդավարական իրավական պետությունում միշտ գործում է իշխանությունների բաժանման սկզբունքը, ինչը ենթադրում է, որ ցանկացած պաշտոնատար անձի իշխանական իրավասություն վերագրվում է երեք (օրենսդիր, գործադիր կամ դատական) իշխանություններից մեկին. «Նույնիսկ այն երկրներում, որտեղ նա չի մտնում երեք իշխանություններից որևէ մեկի մեջ (Ֆրանսիա և այլն) կամ նրա կարգավիճակը սահմանադրության մեջ ընդհանրապես չի հիշատակվում (ԳԴՀ), իրավաբանական գիտությունն ու պրակտիկան նրան ճանաչում են գործադիր իշխանության ղեկավար, քանի որ ոչ մի պաշտոնատար անձ չի կարող ունենալ հիմնական գործառույթներ և իշխանական լիազորություններ՝ որևէ իշխանությունից դուրս»:[113] Պետք է նկատել, որ Բ. Մ. Բագլայի կողմից բերվող փաստարկները կրում են զուտ տեսական բնույթ և չեն արտացոլում գոյություն ունեցող քաղաքական-իրավական իրողությունները: Ուստի կարծում ենք, որ իշխանության երեք թևերից նախագահական իշխանության տարանջատումն ավելի հիմնավորված է:

Հայաստանի Հանրապետության այդ ժամանակաշրջանի կառավարման մոդելում նախագահական իշխանության այդպիսի յուրահատուկ իրավաբանական բնույթի պատճառով այդ ինստիտուտը հայտնվում է պետական իշխանության համակարգի կենտրոնում: Պետական իշխանության ամբողջ համակարգը, դրա կառուցվածքային տարրերը, պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերի առանձին կառույցների իրավական կարգավիճակի հիմունքները, դրանց կոնկրետ

[112] Արտյունյան Ա., նշված աշխ., էջ 23:
[113] Баглай М.В. Конституционное право РФ. М., 2007, էջ 388-389:

լիազորությունները պետք է որոշակիորեն համապատասխանեցվեին Նախագահի ինստիտուտին: Այդպիսի համապատասխանեցման անհրաժեշտությունը բխում էր նաև Նախագահի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու գործառույթից: Ակնհայտ է, որ իշխանության երեք թևերի բնականոն գործունեությունն ապահովելու համար Նախագահը պետք է ունենար իշխանության այդ երեք թևերի նկատմամբ ներգործության արդյունավետ իրավական լծակներ:

Միևնույն ժամանակ, այս ոլորտում կարևորագույն խնդիրներ է իշխանությունների երեք դասական ճյուղերի և նախագահական իշխանության միջև որոշակի հավասարակշռության պահպանումը, ինչպես նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների և նախագահական իշխանության միջև օպտիմալ զսպումների մեխանիզմների կիրառումը: Այդ երկու խնդիրների իրագործման որակից էր հիմնականում կախված Հայաստանի Հանրապետության կիսանախագահական կառավարման մոդելի արդյունավետությունը և ժողովրդավարության սկզբունքներին համապատասխանության աստիճանը:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ՀՀ Նախագահի լիազորությունները հստակ տարանջատվում են չորս խմբի՝ ա) որպես պետության գլխի լիազորություններ, բ) օրենսդիր իշխանության ոլորտի լիազորություններ, գ) գործադիր իշխանության ոլորտի լիազորություններ և դ) դատական իշխանության ոլորտի լիազորություններ:

Ինչ վերաբերում է ՀՀ Նախագահի՝ որպես պետության գլխի լիազորությունների համակարգին, ապա այստեղ նրան վերապահված էին, ըստ էության, կառավարման բոլոր ձևերում նախագահի համար բնութագրական լիազորություններ: Տարբեր կառավարման ձևերում նախագահի կարգավիճակի առանձնահատկությունները, որպես կանոն, ոչ թե լիազորությունների «ցանկերի» տարբերությունների մեջ են, այլ դրանց իրականացման կարգերի: Ուստի ՀՀ կիսանախագահական կառավարման քննարկվող մոդելում իշխանությունների տարանջատման որակի և պետական իշխանության ամբողջական համակարգի՝ արդյունավետության և ժողովրդավարության սկզբունքներին համապատասխանության աստիճանի մասին օբյեկտիվ գնահատական տալու համար նպատակահարմար է հիմնական

շեշտադրումը կատարել Նախագահ-Ազգային ժողով, Նախագահ-կառավարություն և Նախագահ-դատական իշխանություն հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունների վերլուծության վրա։

Կարծում ենք՝ Նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերությունների բնույթը էականորեն կախված է Նախագահի կողմից խորհրդարանն արձակելու լիազորության կոնկրետ իրավական ձևակերպումներից։ Որքան լայն՝ առանց սահմանափակումների է ձևակերպված այդ լիազորությունը, այնքան ուժեղանում է Նախագահի փաստացի դերը պետական իշխանության ամբողջ համակարգում, և ընդլայնվում են իշխանության բոլոր երեք թևերի վրա նրա գործնական ազդեցության շրջանակները։ Այդ միտումը հստակ արտահայտվում է, մասնավորապես, երիտասարդ ժողովրդավարության պետություններում, որտեղ սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը դեռևս շատ մեծ է։

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը «Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո կարող է արձակել Ազգային ժողովը (…) իր պաշտոնավարության վերջին վեց ամսվա ընթացքում չի կարող արձակել Ազգային ժողովը»։ Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված են Նախագահի այդ լիազորության որոշ այլ սահմանափակումներ։ Ազգային ժողովը չի կարող արձակվել ընտրությունից հետո մեկ տարվա ընթացքում, ռազմական դրության ժամանակ կամ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև՝ երբ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց է հարուցված։

Շարադրված սահմանադրաիրավական նորմերի համակարգային վերլուծությունը միանշանակ հանգեցնում է այն եզրակացությանը, որ սովորական՝ ոչ ճգնաժամային պայմաններում Նախագահի՝ Ազգային ժողովն արձակելու լիազորությունը գործնականում սահմանափակված էր միայն ժամկետային առումով (Նախագահի պաշտոնավարության վերջին վեց ամսվա և Ազգային ժողովի ընտրություններից հետո մեկ տարվա ընթացքում)։ Մնացած դեպքերում այն գործնականում կրում էր բացարձակ բնույթ։

Այսպես, մինչև Ազգային ժողովի արձակումը Նախագահը պետք է խորհրդակցեր Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, սակայն սա ընդամենը պրոցեսուալ (ընթացակարգային) նորմ է, որը Նախագահին պարտավորեցնում է միայն խորհրդակցել, և Նախագահն ըստ էության սահմանափակված չէ այդ պաշտոնյաների դիրքորոշումներով: Նա միայն պետք է խորհրդակցի, սակայն նրանց կարծիքը հաշվի առնելու իրավաբանական պարտավորություն չունի: Ինչ վերաբերում է որոշակի արտակարգ իրավիճակներում ամրագրված սահմանափակումներին, պետք է հաշվի առնել, որ Նախագահը գործնականում ուներ այդ սահմանափակումները «շրջանցելու» լայն հնարավորություններ: Բավական է միայն արձանագրել, որ հենց Նախագահն է հայտարարում ռազմական դրություն (հոդ. 55, կետ 13), սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում իրականացնում իրավիճակից թելադրվող միջոցառումներ (հոդ. 55, կետ 14): Ավելացնենք նաև, որ Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված էր Նախագահի պաշտոնանկության բավականին բարդ բազմափուլ ընթացակարգ: Հետևաբար, քննարկվող բոլոր իրավիճակներում Նախագահը հնարավորություններ ուներ մինչև այդպիսի իրավիճակների արձանագրումն արձակել Ազգային ժողովը՝ դրանով իսկ շրջանցելով իր լիազորությունների սահմանադրորեն ամրագրված սահմանափակումները:

Կարևոր է նաև արձանագրել, որ Նախագահ-Ազգային ժողով հարաբերությունների սահմանադրական կարգավորման այս ոլորտում առկա էր նաև էական բաց: Սահմանադրորեն կարգավորված չէին այն իրավիճակները, որոնք ստեղծվում են նոր կամ արդեն գործող կառավարությանն անվստահություն հայտնելու և դրանից հետո Նախագահի կողմից Ազգային ժողովն արձակելուց հետո: Այդ բացը լրացվեց միայն 1998 թվականին ընդունված «Կառավարության կազմավորման և հրաժարականի մասին» ՀՀ օրենքով, որի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ «հրաժարական տված կառավարության անդամները շարունակում

են իրենց գործունեությունը մինչև իրենց պաշտոններում նոր նշանակումներ կատարելը կամ նոր կառավարության կազմավորելը»։[114]

Պայմանականորեն, որպես Նախագահի՝ Ազգային ժողովն արձակելու լիազորությանը որոշակի հակակշիռ կարելի է դիտարկել Ազգային ժողովի կողմից Նախագահին պաշտոնանկ անելու մասին (հոդ. 57), Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին (հոդ. 59) որոշումներ ընդունելու լիազորությունները։ Այդ որոշումների ընդունման համար նույնպես նախատեսված էր բավականին բարդ ընթացակարգ, որին էական մասնակցություն ունեին նաև սահմանադրական դատարանը (պաշտոնանկության դեպքում) և կառավարությունը (լիազորությունների կատարման անհնարինության դեպքում)։ Սակայն դա արդարացված մոտեցում էր, քանի որ առնչվում էր առաջնային մանդատ ունեցող սուբյեկտի հետ։ Ուստի քննարկվող հարցերում Նախագահի և Ազգային ժողովի միջև լիազորությունների հավասարակշռվածությունը հետագա սահմանադրական բարեփոխումների ընթացքում պետք է ապահովվեր (և ապահովվեց) ոչ թե Ազգային ժողովի համապատասխան լիազորությունների ընդարձակման կամ դրանց իրականացման կարգի պարզեցման, այլ Նախագահի՝ Ազգային ժողովն արձակելու լիազորության սահմանափակման միջոցով։

Բոլոր մյուս ոլորտներում նույնպես Նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնական խնդիրը նրանց միջև լիազորությունների հավասարակշռվածության ապահովումն էր։ Այդ խնդրի լուծման հիմնական եղանակը զսպումների և հակակշիռների առավել արդյունավետ համակարգի ամրագրումն է։ Սակայն պայմանականորեն կարելի է առանձնացնել իրավական կարգավորման նաև մեկ այլ եղանակ, որը Նախագահի և խորհրդարանի լիազորությունների հավասարակշռվածության ապահովման նպատակով պետք է կիրառվի, մասնավորապես, որոշ պետական մարմինների ձևավորման և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նշանակման և ազատման ժամանակ. դա Նախագահի և Ազգային ժողովի միջև լիազորությունների ոչ խտրական բաշխումն է։

[114] ՀՀՊՏ 1998, 11.30/30 (63)

Զսպումների և հակակշիռների համակարգն առավել կարևորվում է այն դեպքերում, երբ միևնույն պետական իշխանական գործառույթի իրականացումը հնարավոր է միայն և՛ Ազգային ժողովի, և՛ Նախագահի կողմից որոշակի գործողությունների կատարման միջոցով: Իրավական կարգավորման այդ եղանակն առավել ցայտուն կերպով արտահայտվում է օրենսդրական գործընթացում: Այսպես, Սահմանադրության 62-րդ հոդվածին համապատասխան՝ Ազգային ժողովը իրականացնում է օրենսդիր իշխանությունը և կարող է ընդունել որոշումներ (որոնք ստորագրում է Ազգային ժողովի նախագահը) միայն Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով: Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Նախագահը «Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է այն: Այդ ժամկետում կարող է օրենքն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի կողմից վերստին ընդունված օրենքը»: Պետք է նկատել, որ տվյալ դեպքում սահմանադրորեն ամրագրված է Ազգային ժողովի և Հանրապետության Նախագահի միջև զսպումների և հակակշիռների բավականին հավասարակշռված համակարգ. ա) Ազգային ժողովը չունի հնարավորություն՝ արհեստականորեն խուսափելու Նախագահի հնարավոր վետոյից, քանի որ սպառիչ կերպով սահմանված են Ազգային ժողովի նախագահի կողմից ստորագրվող որոշումների ընդունման դեպքերը, բ) Նախագահն ունի միայն հաղթահարելի վետոյի իրավունք և դրա հաղթահարման դեպքում պարտավոր է ստորագրել և հրապարակել օրենքը: Սակայն, ինչպես կհիմնավորվի հետագա շարադրանքի ընթացքում, Հանրապետության Նախագահը ուներ նաև գործնականում լայն հնարավորություններ՝ միջնորդավորված կերպով ներազդելու Ազգային ժողովի օրենսդրական գործունեության վրա՝ կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի միջոցով:

Այս դրական գնահատականը, անգամ նվազագույն չափով, չի վերաբերում այն զսպումների և հակակշիռների մեխանիզմին, որոնք կիրառվում են կառավարության ձևավորման և նրա հրաժարականի գործընթացներում:

Այս տեսանկյունից վերլուծենք նախ կառավարության ձևավորման գործընթացը։ Համաձայն Սահմանադրության 55-հոդվածի 4-րդ կետի՝ Նախագահը նշանակում և ազատում է վարչապետին, վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության մյուս անդամներին։ Հետևաբար, կառավարությունը կազմավորվում է արտախորհրդարանական կարգով։ Ճիշտ է, 74-րդ հոդվածի ուժով կառավարությունը կազմավորվելուց հետո քսանօրյա ժամկետում Ազգային ժողովի հավանությանը պետք է ներկայացնի իր գործունեության ծրագիրը՝ Ազգային ժողովի նիստում դնելով իր վստահության հարցը, իսկ անվստահության մասին որոշում ընդունվելու դեպքում վարչապետը Հանրապետության Նախագահին դիմում է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին։ Սակայն Ազգային ժողովի այդ հակակշիռը գործնականում անարդյունավետ է, կամ, համենայնդեպս, դրա արդյունավետության մակարդակը ցածր է։

Չափազանց բարդացված է նույն հոդվածով ամրագրված արդեն գործող կառավարությանն անվստահություն հայտնելու գործընթացը, և որ ավելի վճռորոշ է՝ Ազգային ժողովի այս «զսպող» լիազորությունը չեզոքացվում է դրան փաստացիորեն հակադրվող՝ Նախագահի՝ Ազգային ժողովն արձակելու՝ միայն ժամկետային առումով և Ազգային ժողովի նախագահի ու վարչապետի հետ խորհրդակցելու պարտականությամբ սահմանափակված «հակակշիռ» լիազորությամբ։

Ազգային ժողովի և Նախագահի միջև լիազորությունների տարանջատման հիմնական ոլորտը կադրային քաղաքականության, մասնավորապես՝ բարձրագույն քաղաքացիական, զինվորական և այլ հատուկ, ինչպես նաև դատական իշխանության պաշտոններում նշանակումներն են։ Այս ոլորտում Ազգային ժողովի լիազորությունները չափազանց սահմանափակ էին. Ազգային ժողովը սեփական հայեցողությամբ, որպես կանոն, ձևավորում էր միայն իր մարմինները (Ազգային ժողովի նախագահ և տեղակալներ, հանձնաժողովներ և այլն)։ Սահմանադրությամբ նախատեսված էր միայն մեկ բացառություն. Ազգային ժողովը Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում էր սահմանադրական դատարանի անդամներ (ինն անդամներից՝ հինգին) և սահմանադրական դատարանի կազմից՝ սահմանադրական դատարանի նախագահ։

Մինչդեռ Հանրապետության Նախագահին այս ոլորտում վերապահված էին բազմաթիվ և էական լիազորություններ։ Սահմանադրության 55-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահը օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ է կատարում քաղաքացիական պաշտոններում (կետ 5), նշանակում է և ետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր դիվանագիտական ներկայացուցիչներին (կետ 8), վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազին (կետ 9), օժտված է լիազորություններով՝ դատավորների նշանակման բնագավառում (կետ 10-11), նշանակում է գլխավոր դատախազի տեղակալներին և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին (կետ 11), հանդիսանալով զինված ուժերի գլխավոր հրամանատար, նշանակում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը (կետ 12)։

Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի միջև փոխհամաձայնության հիման վրա որոշումների ընդունման միակ դեպքն ամրագրված էր Սահմանադրության 83-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է կենտրոնական բանկի նախագահ և նրա տեղակալ։

Նախագահը, որպես կանոն, սեփական հայեցողությամբ կամ արտախորհրդարանական այլ կարգով (վարչապետի ներկայացմամբ) ոչ միայն նշանակումներ էր կատարում կարևորագույն պաշտոններում, այլ նաև նույն կերպ ազատում էր համապատասխան պաշտոններից։

Վերը նշվածը, կարծում ենք, հիմք է տալիս արձանագրելու, որ ՀՀ կիսանախագահական կառավարման մոդելում Նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունների բոլոր հիմնական ոլորտներում հավասարակշռությունը խախտված էր։ Հանրապետության Նախագահին վերապահված լիազորությունները նրան Ազգային ժողովի վրա ներգործելու լայն հնարավորություններ էին տալիս՝ վերջինիս մոտ համապատասխան զսպումների բացակայության կամ անարդյունավետության պայմաններում։

Վերլուծենք Նախագահ-կառավարություն փոխհարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունները։ Ինչպես

արդեն նշել ենք, կառավարության ձևավորման և հրաժարականի գործընթացներում Հանրապետության Նախագահի վճռորոշ դերը որևէ կասկած չի հարուցում: Գործնականում Նախագահին վերապահված էին այնպիսի լիազորություններ, որոնք նրան հնարավորություն էին ընձեռնում ցանկության դեպքում ընդհանրապես անտեսելու այդ հարցերում Ազգային ժողովի դիրքորոշումները:

Նույնն է իրավիճակը նաև կառավարության կողմից իր գործառույթների իրականացման բնագավառում:

Գործադիր իշխանության իրականացման ոլորտում Նախագահի և կառավարության դերը բացահայտելու համար անհրաժեշտ է համակարգային վերլուծության ենթարկել այդ ոլորտը կարգավորող հետևյալ փոխկապակցված սահմանադրական դրույթները. ա) «(…) Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով» (հոդ. 85), բ) «Կառավարության նիստերը հրավիրում և վարում է Հանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը: Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, վավերացնում՝ Հանրապետության Նախագահը» (հոդ. 86), գ) «Վարչապետը ղեկավարում է կառավարության ընթացիկ գործունեությունը և համակարգում է նախարարների աշխատանքը» (հոդ. 87):

Արդեն այն հանգամանքը, որ Հանրապետության Նախագահն էր սահմանում կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը, նրան տալիս էր կառավարության ամբողջ քաղաքականության որոշման և իրագործման վրա ներազդելու շատ արդյունավետ լծակներ: Այսպես, «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» Հանրապետության Նախագահի 1995 թվականի հուլիսի 25-ի հրամանագրով սահմանված կարգի 15-րդ կետի համաձայն՝ «Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնում են Կառավարության անդամները»:[115] Գործնականում որևէ իրավական խոչընդոտ գոյություն չուներ՝ սահմանելու համար, որ կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնում են ոչ թե կառավարության անդամները, այլ Նախագահի

[115] ՀՀԱԺՏ 1995 / 1-2

աշխատակազմի ղեկավարը, և այդ դեպքում կառավարության քաղաքականության ու գործունեության բովանդակության մշակման կենտրոնը կտեղափոխվեր Հանրապետության Նախագահի աշխատակազմ: Այստեղ նույնպես, մյուս շատ դեպքերի նման, կիսանախագահական կառավարման մոդելի գործունեության առանձնահատկությունները մեծ չափով պայմանավորված էին սուբյեկտիվ գործոնով՝ Հանրապետության Նախագահի անձնական հատկանիշներով: Հանրապետության Նախագահը կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու միջոցով հնարավորություն ուներ ներազդելու կառավարության քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների վրա:

Սակայն գործնականում Նախագահի հրամանագրով ոչ միայն հաստատվում ու փոփոխության էր ենթարկվում կառավարության կառուցվածքը և սահմանվում էին կառավարության գործունեության բովանդակությունը կանխորոշող ընթացակարգային նորմեր, այլև ամրագրվում էին վարչապետի, կառավարության անդամների, ինչպես նաև կառավարության կառուցվածքի մեջ չմտնող գործադիր իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց գործառույթներ և լիազորություններ. սահմանվում էին դրանց իրավական կարգավիճակները:

Այսպես, Կարգի 2-րդ կետով սահմանված էին նախարարների գործառույթները. ղեկավարում են համապատասխան նախարարությունները կամ համակարգում են պետական կառավարման առանձին բնագավառների գործունեությունը: 3-րդ կետի համաձայն՝ Կարգը «սահմանում է Կառավարության գործունեության կազմակերպման (...) բնագավառում Կառավարության և Վարչապետի իրավունքների սահմանազատման և դրանց առնչությամբ ծագած մյուս հարաբերությունների կարգավորման հիմունքները»:

Կարգի 73-րդ կետով վարչապետին վերապահված էին մի շարք կոնկրետ՝ ոչ ընթացակարգային բնույթի լիազորություններ՝ ա) նախարարությունների, պետական կառավարման մյուս հանրապետական մարմինների կանոնադրությունների, կառուցվածքի, նախարարությունների կոլեգիաների կազմի և կենտրոնական ապարատի թվաքանակի հաստատում, բ) կառավարության պահուստային ֆոնդի օգտագործում, գ) նախարարների տեղակալների, կառավարության կառուցվածքի մեջ

չընդգրկված պետական կառավարման հանրապետական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների նշանակում և այլն։

Ավելին, Կարգի 46-րդ կետով («Վարչապետը հրավիրում և վարում է Կառավարության հերթական և արտահերթ նիստերը») Հանրապետության Նախագահին իր սահմանադրական լիազորությունը (հոդ. 86) ըստ էության վերալիազորել էր վարչապետին։ Վարչապետը Հանրապետության Նախագահի հրամանագրով ստացավ լիազորություն, որը Սահմանադրությամբ վերապահված էր հենց Հանրապետության Նախագահին։ Միայն այս հանգամանքը ակնառու կերպով ցույց է տալիս Նախագահի կողմից կառավարության գործունեության կարգը սահմանելու լիազորության իրականացման հսկայական ռեսուրսները՝ կառավարության ամբողջ գործունեության վրա ներգործելու առումով։

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ գործադիր իշխանության իրականացման բնագավառում հարաբերությունների կարգավորմանն ուղղված սահմանադրական նորմերի հակիրճ և ոչ ամբողջական ձևակերպումների հետևանքով այդ հարաբերությունների կարգավորումը հիմնականում իրականացվում էր Հանրապետության Նախագահի հրամանագրով, և Հանրապետության Նախագահը ուներ սեփական հայեցողությամբ գործադիր իշխանության ոլորտի կարևորագույն հարաբերությունները կարգավորելու լայն հնարավորություններ։

Կիսանախագահական կառավարման կոնկրետ մոդելների առանձնահատկություններն էականորեն պայմանավորված են նաև կառավարության կողմից որոշումների ընդունման կարգով։ Այդ մոդելների մեծամասնությունում՝ ներառյալ ՀՀ կիսանախագահական կառավարման մոդելը, կառավարությունը գործադիր իշխանության կոլեգիալ մարմին է, որի գործառույթներն իրականացվում են առաջին հերթին կոլեկտիվ որոշումների ընդունման ձևով։ Կարևոր է հաշվի առնել, որ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված չէին կառավարության նիստերում քննարկվող հարցերի շրջանակը և այդ հարցերի քննարկման արդյունքում ընդունվող որոշումների իրավաբանական բնույթը։

Քննարկվող հարցերի շրջանակը հստակեցված էր Հանրապետության Նախագահի 1995 թվականի հուլիսի 27-ի հրամանագրի 16-րդ կետով, որով նախ տարբերակվում էին երկու տիպի քննարկվող հարցեր՝ օրենսդրական և

ենթաօրենսդրական լուծում պահանջող և չպահանջող հարցեր: Նույն կետով տրվում էին նաև կառավարության քննարկմանը ենթակա օրենսդրական և ենթաօրենսդրական լուծումներ պահանջող հարցերի ներկայացման ձևերը. Նախագահի իրավասության հարցերով՝ հրամանագրերի կամ կարգադրությունների ձևով, Կառավարության և վարչապետի իրավասության հարցերով՝ համապատասխանաբար Կառավարության որոշման և վարչապետի որոշման նախագծերի ձևով, Ազգային ժողովում Կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման հարցերով՝ համապատասխան օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերի ձևով:

Օրենսդրական և ենթաօրենսդրական լուծում չպահանջող հարցերը կառավարության քննարկմանը կարող էին ներկայացվել հաշվետվությունների, զեկուցագրերի, առաջարկությունների և գործնականում ընդունված և օրենսդրության պահանջներին չհակասող այլ ձևերով:

Կարգի 53-րդ կետի համաձայն՝ օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կառավարությունն ընդունում է որոշումներ: Այստեղից բխում է այն եզրահանգումը, որ կառավարության նիստերում կարող են ընդունվել նորմատիվ իրավական ակտեր (կառավարության որոշումներ), կարող է հավանություն տրվել այլ մարմինների կողմից ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերի (Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, ինչպես նաև օրենքների և Ազգային ժողովի որոշումների) նախագծերին, ինչպես նաև կարող են ընդունվել անհատական իրավական ակտեր և նույնիսկ քաղաքական կամ այլ բնույթի ոչ իրավական ակտեր: Դրանք բոլորը վավերացվում են Հանրապետության Նախագահի կողմից, որի արդյունքում ձևավորվում է այնպիսի մի իրավիճակ, որում կառավարության որևէ որոշում (այդ թվում՝ նախարարների և գործադիր իշխանության այլ հանրապետական մարմինների ղեկավարների հաշվետվությունները, կառավարության կողմից ցանկացած զեկուցագրի կամ առաջարկի կապակցությամբ ընդունված կառավարության որոշումները) առանց Հանրապետության Նախագահի վավերացման իրավաբանական ուժ չի կարող ստանալ:

Այդ որոշումների շարքում հատկապես կարևորվում են կառավարության՝ Նախագահի կողմից վավերացվող այն որոշումները, որոնք ընդունվում են օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերի ձևով ներկայացված հարցերի քննարկման արդյունքում: Այս տիպի որոշումների վավերացման լիազորությունը Հանրապետության Նախագահի համար Ազգային ժողովի օրենսդրական քաղաքականության վրա ներգործելու լրացուցիչ, միջնորդավորված լծակ էր:

Բանն այն է, որ Սահմանադրության 75-րդ հոդվածում կառավարության օրենսդրական լիազորության ձևակերպման մեջ տեղ էին գտել մի շարք լրացուցիչ իրավազորություններ, որոնք «օրենսդրական նախաձեռնություն» հասկացության պարտադիր տարրեր չեն:

Իրավաբանական գրականության մեջ հաճախ տրվում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի այնպիսի բնորոշում, որը լրիվությամբ չի արտահայտում այդ իրավունքի բովանդակությունը: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագրքում ձևակերպված է այդ հասկացության հետևյալ սահմանումը. «Օրենսդրական նախաձեռնության իրավունքը նշանակում է Ազգային ժողովի քննարկմանը օրինագիծ ներկայացնելու իրավունք»:[116] Ակնհայտ է, որ այս բնորոշումը չի համապատասխանում «չկա իրավունք՝ առանց պարտականության և պարտականություն՝ առանց իրավունքի» դասական իրավաբանական աքսիոմային:

Բովանդակային առումով ավելի ճիշտ է այն մոտեցումը, որի համաձայն՝ «Օրենսդրական նախաձեռնությունն օրենքի նախագծի առաջադրում է ՀՀ բարձրագույն օրենսդրական մարմնի քննարկմանը: Օրենսդրական նախաձեռնության իրավունքը ենթադրում է, որ նրա սուբյեկտների կողմից ներկայացվող օրենքի նախագծերը ՀՀ Ազգային ժողովի կողմից ենթակա են պարտադիր քննարկման, սակայն ոչ պարտադիր ընդունման համար»:[117]

Սահմանադրության 75-րդ հոդվածով կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքին ավելացված են մի շարք կարևոր իրավազորություններ: Մասնավորապես, կառավարությունը սահմանում է իր

[116] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, 2012, էջ 614:
[117] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 741-742:

ներկայացրած օրենքների քննարկման հաջորդականությունը և կարող է պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն իր համար ընդունելի ուղղումներով, իր ներկայացրած օրենքի նախագծի վերաբերյալ կարող է դնել իր վստահության հարցը, և եթե Ազգային ժողովը չի ընդունում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում, ապա վերջինիս ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված: Բացի դրանից՝ կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում և քվեարկության է դրվում մեկամսյա ժամկետում: Պետության եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքի նախագիծն Ազգային ժողովը քննարկում է միայն կառավարության եզրակացությամբ:

Կառավարության՝ Ազգային ժողովի օրենսդրական գործունեության վրա ներգործելու այս լծակները Հանրապետության Նախագահի կողմից կառավարության համապատասխան որոշումները վավերացնելու լիազորության ուժով՝ միջնորդավորված ձևով, փաստացիորեն վերածվում էին Նախագահի լծակների:

Այդպիսով, կառավարության ձևավորման և հրաժարականի կարգը, ինչպես նաև կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանող իրավադրույթների համակարգային վերլուծության արդյունքներով կարելի է հանգել այն ընդհանուր եզրակացությանը, որ Հայաստանի Հանրապետության կիսանախագահական կառավարման մոդելը գործադիր իշխանության գործառույթների բնագավառում ավելի շատ ընդհանրություններ ուներ ամերիկյան տիպի նախագահական կառավարման մոդելի, քան դասական կիսանախագահական կառավարման մոդելների հետ: Այդ ընդհանրություններն են Նախագահի կողմից սեփական հայեցողությամբ կառավարության ձևավորումը և հրաժարականի հարցի լուծումը, կառավարության գործունեության կարգի սահմանումը, կառավարության կողմից ընդունվող որոշումների նկատմամբ այնպիսի մանրակրկիտ վերահսկողությունը, որի արդյունքում կառավարության ցանկացած որոշում ավելի շատ Հանրապետության Նախագահի, քան կառավարության և վարչապետի կամարտահայտություն է հանդիսանում:

Ամեն դեպքում, կառավարության կողմից ընդունվող որևէ որոշում չէր կարող իրավաբանական ուժ ստանալ՝ առանց Հանրապետության Նախագահի կողմից

վավերացվելու: Ուստի հիմնավոր է Ա. Հարությունյանի այն դիտարկումը, որ հետտոտալիտար հասարակությունում, որտեղ ժողովրդավարական ինստիտուտները դեռևս հասունացած չեն, ըստ էության (ոչ ֆորմալ իրավաբանորեն, այլ փաստացիորեն), նախագահը ղեկավարում է գործադիր իշխանությունը: Սակայն ի լրումն դրա, ի տարբերություն նախագահական մոդելի՝ կիսանախագահական կառավարման այս մոդելը նախագահին տալիս է նաև որոշ լրացուցիչ լիազորություններ (խորհրդարանի արձակում և այլն), որոնք տրամաբանորեն բխում են նրա գործառույթից՝ որպես արբիտր, և որոշակի չափով այդ ինստիտուտը երեք իշխանություններից վեր է:[118]

Իհարկե, այստեղ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որի մասին արդեն նշել էինք սույն աշխատանքի առաջին գլխի երկրորդ բաժնում: Ցանկացած կիսանախագահական կառավարման մոդելում նախագահ-կառավարություն գործնական հարաբերությունների բնույթը մեծ չափով կախված է խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունից: Եթե խորհրդարանական մեծամասնությունը սատարում է Նախագահին, ապա երկրի սահմանադրական հակակշիռների և զսպումների համակարգի տրամաբանությունը մոտենում է նախագահական հանրապետության տրամաբանությանը: Այն դեպքում, երբ խորհրդարանական մեծամասնությունն ընդդիմադիր է նախագահին, սահմանադրական զսպումների և հակակշիռների համակարգի տրամաբանությունը մոտենում է խորհրդարանական հանրապետության տրամաբանությանը: Նախագահական և խորհրդարանական կառավարման ձևերի հենց այդպիսի զուգորդում էլ իրենից ներկայացնում է կիսանախագահական մոդելը:[119]

Հայաստանի Հանրապետության կիսանախագահական կառավարման մոդելի ուսումնասիրությունը չի համապատասխանի գիտական հետազոտման լրիվության պահանջներին՝ առանց Նախագահ-դատական իշխանություն հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների բացահայտման:

[118] Տե՛ս Арутюнян А., նշված աշխ., էջ 105:
[119] Տե՛ս Dominique Chagnollaud de Sabouret, Droit constitutionnel contemporain, Dalloz, Paris, 2015, էջ 148-157; Marcel Morabito, Histoire constitutionnelle de la France, Lextenso editions, LGDJ, Issy-les-Moulineaux, 2014, էջ 461-465:

Մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը դատական իշխանության կառուցվածքը, կազմավորման և գործունեության կարգերն էական փոփոխությունների չէին ենթարկվել: Այդ բնագավառում հիմնականում պահպանվել էին դեռևս խորհրդային ժամանակաշրջանի իրավակարգավորումները:

Ավելին, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վերացավ այդ համակարգի կարևոր օղակներից մեկը՝ ԽՍՀՄ Գերագույն դատարանը, որի արդյունքում Հանրապետությունում գործում էր երկօղակ դատական համակարգ՝ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարաններ և ՀՀ Գերագույն դատարան, որին վերապահված էին մեկ դատական ատյանում միմյանց հետ անհամատեղելի դատական գործառույթներ: Գերագույն դատարանը գործեր էր քննում վերաքննության և վճռաբեկության կարգով, իսկ որոշ դեպքերում հանդես էր գալիս որպես առաջին ատյանի դատարան:

Սահմանադրության ընդունումից հետո Հանրապետությունում ստեղծվեց նոր՝ արդարադատության պահանջներին ավելի համապատասխանող դատական համակարգ՝ առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ և ՀՀ վճռաբեկ դատարան: Դրանով իսկ դատական համակարգի կառուցվածքը համապատասխանեցվեց դատական գործառույթներին՝ քննություն առաջին ատյանում, վերաքննություն և գործերի վերանայում վճռաբեկության կարգով: Նախատեսվեց նաև ստեղծել հատուկ իրավասության դատարանների համակարգ՝ տնտեսական, զինվորական և այլ դատարաններ: Այդպիսով իրականացվեց դատական իշխանության մարմինների էական արդիականացում:

Սակայն այս բնագավառի կարևորագույն խնդիրը՝ դատական իշխանության անկախության ապահովումը, որից և մեծ չափով կախված է կառավարման կոնկրետ մոդելի ընդհանուր գնահատականը, այդպես էլ չստացավ հետևողական լուծում:

Սահմանադրության 94-րդ հոդվածով դատական մարմինների անկախության երաշխավոր հռչակվեց Հանրապետության Նախագահը, որը գլխավորում էր արդարադատության խորհուրդը: Նույն հոդվածի համաձայն՝ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն էին: Դատական իշխանության անկախության ապահովումը միայն այս սահմանադրական դրույթների ուժով դառնում էր խնդրահարույց:

Նախ՝ ակնհայտ է, որ դատական իշխանության անկախությունը կարող է արդյունավետ կերպով երաշխավորվել ոչ թե պետական իշխանության համակարգի մեկ այլ ինստիտուտի կողմից, այլ հենց Սահմանադրությամբ և օրենքներով: Սահմանադրության 94-րդ հոդվածի այսպիսի կարգավորումը շեշտակի ուժեղացնում էր սուբյեկտիվ գործոնի՝ Հանրապետության Նախագահի անհատական հատկանիշների դերը դատական իշխանության անկախության ապահովման բնագավառում:

Դատական իշխանության անկախության երաշխավորման համար Հանրապետության Նախագահը պետք է օժտված լիներ համապատասխան իրավական գործիքներով՝ ներառյալ հենց այդ իշխանության նկատմամբ կիրառվող գործիքները. իսկ այդ գործիքները տեսականորեն կարող էին օգտագործվել տրամաբանորեն հակադիր՝ ինչպես դատական իշխանության անկախության երաշխավորման, այնպես էլ այդ համակարգը նեղ եսասիրական շահերին (անձնական, խմբակային և այլն) և սեփական ինքնակամությանը ենթարկելու նպատակներով:

Խնդրահարույց էր նաև տվյալ սահմանադրական հոդվածում զետեղված այն դրույթը, որի համաձայն՝ արդարադատության խորհրդի փոխնախագահներն էին հանդիսանում գործադիր իշխանության երկու ներկայացուցիչներ՝ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, ինչի արդյունքում արդարադատության խորհրդի ամբողջ «ղեկավար կազմը» բաղկացած էր դատական իշխանության համակարգից դուրս գտնվող պաշտոնյաներից: Այդպիսի վիճակը որոշ չափով մեղմացվում էր Սահմանադրության 95-րդ հոդվածի 7-րդ կետում ամրագրված դրույթով, որի համաձայն՝ դատավորին պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհրդի նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը, իսկ Հանրապետության Նախագահը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազն այդ նիստերին չէին մասնակցում: Սակայն սա ընդամենը «կիսալուծում» էր, քանի որ դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու հարցի քննարկման ժամանակ նիստը կարող էր վարել հենց այն սուբյեկտը, որին և

ներկայացվում էին համապատասխան առաջարկությունները, այն է՝ Հանրապետության Նախագահը։ Նիստին կարող էին մասնակցել (կամ նույնիսկ վարել) նաև գործադիր իշխանության նշված երկու պաշտոնյաները։

Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ Սահմանադրությամբ ամրագրված էին դատական իշխանության ոլորտը կարգավորող հակասական և ոչ հետևողական մոտեցումներ, որոնք հիմնված չէին հստակ ձևակերպված և միասնական հայեցակարգի վրա։

Հայաստանի կիսանախագահական կառավարման մոդելում ամբողջ դատական կորպուսը (բացառությամբ սահմանադրական դատարանի ինը անդամներից հինգի) նշանակվում էր Հանրապետության Նախագահի կողմից։ Նա նշանակում էր սահմանադրական դատարանի չորս անդամներ և նախագահ (հոդ. 55, կետ 10), արդարադատության խորհրդի առաջարկով, այսինքն՝ առանց խորհրդարանի մասնակցության, նշանակում էր վճռաբեկ դատարանի և նրա պալատների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահներին և դատավորներին (հոդ. 55, կետ 11)։

Հանրապետության Նախագահը ոչ միայն ձևավորում էր ամբողջ դատական կորպուսը, այլև կարող էր սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամների լիազորությունները կամ համաձայնություն տալ կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել նրան (հոդ. 55, կետ 11) և նույն գործողությունները արդարադատության խորհրդի առաջարկությամբ կատարել մյուս բոլոր դատավորների կապակցությամբ (հոդ. 55, կետ 11 և հոդ. 95, կետ 6)։ Եթե սահմանադրական դատարանի անդամի դեպքում այդ դատարանի եզրակացության անհրաժեշտությունը կարելի է դիտարկել որպես սահմանադրական դատարանի անդամին Հանրապետության Նախագահի կողմից հնարավոր կամայականությունից պաշտպանելու բավականին արդյունավետ երաշխիք, ապա մյուս դատավորների դեպքում սահմանադրորեն սահմանված կարգը վերը նշված պատճառներով չէր կարող հանդիսանալ իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոց։

Արդեն քննարկված հանգամանքներին ավելացնենք նաև այն, որ 95-րդ հոդվածի կարգավորումներով հենց Հանրապետության Նախագահը կամ նրան ըստ էության ենթակա գործադիր իշխանության ներկայացուցիչներից որևէ մեկը (արդարադատության նախարարը կամ գլխավոր դատախազը) պետք է վարեին արդարադատության խորհրդի այն նիստերը, որոնց ժամանակ որոշվում էր դատավորի նկատմամբ համապատասխան սանկցիա կիրառելու մասին Հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելու հարցը։

Ավելին, արդարադատության խորհրդի տասնչորս անդամ (որոնցից երկուսը՝ իրավաբան գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ) նշանակվում էին Հանրապետության Նախագահի կողմից։ Ճիշտ է, խորհրդի դատավոր անդամի թեկնածուներն առաջադրվում էին դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ, սակայն դատավորների ընդհանուր ժողովը յուրաքանչյուր տեղի համար առաջադրում էր երեք թեկնածու, և Հանրապետության Նախագահը ցանկալի անձանց ընտրելու բավականին լայն հնարավորություններ ուներ։ Ինչ վերաբերում է խորհրդի դատախազ անդամներին, դրանց թեկնածություններն առաջադրում էր Նախագահի կողմից նշանակված գլխավոր դատախազը։ Այդպիսով, արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում էին Հանրապետության Նախագահը, նրա կողմից պաշտոնում նշանակված գործադիր իշխանության երկու ներկայացուցիչներ՝ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը (ի պաշտոնե), և նրա կողմից նշանակված 14 այլ անդամներ։

Հատկապես հակասական էր արդարադատության խորհրդում Հանրապետության Նախագահի կարգավիճակը։ Ինչպես նշել էր հանրաճանաչ իրավաբան, պրոֆ. Վ. Նազարյանը, «Նախագահը՝ որպես արդարադատության խորհրդի նախագահ, մեկ ձեռքով ստորագրում է դատավորին նշանակելու առաջարկությունը, այնուհետև գնում է մեկ այլ սենյակ և մյուս ձեռքով, արդեն որպես Հանրապետության Նախագահ, ստորագրում է դատավորի նշանակման հրամանագիրը»։[120]

[120] Տե՛ս Պողոսյան Վ., Թովմասյան Հ., Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծ. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005, էջ 20։

Վերը նշվածը, կարծում ենք, բավարար հիմքեր է տալիս արձանագրելու, որ դատական իշխանության թևի հետ հարաբերությունների ոլորտում նույնպես Հանրապետության Նախագահին օժտված էր լայն լիազորություններով, որոնք հակակշռված չէին այլ մարմիններին (նախևառաջ՝ խորհրդարանին) վերապահված զսպումների մեխանիզմներով: Այս ոլորտում նույնպես անհիմն մեծ տեղ էր զբաղեցնում սուբյեկտիվ գործոնը՝ Հանրապետության Նախագահի անձնական հատկանիշները:

Ընդհանրացնելով ատենախոսության այս բաժնում շարադրված նյութը, իրավակարգավորումների և փաստացի իրավիճակների վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ 1995 թվականի Սահմանադրությամբ և դրա դրույթներին համապատասխան ձևավորված օրենսդրությամբ ամրագրված կիսանախագահական կառավարման մոդելում նախագահական իշխանությունը հանդիսանում էր իշխանության երեք թևերի համակարգից դուրս՝ հատուկ իշխանական ինստիտուտ, որը ծավալվում էր պետական իշխանության կազմակերպման և իրականացման բոլոր ուղղություններով՝ կառավարության կազմավորման և հրաժարականի, դրա կառուցվածքի և գործունեության կարգի սահմանման, գործադիր իշխանության իրականացման (այստեղ Նախագահին էր վերապահված գործադիր իշխանության կարևորագույն իրավազորությունների համալիր), նորմաստեղծ գործունեության և Ազգային ժողովի հետ հարաբերություններում, դատական համակարգի ձևավորման, պետական ապարատի կազմակերպման և գործունեության ոլորտներում և այլն:[121] Դրա հետ միասին, Հանրապետության Նախագահի լիազորությունները մյուս բոլոր իշխանությունների փոխհարաբերություններում հավասարակշռված չէին իշխանության մյուս թևերի կառույցներին վերապահված՝ Նախագահին «զսպող և հակակշռող» լիազորություններով:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ նույնն էր իրավիճակը նաև բոլոր մյուս հետխորհրդային կիսանախագահական հանրապետություններում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում: Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Հարությունյանը հետխորհրդային նախագահը՝ պետության գլուխը, գործնականում

[121] Տե՛ս Шмавонян Г.А. Президентская власть и разделение властей в полупрезидентской республике: опыт Армении // Государство и право, 2000, N 1, էջ 88:

ունի անսահմանափակ իշխանություն։[122] Հետխորհրդային հասարակություններում ստեղծում են նախագահական կամ կիսանախագահական համակարգեր, սակայն փաստացիորեն ստանում են սուպերնախագահական ռեժիմ, ստեղծում են խորհրդարանական համակարգ, ստանում խորհրդարանական մեծամասնության դիկտատուրա։ Հետևաբար անհրաժեշտ է գտնել նոր մեխանիզմներ, որոնք թույլ չեն տա զսպումների և հակակշիռների մեխանիզմից գլորվել դեպի գերակշռումների համակարգ։[123] Հատկանշական է, որ Մ. Ա. Կրասնովը կոնկրետ փաստերի վերլուծության հիման վրա գալիս է այն եզրակացությանը, որ բոլոր այլ կիսանախագահական հանրապետություններից Բելառուսում և Ռուսաստանի Դաշնությունում կառավարության ձևավորման ընթացքում նախագահին տրված է առավել լայն քաղաքական հայեցողության հնարավորություն։ Այդ երկրներում կառավարությունը սոսկ նախագահական իշխանության գործիք է և լրիվ կախված է վերջինից, այլ ոչ թե խորհրդարանում ուժերի հարաբերակցությունից։[124] Ուստի կարելի է պնդել, որ երիտասարդ ժողովրդավարության պետություններում կիսանախագահական կառավարման այդպիսի մոդելի ձևավորումն ավտորիտար քաղաքական ռեժիմից դեպի ժողովրդավարություն անցման պատմական գործընթացի անխուսափելի փուլ է, քանի դեռ չեն գտնվել Ա. Հարությունյանի կողմից նշված նոր մեխանիզմները։

Հատկանշական է, որ քննարկվող կառավարման հայաստանյան մոդելը որոշ հեղինակներ անվանում են «գերնախագահական»,[125] իսկ նույնանման ռուսաստանյան մոդելը գնահատվում է որպես «նախագահական գերիշխանություն»։[126]

Սակայն պետք է արձանագրել, որ հայաստանյան կառավարման քննարկվող մոդելը չի կարելի բնութագրել որպես սուպերնախագահական։ Գրականության մեջ առանձնացվում են սուպերնախագահական կառավարման մոդելների հետևյալ հատկանիշները. դրանք սովորաբար հաստատվում են զինվորական հեղաշրջումների արդյունքում, նախագահը իր լիազորություններն ստանում է ոչ լեգիտիմ եղանակով

[122] Տե՛ս Арутюнян А. Конституционализм: проблемы постсоветской реальности. М., 2013, էջ 103։
[123] Տե՛ս Նույն աշխ., էջ 104։
[124] Տե՛ս Краснов М.А. Россия как полупрезидентская республика: проблема баланса полномочий // Государство и право, 2003, N 10, էջ 17։
[125] Տե՛ս Арутюнян А. Институт президента Республики Армения, էջ 109։
[126] Տե՛ս Окуньков Л.А. Президент Российской Федерации. М., 1996, էջ 2։

(որպես հեղաշրջման առաջնորդ կամ խունտայի ղեկավար), նախագահն օժտվում է լայնածավալ լիազորություններով՝ օրենսդիր և դատական իշխանությունների կողմից չափազանց թույլ վերահսկողության պարագայում, նախագահի լիազորությունները իրացվում են հարատև արտակարգ դրության պայմաններում, որի ժամանակ վերացվում կամ էականորեն սահմանափակվում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պահպանության սահմանադրական երաշխիքները և իրականացվում են ընդդիմության դեմ զանգվածային բռնություններ։[127]

ՀՀ կիսանախագահական կառավարման քննարկվող մոդելին բնորոշ էր միայն նշված հատկանիշներից մեկը. նախագահն օժտված էր լայնածավալ լիազորություններով՝ օրենսդիր և դատական իշխանությունների կողմից չափազանց թույլ վերահսկողության պարագայում։ Այս առումով պետք է համաձայնվել Ժ. Ջհանգիրյանի այն դիտարկման հետ, որ Հայաստանի Նախագահի մի շարք իրավունքներ և լիազորություններ չունեն որևէ հակակշիռներ /իսկ դրանք պետք է լինեն՝ համաձայն զսպումների և հակակշիռների դասական մոդելի/։[128] Ուստի կարծում ենք, որ այդ մոդելն առավել ճիշտ կլիներ բնորոշել ոչ թե «սուպերնախագահական», այլ «նախագահակենտրոն» եզրույթով։ Կարծում ենք, որ սահմանադրություն ընդունելու հիմնական նպատակներից է, ինչպես նշում է Գ. Հարությունյանը, հասարակության քաղաքակիրթ ինքնակարգավորմանը նպաստելը, սակայն, ինչպես նշում է Ս. Բարտոլեն, հասարակության, իշխանության և մարդկանց հարաբերությունների պատմական զարգացումը կարող է բերել սահմանադրության իմաստի այնպիսի փոփոխությունների, որոնք հնարավոր չէր կանխատեսել այն ուժի մեջ մտնելու պահին։[129] Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ժամանակ առ ժամանակ կատարել սահմանդրական փոփոխություններ։

[127] Տե՛ս Конституционное право зарубежных стран. М., 2008, էջ 149։
[128] Տե՛ս Ж. Джангирян. Разделение властей в Республике Армения: конституционная модель и практика. М., 2003, с. 94.
[129] Տե՛ս Harutyunyan G. Constitution and constitutionalism in the context of constitutional culture of the new millennium, էջ 63; Bartole S. Conditionality and living constitution, էջ 170 // New millennium constitutionalism: paradigms of reality and challenges, Yerevan, NJAR, 2013։

2.3 Հայաստանի Հանրապետության խորհրդարանական-նախագահական կառավարման մոդելը

Սահմանադրությունն իրավական համակարգում կարգավորվածություն և համաձայնեցվածություն է բերում։[130] Դրա հետ մեկտեղ, ինչպես նշում է Ա. Շայոն, իրավունքը չի ունենա երկարատև արդյունավետություն, եթե այն չհամապատասխանի հասարակական բարոյականությանը։[131] Կարելի է համաձայնվել նաև Ե. Տանչևի այն կարծիքի հետ, որ սահմանադրական ժողովրդավարության կենսունակությունը պահանջում է ադապտացնել դրա արժեքներն ու սկզբունքները զարգացող սոցիալական իրականության հետ։[132] Այդ տեսանկյունից 2005 թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների հիմնական ուղղություններից մեկն էր Սահմանադրությամբ ամրագրված մոդելի կատարելագործումը կիսանախագահական կառավարման ձևի շրջանակներում։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև սահմանադրական փոփոխությունները գործող մոդելի գլխավոր հատկանիշներից մեկը, ինչպես արդեն նշել ենք, Հանրապետության Նախագահի օժտվածությունն էր լայնածավալ լիազորություններով՝ օրենսդիր և դատական իշխանությունների կողմից չափազանց թույլ վերահսկողության պարագայում, և որ մոդելը կրում էր ցայտուն «նախագահակենտրոն» բնույթ, այդ մոդելի բարեփոխման հիմնական ուղղությունը պետք է լիներ պետական իշխանության համակարգում Հանրապետության Նախագահի և իշխանության երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև հավասարակշռվածության ապահովումը։ Իրականացված բարեփոխումների արդյունքում, ինչպես նշում է Հ. Հակոբյանը, «հասարակությունը ստացավ մի Սահմանադրություն, որի հիմքում, անշուշտ, իշխանության թևերի հարաբերական

[130] Տե՛ս Tuori K. Issues of Constitution-Making-Recent Experiences // New millennium constitutionalism: paradigms of reality and challenges, Yerevan, NJAR, 2013, էջ 178:
[131] Տե՛ս А. Шайо. Конституционные ценности в теории и судебной практике: введение // Конституционные ценности в теории и судебной практике. Сборник докладов. М., 2009, էջ 7:
[132] Տե՛ս Танчев Е. Разделение властей и принцип господства права в сравнительной и болгарской перспективе // Конституционные ценности в теории и судебной практике. Сборник докладов. М., 2009, էջ 193:

անկախությունն է, սահմանադրական ինստիտուտների լիազորությունների ամբողջականությունն ու ու համարժեքությունը գործառույթներին»:[133]

Փոփոխությունների արդյունքում նախ տրվեց Նախագահի ինստիտուտի բնորոշումը՝ «Հանրապետության Նախագահը պետության գլուխն է» (հոդված 49)։ Այս ընդհանուր ձևակերպումը պետք է ծառայի որպես ուղեցույց, մասնավորապես, Նախագահ-կառավարություն հարաբերությունների ամբողջ համալիրի սահմանադրական կարգավորման հարցում՝ հնարավորություն տալով հստակորեն տարանջատել Հանրապետության Նախագահի և կառավարության լիազորությունները գործադիր իշխանության իրականացման բնագավառում։

Սկզբունքային, հիմնարար նշանակություն ուներ նաև Հանրապետության Նախագահի՝ Ազգային ժողովն արձակելու լիազորության ծավալի էական սահմանափակումը։ Ինչպես արդեն նշել ենք, նախագահ-խորհրդարան փոխհարաբերությունների բնույթը, մանավանդ՝ երիտասարդ ժողովրդավարության պետություններում, էականորեն կախված է նախագահի՝ խորհրդարանն արձակելու լիազորության կոնկրետ իրավական ձևակերպումներից։ Փոփոխված Սահմանադրության 74.1 հոդվածի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ Հանրապետության Նախագահն այդ ոլորտում արդեն ընդհանրապես օժտված չէր որևէ հայեցողական լիազորությամբ. նա չէր կարող ինքնուրույն որոշում ընդունել Ազգային ժողովի արձակման մասին։ Համաձայն հոդվածի առաջին մասի ձևակերպման՝ «Հանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին»։ Նախագահը պարզապես պարտավոր է այդ դեպքում արձակել Ազգային ժողովը։ Փաստորեն Ազգային ժողովն արձակվում է Սահմանադրության ուժով. Նախագահն այլընտրանք չունի։

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը՝ Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ։ Ընդ որում, երկրորդ մասի երեք կետերում նախատեսվում են այն իրավիճակները, որոնց

[133] Հակոբյան Հ. Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում. Երևան, 2007, էջ 509:

առկայության դեպքում կարող է համապատասխան առաջարկություն ներկայացվել: Հատկանշական է, որ ի տարբերություն առաջին մասի ձևակերպմանը («արձակում է Ազգային ժողովը»), երկրորդ մասում օգտագործվում է «կարող է արձակել» ձևակերպումը: Հետևաբար, այս դեպքում Հանրապետության Նախագահը կարող է նաև մերժել Ազգային ժողովի արձակման մասին առաջարկությունը: Թերևս, երկրորդ ձևակերպման հիմքում այն կանխավարկածն է, որ համապատասխան առաջարկություն տեսականորեն կարող է ներկայացվել նաև Սահմանադրությամբ նկարագրված իրավիճակների բացակայության պայմաններում և միայն այդ դեպքում Հանրապետության Նախագահը կարող է մերժել առաջարկությունը: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հանրապետության Նախագահի քննարկվող լիազորությունն էականորեն սահմանափակվեց:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում էականորեն ընդլայնվեցին Ազգային ժողովի լիազորությունները պետական մարմինների ձևավորման և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նշանակման և ազատման բնագավառում, ինչպես նաև Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից տվյալ ոլորտում համատեղ որոշումների կայացման շրջանակները: Որոշակիորեն սահմանափակվեցին Հանրապետության Նախագահի համապատասխան լիազորությունները:

Բանն այն է, որ սահմանադրական փոփոխություններով նախատեսվեցին մի շարք նոր պետական մարմիններ և պետական պաշտոններ, որոնց ձևավորման (նշանակման) լիազորությունը վերապահվեց խորհրդարանին կամ պարիտետային հիմունքներով՝ Հանրապետության Նախագահին և խորհրդարանին:

Եթե մինչև սահմանադրական փոփոխություններն Ազգային ժողովը (բացի իր կառույցների ձևավորումից) լիազորված էր նշանակելու միայն սահմանադրական դատարանի հինգ անդամ և նախագահին, ապա փոփոխությունների արդյունքում խորհրդարանն արդեն ընտրում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամների (ևս երկու իրավաբան-գիտնական անդամներ նշանակվում են Հանրապետության Նախագահի կողմից) (հոդ. 83, կետ 4), մարդու իրավունքների պաշտպանին (հոդ. 83.1, մաս 1), հեռարձակվող լրատվության միջոցների

ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակով ստեղծվող անկախ կարգավորող մարմնի անդամների կեսը (մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից) (հոդ. 83.2)։

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում որոշ չափով ընդլայնվեց Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի համատեղ որոշումների ոլորտը։ Եթե մինչև սահմանադրական փոփոխությունները միայն կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալն էին նշանակվում Ազգային ժողովի կողմից՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ, ապա սահմանադրական փոփոխությունների արդյունքում նույն մեխանիզմը սահմանվեց նաև վերահսկիչ պալատի նախագահի (հոդ. 83.4, մաս 5), ինչպես նաև գլխավոր դատախազի (հոդ. 55, կետ 9) նշանակման դեպքերում։ Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետի փոփոխության արդյունքում գլխավոր դատախազի նշանակման լիազորությունը Հանրապետության Նախագահից փոխանցվեց Ազգային ժողովին։

Փոփոխությունների արդյունքում Հանրապետության Նախագահի լիազորությունները էականորեն սահմանափակվեցին նաև կառավարության ձևավորման և հրաժարականի գործընթացներում։ Համաձայն Սահմանադրության 55 հոդվածի 4-րդ կետի՝ Հանրապետության Նախագահը «Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին»։ Պետք է նկատել, որ այսպիսի ձևակերպումն ապահովում է Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի լիազորությունների առավել հավասարակշռվածություն։

Միևնույն ժամանակ, նշված իրավադրույթի ձևակերպումներում կան մի շարք թերություններ։

Նախ՝ հիմնավորված չէ Հանրապետության Նախագահի՝ պատգամավորների խմբակցությունների հետ խորհրդակցություններ անցկացնելու իրավազորությունը։ Այս իրավադրույթի համարժեք մեկնաբանման արդյունքում ստացվում է, որ

Նախագահը պետք ինքը հրավիրի խմբակցությունների նիստեր, ապահովի դրանց քվորումը, խմբակցության անդամների կողմից տարբեր կարծիքներ արտահայտելու դեպքում անցկացնի քվեարկություն և ամփոփի քվեարկության արդյունքները: Կարծում ենք, որ ավելի ճիշտ կլիներ սահմանել, որ Նախագահը խորհրդակցություններ է անցկացնում ոչ թե խմբակցությունների, այլ խմբակցությունների ղեկավարների հետ, իսկ խմբակցության ընդհանուր (կամ մեծամասնության) կարծիքը ձևավորելու և պարզելու գործընթացը խմբակցության ներքին խնդիրն է: Այդ գործընթացները պետք է իրականացվեն առանց Հանրապետության Նախագահի մասնակցության կամ, նույնիսկ, ներկայության:

Կասկածելի է նաև այն իրավադրույթի արդյունավետությունը, որի համաձայն՝ Հանրապետության Նախագահը վարչապետի նշանակման մասին որոշում է կայացնում երկու հակասական հիմքերի վրա՝ պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա: Դժվար չէ կանխատեսել այնպիսի իրավիճակներ, որոնցում այդ երկու չափանիշներից յուրաքանչյուրի կիրառմամբ կարող են ձևակերպվել տարբեր եզրահանգումներ, մանավանդ՝ նաև մեծամասնական ընտրակարգի կիրառման և անկախ պատգամավորների ինստիտուտի առկայության պայմաններում: Ուստի հատկանշական է, որ սահմանադրական փոփոխություններից հետո Նախագահները վարչապետի նշանակումից առաջ գործնականում խորհրդակցել են ոչ թե խմբակցությունների, այլ խմբակցությունների ղեկավարների հետ:

Տարբեր կերպ կարելի է մեկնաբանել նաև «եթե դա հնարավոր չէ» արտահայտությունը: Անհասկանալի է մնում՝ հնարավոր չէ պարզե՞լ պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, թե՞ նրան նշանակել (քանի որ, օրինակ, տվյալ անձը ՀՀ քաղաքացի չէ):

Կառավարության հրաժարականի հետ կապված հարաբերությունների սահմանադրական կարգավորման համակարգում առանցքային նշանակություն ունի 55-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպումը, որի համաձայն՝ «Հանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու, կառավարությանն անվստահություն հայտնվելու, կառավարության

ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը»:

Այստեղ նախ սպառիչ կերպով սահմանված են կառավարության հրաժարականի պատճառները. ա) կոնկրետ իրավիճակներում՝ Սահմանադրության ուժով (նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստ, Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելը), բ) Ազգային ժողովի առջև կառավարության քաղաքական պատասխանատվության շրջանակներում (կառավարությանն անվստահություն հայտնելը, կառավարության ծրագրին հավանություն չտալը), գ) կառավարության կամ վարչապետի նախաձեռնությամբ (վարչապետի կողմից հրաժարական ներկայացնելը), դ) որոշակի իրադարձությունների հետևանքով վարչապետի պաշտոնը թափուր մնալը:

Հատկանշական է նաև Նախագահի հետևյալ լիազորության ձևակերպումը. «Հանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը (…)»: Ձևակերպումն ունի իմպերատիվ բնույթ. Նախագահը ոչ թե կարող է, այլ պարտավոր է ընդունել կառավարության հրաժարականը, նա որևէ այլընտրանքային որոշում կայացնելու լիազորություն չունի: Ավելին, կառավարության հրաժարականի հետ կապված ընթացակարգերում, բացի կառավարության հրաժարականն ընդունելուց, նա որևէ այլ իրավազորություն չունի. կառավարության հրաժարականը չի կարող լինել Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ:

Կառավարության հրաժարականի հետ կապված հարաբերությունների սահմանադրական կարգավորումների համալիր վերլուծության արդյունքում կարելի է կատարել մեր հետազոտության համար կարևոր նշանակություն ունեցող երկու եզրահանգում: Առաջինը՝ կառավարությունն իրական քաղաքական պատասխանատվություն է կրում Ազգային ժողովի առջև, քանի որ վերջինիս կողմից կառավարությանն անվստահություն հայտնելը միանշանակ (առանց որևէ այլընտրանքի) հանգեցնում է կառավարության հրաժարականի: Դա շատ կարևոր հանգամանք է, եթե հաշվի առնենք, որ «Պառլամենտի կողմից գործադիր իշխանության գործունեության վերահսկողությունը հակակշիռների և զսպումների ապահովման ժողովրդավարական ձև է: Սահմանադրական բարեփոխումներն

ավելացրին այդ վերահսկողության կառուցակարգերը (…)»:[134] Երկրորդ՝ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն չի կրում Հանրապետության Նախագահի առջև, քանի որ Նախագահը նշված բոլոր դեպքերում պարտավոր է ընդունել կառավարության հրաժարականը և չունի որևէ այլ իրավազորություն: Միայն այս հանգամանքը, կարծում ենք, բավարար հիմք է հանդիսանում քննարկվող կառավարման մոդելը որպես «խորհրդարանական-նախագահական» գնահատելու համար:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում որոշ չափով հավասարակշռվեցին Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի լիազորությունները կառավարության գործունեության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում: Փոփոխված Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրվեց. «Կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկով սահմանվում է օրենքով: Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով»: Դրանով իսկ կառավարության կառուցվածքը սահմանելու լիազորությունը Նախագահից փոխանցվեց Ազգային ժողովին:

Սակայն Հանրապետության Նախագահը պահպանեց կառավարության գործունեության կարգը սահմանելու լիազորությունը: Ավելին, նրան վերապահվեց նաև կառավարությանը ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու իրավազորությունը:

Սահմանադրության այս դրույթին համապատասխան՝ 2007 թվականի հուլիսի 7-ին ընդունվեց ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին»[135] հրամանագիրը, իսկ 2008 թվականի

[134] Տե՛ս Հակոբյան Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 630:
[135] Տե՛ս ՀՀՊՏ 2007.07.25/37 (561), հոդ. 829:

հունիսի 17-ին՝ ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին»։[136]

Նախագահի հրամանագրով սահմանված կարգի համալիր վերլուծությունը, կարծում ենք, բավարար հիմք է տալիս արձանագրելու, որ այս կարգը բազմաթիվ ընդհանրություններ ունի «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» Հանրապետության Նախագահի 1995 թվականի հուլիսի 25-ի հրամանագրով սահմանված կարգի հետ, ինչի արդյունքում Հանրապետության Նախագահն, այնուամենայնիվ, պահպանում էր կառավարության քաղաքականության որոշման և իրագործման վրա ներազդելու՝ նախկինի համեմատ ավելի սահմանափակ և թույլ լծակներ։

Կրկնություններից խուսափելու համար միայն լրացուցիչ արձանագրենք, որ Հանրապետության Նախագահի կողմից կառավարության և նրան ենթակա պետական կառավարման մարմինների գործունեության կարգը սահմանելու լիազորությունը ինքնին հակասում է իշխանության բաժանման և իշխանության տարբեր թևերի միջև զսպումների և հակակշիռների ամրագրման սկզբունքներին. օրենսդիր և դատական իշխանությունների կառուցվածքը և գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով, մինչդեռ գործադիր իշխանության կառուցվածքը սահմանվում է օրենքով, իսկ գործունեության կազմակերպման կարգը՝ ենթաօրենսդրական ակտով։

Սահմանադրական փոփոխությունների միջոցով կառավարման մոդելի կատարելագործման կարևորագույն ուղղություններից էր նաև Հանրապետության Նախագահի և կառավարության միջև գործադիր իշխանության ոլորտում լիազորությունների ավելի հավասարակշռված բաշխումը՝ կառավարությունը Հանրապետության Նախագահի «խնամակալությունից դուրս բերելու» նպատակով։

Այդ նպատակով՝ փոփոխված Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվեց ընդհանուր սկզբունք, որի համաձայն՝ կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ։

[136] Տե՛ս ՀՀՊՏ 2008.06.25/40 (630), հոդ. 651։

Իրավադրույթի ձևակերպումից բխում է, որ արտաքին քաղաքականությունը մշակվում է Հանրապետության Նախագահ-կառավարություն համագործակցության հիման վրա, այլ ոչ թե նրանց միջև հորիզոնական ենթակայության պայմաններում: Այդպիսի համագործակցության ապահովմանն են ուղղված, մասնավորապես, Սահմանադրության 86-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, որի համաձայն՝ արտաքին քաղաքականության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել Հանրապետության Նախագահը, ինչպես նաև Նախագահի կողմից սահմանված՝ վերը հիշատակված կարգի 29-րդ կետի դրույթը, որի համաձայն՝ արտաքին քաղաքականության հարցերը կառավարության քննարկմանն է ներկայացնում Հանրապետության Նախագահը: Կառավարության՝ որպես գործադիր իշխանության կոլեգիալ մարմնի քաղաքականությունը կարող է մշակվել միայն դրա նիստերում հարցեր քննարկելու և որոշումներ ընդունելու միջոցով: Ուստի քննարկվող իրավադրույթները, ապահովելով Հանրապետության Նախագահի ակտիվ մասնակցությունը կառավարության նիստերին, նպաստում են նրանց միջև փոխգործակցության պայմաններում փոխհամաձայնեցված որոշումների ընդունմանը: Ինչ վերաբերում է Հանրապետության Նախագահի և կառավարության կողմից արտաքին քաղաքականության համատեղ իրականացմանը, պետք է հաշվի առնել, որ քաղաքականությունը չի կարող իրականացվել կառավարության կողմից ինքնուրույն կամ Հանրապետության Նախագահի հետ միասին:

Պետական քաղաքականությունը (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին) իրականացվում է պետական մարմինների ամբողջ համակարգի գործունեության միջոցով: Արտաքին քաղաքականության իրականացմանը իրենց իրավասության շրջանակներում մասնակցում են ոչ միայն պետության գլուխը, կառավարությունը և կառավարության ղեկավարը, այլև ներպետական և արտասահմանյան, սահմանադրական և մասնագիտացված բազմաթիվ մարմիններ:[137] Ուստի Հանրապետության Նախագահի և կառավարության կողմից արտաքին քաղաքականության համատեղ իրականացման վերաբերյալ դրույթը ճիշտ չի արտացոլում այդ ոլորտի իրողությունները: Հատկանշական է, որ Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ կառավարությունը ոչ թե

[137] Մանրամասն տե՛ս Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002, էջ 151-155:

իրականացնում է, այլ ապահովում է արտաքին քաղաքականության իրականացումը: Սակայն այս իրավադրույթը նույնպես որոշակի շտկման կարիք ունի. ավելի ճիշտ կլիներ ամրագրել, որ կառավարությունը Հանրապետության Նախագահի հետ համատեղ է ապահովում արտաքին քաղաքականության իրականացումը: Այդպիսով այս դրույթը կհամապատասխանեցվեր 85-րդ հոդվածի 1-ին մասին:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հիմնական օրենքի տեքստում ներառվեցին մի շարք իրավադրույթներ՝ ուղղված ներքին քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում կառավարության և վարչապետի՝ Հանրապետության Նախագահի նկատմամբ ինքնուրույնության աստիճանի շեշտակի բարձրացմանը: Մասնավորապես, Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ կառավարության նիստերը հրավիրում և վարում է ոչ թե Հանրապետության Նախագահը, այլ վարչապետը: Հանրապետության Նախագահը կարող է հրավիրել և վարել միայն արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ: Վերացվեց նաև Հանրապետության Նախագահի՝ կառավարության որոշումները վավերացնելու լիազորությունը: Դրա փոխարեն ամրագրվեց Հանրապետության Նախագահի լիազորությունը՝ կասեցնելու կառավարության որոշումները մինչև մեկ ամիս ժամկետով և դիմելու սահմանադրական դատարան՝ դրանց՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը պարզելու համար: Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին մասից հանվեց «ընթացիկ» բառը, ինչի արդյունքում վարչապետը ձեռք բերեց կառավարության իրական ղեկավարի կարգավիճակ:

Այս բոլոր, ինչպես նաև կառավարության ձևավորման և հրաժարականի կարգը սահմանող իրավադրույթների փոփոխությունները հանգեցրեցին կառավարության՝ գործադիր իշխանության ոլորտում Հանրապետության Նախագահին կից օժանդակ և նրա ուղղակի ենթակայության տակ գտնվող մարմնի վերափոխմանը գործադիր իշխանության բարձրագույն գործունակ մարմնի, որն ունակ է ինքնուրույն որոշումներ կայացնելու և ապահովելու դրանց իրականացումը և որն այլևս քաղաքական պատասխանատվություն է կրում միայն բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի առջև:

Որոշակի փոփոխություններ կատարվեցին նաև Հանրապետության Նախագահի և իշխանության դատական թևի փոխհարաբերություններում: Սկզբունքային նշանակություն ուներ Սահմանադրության 94-րդ հոդվածում կատարված փոփոխությունը, որի ուժով՝ Նախագահին այլևս վերապահված չէր իշխանությունների տարանջատման տեսանկյունից այդ ինստիտուտին ոչ հատուկ՝ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու գործառույթ: Համաձայն հոդվածի առաջին մասի նոր ձևակերպման՝ «Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով»: Այս ձևակերպումից, մասնավորապես, բխում է օրենսդրության մեջ դատական իշխանության անկախությունը երաշխավորող մեխանիզմներ ներառելու՝ Ազգային ժողովի պարտավորությունը:

Արմատապես փոփոխվեցին արդարադատության խորհրդի կազմը, ձևավորման կարգն ու լիազորությունները:

Համաձայն փոփոխված Սահմանադրության 94.1 հոդվածի՝ «Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ»: Այդպիսով արդարադատության խորհրդի կազմի մեջ այլևս չէին ընդգրկված Հանրապետության Նախագահը, գործադիր իշխանության երկու ներկայացուցիչները (արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը), ինչպես նաև երեք դատախազ անդամները: Այսպիսի մոտեցումն արդարադատության խորհրդի օրակարգում ներառված հարցերով անկաշկանդ քննարկումներ և որոշումներ ընդունելու համար ավելի բարենպաստ պայմաններ էր ստեղծում: Գլխավոր դատախազի և երեք դատախազ անդամների պարագայում հարցի նման լուծումը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ արդարադատության խորհուրդն այլևս չէր քննարկում դատախազների հետ կապված կադրային հարցեր:

Պետք է կարևորել նաև արդարադատության խորհրդի կազմավորման կարգի հետ կապված փոփոխությունները: Եթե մինչև փոփոխությունները խորհրդի բոլոր

անդամներին նշանակում էր Հանրապետության Նախագահը (ի պաշտոնե խորհրդի կազմի մեջ մտնող արդարադատության նախարարին և գլխավոր դատախազին նույնպես նշանակում էր Հանրապետության Նախագահը), ապա փոփոխված Սահմանադրությամբ՝ ինը դատավոր անդամներն ընտրվում էին դատավորների ընդհանուր ժողովի կողմից, իսկ չորս իրավաբան-գիտնականներից երկուսին նշանակում էր Հանրապետության Նախագահը, մյուս երկուսին՝ Ազգային ժողովը:

Այս բոլոր փոփոխությունները մեծապես նպաստեցին արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության, նրա կողմից ընդունվող որոշումների ինքնավարության և հիմնավորվածության աստիճանի բարձրացմանը:

Միևնույն ժամանակ, արդարադատության խորհրդի գործունեությունը կարգավորող իրավադրույթներում տեղ էին գտել նաև որոշ «կիսալուծումներ», ոչ արդյունավետ կարգավորումներ: Այսպես, 94.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը: Ճիշտ է, նույն իրավադրույթի համաձայն՝ նա նիստերը վարում է առանց քվեարկության իրավունքի, սակայն նիստեր վարելու իրավազորությունը և մասնակցությունը հարցերի քննարկմանը նրան գործնականում տալիս է հնարավորություն՝ ներազդելու ընդունվող որոշումների բովանդակության վրա: Այդ լծակն ունի բարձր արդյունավետություն, քանի որ քվեարկության իրավունք ունեցող խորհրդի 13 անդամներից ինը դատական կորպուսի ներկայացուցիչներ են: Հատկանշական է, որ 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների արդյունքում այս իրավադրույթներն էական փոփոխությունների ենթարկվեցին:[138]

Ամփոփելով այս բաժնի դրույթները՝ արձանագրենք, որ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության կիսանախագահական կառավարման մոդելը էական բարեփոխումների ենթարկվեց: Փոփոխությունների հիմնական ուղղությունը Հանրապետության Նախագահի և իշխանությունների երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև հավասարակշռության ապահովումն էր: Ինչպես դիպուկ նկատում է Գ. Դանիելյանը, դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ «իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի անհամարժեք ընկալման և իրացման

[138] Այդ հարցերը մանրամասն կքննարկվեն ատենախոսության երրորդ գլխում:

արդյունքում առավելապես խոցելի են դառնում դատական իշխանությունն ու օրենսդիր իշխանությունը, սակայն վերը նշված անհամարժեք մոտեցումների պարագայում, երբ առանձին դեպքերում դրսևորվում են անհարկի ծայրահեղություններ, անհիմն սահմանափակվում են նաև գործադիր իշխանության լիազորությունները»: [139] Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հանրապետությունում ձևավորված կառավարման մոդելը իրավական լուծումների առումով կարելի է դասել հետխորհրդային տարածքում առավել հավասարակշռվածների շարքին: Միևնույն ժամանակ քաղաքական, առաջին հերթին՝ կուսակցական համակարգի կայացվածության ոչ բավարար աստիճանը, ժողովրդավարության, քաղաքական և իրավական մշակույթի ոչ բավարար մակարդակը գործնականում Հանրապետության Նախագահին հնարավորություն էին տալիս էականորեն ներազդելու պետական իշխանության բոլոր երեք թևերի կազմավորման, կազմակերպման և գործունեության վրա: Հենց դա է պատճառը, որ մեր երկրում սահմանադրական փոփոխությունների գործընթացը կրում է հարատև բնույթ և միևնույն ժամանակ շարունակվում են սուր բանավեճերը՝ Հայաստանի Հանրապետության համար առավել նախընտրելի պետական կառավարման մոդելի ընտրության խնդրի վերաբերյալ:

Հենց այդ պատճառով 2013 թ. սկսվեց սահմանադրական բարեփոխումների հերթական փուլը, որի սկզբը դրվեց ՀՀ Նախագահի նույն թվականի սեպտեմբերի 4-ի ՆՀ-207-Ն «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանցնաժողով ստեղծելու մասին» Հրամանագրով:[140] Հրամանագրի հավելվածներով հաստատվեցին հանձնաժողովի անհատական կազմը ու գործունեության կարգը և հանձնաժողովին հանձնարարվեց մինչև 2014 թվականի ապրիլի 20-ը Նախագահին ներկայացնել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, իսկ Նախագահի կողմից հայեցակարգին հավանություն տալուց հետո՝ տասն ամսվա ընթացքում,

[139] Դանիելյան Գ. Իշխանությունների բաժանում և հավասարակշռում // Դանիելյան Գ. , Այվազյան Վ. , Մանասյան Ա. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում . /գիտագործնական հետազոտություն/. Երևան, 2015, էջ 141

[140] president.am/hy/decrees/item/947

ներկայացնել սահմանադրական բարեփոխումների նախագիծը: «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների Հայեցակարգ»-ի 2.4.3. բաժնի դրույթներում մանրամասն հիմնավորվեցին կառավարման խորհրդարանական համակարգի ընձեռած հնարավորությունները:[141] Հիմնվելով հայեցակարգային դրույթների վրա հանձնաժողովի կողմից մշակվեց խորհրդարանական կառավարման համակարգ ամրագրող սահմանադրության նախագիծ, որն ընդունվեց 2015թ. դեկտեմբերի 60-ին:

[141] parliament.am/library/sahmanadrakan%20 barepoxumner/hajecakarg.pdf

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԸ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

3.1. Ազգային ժողովը՝ որպես պետական իշխանության համակարգի կենտրոն

Իշխանության սահմանադրական կենսագրությունը սկսում է սահմանադրության ծննդի պահից: Այդ կենսագրությունը ձևավորվում է պրակտիկ լուծում պահանջող պահի անհրաժեշտությամբ:[142]

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվող խորհրդարանական կառավարման մոդելն ունի մի շարք ընդհանրություններ հայտնի այլ մոդելների հետ և միևնույն ժամանակ մի շարք այնպիսի էական յուրահատկություններ, որոնք որոշակի հիմքեր են տալիս՝ գնահատելու այդ մոդելը որպես առանձնահատուկ «հայկական» մոդել:

Ինչպես ցանկացած այլ խորհրդարանական մոդելում, այստեղ նույնպես իշխանության կենտրոնը խորհրդարանն է: Հենց խորհրդարանի կողմից կամ խորհրդարանի ակտիվ մասնակցությամբ են ձևավորվում իշխանության գործադիր և դատական թևերի, ինչպես նաև փոփոխված Սահմանադրության 122-րդ հոդվածով նախատեսված ինքնավար մարմինները: Այս առումով օրինաչափ է, որ փոփոխություններից հետո պետական մարմինների համակարգում Սահմանադրության մեջ նախ ամրագրվեցին Ազգային ժողովի ինստիտուտը կազմող նորմերը:

Ազգային ժողովի կենտրոնական դերը պետական իշխանության համակարգում առանձնակի արդիականության է հաղորդում այդ մարմնում կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդրին: Խորհրդարանական կառավարման բոլոր մոդելների համար խորհրդարանական կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդիրներն առանձնակի կարևորություն են ստանում: Այդպիսի կայունությունն Ազգային ժողովի կողմից իր գործառույթների արդյունավետ իրականացման անհրաժեշտ նախապայման է: Բացի դրանից՝ խորհրդարանի կայունությունը պարտադիր նախապայման է գործադիր իշխանության ամբողջ

[142] Տե՛ս Шайо А. Самоограничение власти: краткий курс конституционализма. М., 2001, էջ 12:

համակարգի, ներառյալ՝ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Կառավարության կայունության ապահովման համար։

2015 թվականին փոփոխված Սահմանադրության 89-րդ հոդվածի մի քանի նորարարական դրույթների նպատակը հենց Ազգային ժողովում կայուն մեծամասնության ձևավորումն է։ Մասնավորապես, հոդվածի առաջին մասով սահմանված է ոչ թե Ազգային ժողովի պատգամավորների կոնկրետ թվաքանակ, այլ նվազագույն թիվ. «Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից»։ Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընտրական օրենսգիրքը պետք է երաշխավորի կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորում։

Այս երկու իրավադրույթների փոխկապվածությունն ակնհայտ է։ Սահմանադրական մակարդակով Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվաքանակի փոխարեն նվազագույն թվի ամրագրումը նպատակ ունի ձևավորել անհրաժեշտ սահմանադրական հիմքեր՝ Ընտրական օրենսգրքի միջոցով խորհրդարանական կայուն մեծամասնության ապահովման համար։ Ինչպես նշված է «Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ» «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) նախնական կարծիքի 78-րդ կետում, այս համակարգում պատգամավորների ընդհանուր քանակը կախված է լինելու մեծամասնությանը որպես բոնուս հատկացված լրացուցիչ տեղերի քանակից։[143]

Կարծում ենք՝ տեսականորեն կայուն կարելի է համարել այն մեծամասնությունը, որը առաջին հերթին Ազգային ժողովին իր գործառույթների արդյունավետ իրականացման հնարավորություն է տալիս։ Փոփոխված Սահմանադրության մի շարք հոդվածներով նախատեսվում են Ազգային ժողովի կողմից օրենքների, որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունման տարբեր կարգեր։ Դրանք, որպես կանոն, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (հոդ. 103, մաս 1)։ Միևնույն ժամանակ, Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները «ընտրվում և հետ են

[143] Տե՛ս http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm

կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ» (հոդ. 104, մաս 1)։

Սակայն առավել բարդացված է սահմանադրական օրենքների ընդունման, ինչպես նաև պետական այլ մարմինների որոշ պաշտոնյաների ընտրության կարգը։ Այսպես, Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներ են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով»։ Նույն կարգով են ընտրվում գլխավոր դատախազը (հոդված 177, մաս 1), Հաշվեքննիչ պալատի նախագահը և անդամները (հոդ. 199, մաս 2), և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաներ։

Ճիշտ է, հատուկ կարգ է սահմանված Հանրապետության նախագահի ընտրության համար։ Համաձայն Սահմանադրության 125-րդ հոդվածի՝ «Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը»։ Սակայն երրորդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, որն ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը։

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Ազգային ժողովի գործառույթների արդյունավետ իրականացման համար կայուն մեծամասնությունը պետք է բաղկացած լինի պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդից։ Սակայն կարևոր է հաշվի առնել, որ սահմանադրական օրենքների ընդունման համար, ինչպես նաև առանձին բարձրագույն պաշտոններում նշանակման կամ սահմանադրական մարմինների կազմավորման համար ձայների որակյալ մեծամասնության սահմանումը ոչ թե ինքնանպատակ է, այլ խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության միջոց։ Ինչպես նկատում է Գ. Հարությունյանը մինչև 2015 թ. սահմանադրական բարեփոխումները «օրգանական /սահմանադրական/ օրենքների ինստիտուտի բացակայությունը փոքրամասնությանը զրկել է ընդուպ օրենսդրական քաղաքականության վրա որևէ

իրական ներազդեցությունից»:[144] Ուստի առավել ընդունելի կարելի է համարել այնպիսի մեծամասնության առկայությունը, որը մի կողմից Ազգային ժողովին հնարավորություն է տալիս արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները, իսկ մյուս կողմից սահմանադրական օրենքների ընդունման և սահմանադրական կարևորագույն մարմինների ձևավորման ժամանակ ստիպում է խորհրդարանական կայուն մեծամասնությանը հաշվի առնել նաև ընդդիմության դիրքորոշումները: Թերևս կարելի է համարել, որ դա այն մեծամասնությունն է, որը մոտ է, սակայն չի հատում պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի սահմանը: Միայն այդ դեպքում կլինեն սահմանադրական անհրաժեշտ և կայուն երաշխիքներ խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գործունեության և հակակշռող դերի ամրապնդման համար:[145] Խորհրդարանական մեծամասնության ավելի մեծ «կայունությունը» կարող է հղի լինել մեկ կուսակցության կամ խորհրդարանական մեծամասնություն կազմող մի քանի կուսակցությունների դիկտատուրայի հաստատման վտանգով:

Կայուն (բայց ոչ վերը նշված շեմը գերազանցող) մեծամասնության առկայությունը անհրաժեշտ նախապայման է հենց խորհրդարանի կայունության ապահովման համար: Կայուն մեծամասնության բացակայության պայմաններում խորհրդարանը չի կարող արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները, ինչի հետևանքով առաջանում է գործող խորհրդարանի արձակման և նոր խորհրդարանական ընտրություններ անցկացնելու անհարժեշտություն: Ուստի հատկանշական է, որ Ազգային ժողովի արձակման՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմքերն առնչվում են հենց այդ հիմնախնդրին:

Համաձայն Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասի՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավիճակներում «Վարչապետ չընտրվելու դեպքում

---

[144] Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակակից մարտահրավերները. Երևան, 2016, էջ 210:

[145] Տե՛ս Դանիելյան Գ. Սահմանադրական կարգը, որպես պետական կառույցի բարձրագույն կազմակերպաիրավական ձև, սահմանադրության կայացման արդի հիմնախնդիրները // Դանիելյան Գ. , Այվազյան Վ. , Մանասյան Ա. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում . /գիտագործնական հետազոտություն/. Երևան, 2015, էջ 29 :

քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն (…) Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում. ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով»: Սահմանադրության 151-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ Ազգային ժողովն իրավունքի ուժով արձակվում է Կառավարության ծրագրին հավանություն չտալու դեպքում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված բոլոր դեպքերում Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Դրանով իսկ լիովին բացառվում է սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը՝ վարչապետի, Հանրապետության նախագահի կամ Ազգային ժողովի նախագահի կողմից Ազգային ժողովի արձակման վերաբերյալ կամայական որոշումների ընդունման հնարավորությունը: Ինչ խոսք, այդ հանգամանքը կնպաստի պատգամավորների կողմից (հետևաբար և Ազգային ժողովի կողմից) իրենց գործառույթների անկաշկանդ իրականացմանը և, միևնույն ժամանակ, Ազգային ժողովի հանրային հեղինակության բարձրացմանը:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում, խորհրդարանական կառավարման պահանջներին համապատասխան, որակապես ամրապնդվեց Ազգային ժողովի իրավական կարգավիճակը: Մինչև սահմանադրական փոփոխությունները Սահմանադրության 62-րդ հոդվածով ամրագրված էր Ազգային ժողովի միայն օրենսդիր բնույթը: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում արձանագրվեց, որ Ազգային ժողովը ոչ միայն օրենսդիր, այլ նաև ժողովրդի ներկայացուցչական մարմինն է (հոդ. 88, մաս 1):

Հենց Ազգային ժողովի՝ ժողովրդի միակ ներկայացուցչական մարմինը լինելու հանգամանքից են բխում Ազգային ժողովի մի շարք սահմանադրորեն ամրագրված նոր գործառույթները: Այդ գործառույթներից առավել կարևորները սահմանվեցին նույն հոդվածի 3-րդ մասով. «Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն (…)»: Միևնույն ժամանակ նախատեսվեց, որ Ազգային ժողովն իրականացնում է նաև Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ: Դրա հետ մեկտեղ, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ»:

Նշված դրույթներից բխում է «գործառույթ» և «լիազորություն» եզրույթների հարաբերակցության բացահայտման և դրա հիման վրա Ազգային ժողովի գործառույթների և լիազորությունների տարանջատման խնդիրը։

Իրավաբանական գրականության մեջ առկա է «պետության գործառույթ» հասկացության բնորոշման նկատմամբ սկզբունքորեն միասնական մոտեցում։ Որպես կանոն, պետության գործառույթները բնորոշվում են որպես պետության գործունեության հիմնական ուղղություններ, որոնցում արտահայտվում և կոնկրետացվում է պետության սոցիալական նշանակությունը։ Համապատասխանաբար, պետական մարմնի գործառույթները կարելի է բնորոշել որպես այդ մարմնի գործողությունների հիմնական ուղղություններ, որոնցում արտահայտվում է տվյալ մարմնի սոցիալ-նպատակային նշանակությունը։[146]

Գրականության մեջ տրվում են «լիազորություն» եզրույթի տարբեր սահմանումներ։ Միևնույն ժամանակ, բոլոր հեղինակները միակարծիք են այն հարցում, որ «լիազորություն» եզրույթը հավասարապես ներառում է պետական մարմնի կամ պաշտոնատար անձի և՛ իրավունքները, և՛ պարտականությունները, որ լիազորությունը իրավունքների և պարտականությունների համակցություն է։[147]

«Լիազորություն» եզրույթի բովանդակության ճիշտ ընկալման համար կարևոր նշանակություն ունի նաև Յու. Ա. Տիխոմիրովի կողմից շեշտվող այն հանգամանքը, որ «լիազորությունը» որոշ դեպքերում միայն իրավունք է (օրինակ՝ «կարող է» ձևակերպման պարագայում) կամ միայն պարտականություն։[148] Այս մոտեցմանը համահունչ է Գ. Գ. Հարությունյանի և Մ. Վ. Բագլայի կողմից ձևակերպված բնորոշումը, որի համաձայն՝ «լիազորություն» ասելով հասկացվում են պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց՝ Սահմանադրությամբ, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով

[146] Տե՛ս, օրինակ, Алексеев С.С.Право на пороге нового тысячилетия. М., 2000, էջ 113; Алексеев С.С. Линия права. М., 2006, էջ 261-262; Венгеров А. Б. Теория государства и права. М., 2005, էջ 167-168; Այվազյան Հ., Ժամանակակից պետության գործառույթները (տեսական և կիրառական հիմնախնդիրներ). իրավ. գիտ. թեկն. գիտ. աստիճ. հայցման ատենախ, Երևան, 2011, էջ 10-14:

[147] Տե՛ս, օրինակ, Авакьян С.А. Правовое регулирование деятельности местных Советов. М., 1980, էջ 22; Кутафин О. Е., Шеремет К. Ф. Компетенция местных советов. М., 1986, էջ 36: Ожегов С.И., Шведова Н.Ю. Толковый словарь русского языка. М., 1993, էջ 571; Սիմոնյան Հ. Մ., Տարածքային կառավարման մարմինների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում. իրավ. գիտ թեկն. գիտ. աստիճ. հայցման ատենախ, Երևան 2009, էջ 65-66:

[148] Մանրամասն տե՛ս Тихомиров Ю. А. Теория компетенции. М., 2004, էջ 53-66:

վերապահված իրավունքներն ու ազատությունները՝ հանրային իշխանության գործառույթների իրականացման նպատակով։[149]

Կարծում ենք, որ Յու. Ա. Տիխոմիրովի, Գ. Գ. Հարությունյանի և Մ. Վ. Բագլայի այս մոտեցումն ունի կարևոր գործնական նշանակություն ՀՀ խորհրդարանական կառավարման մոդելի ճշգրիտ բնորոշման համար, քանի որ փոփոխված Սահմանադրության, մասնավորապես՝ Ազգային ժողովի լիազորություններն ամրագրող մի շարք դրույթների ձևակերպումներում օգտագործվում է «կարող է» եզրույթը, իսկ Հանրապետության նախագահի որոշ լիազորություններ ձևակերպված են որպես այլընտրանք չունեցող՝ իմպերատիվ պարտականություններ։

Հիմնվելով տվյալ ընդհանուր տեսական դրույթների վրա՝ հնարավոր է առանձնացնել Ազգային ժողովի հիմնական գործառույթների, ինչպես նաև դրանց իրականացման ապահովմանն ուղղված համապատասխան լիազորությունների, համակարգերը։ Ազգային ժողովի հիմնական գործառույթներն են՝

ա) օրենսդիր իշխանության իրականացման գործառույթ,

բ) գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթ,

գ) ֆինանսական գործառույթ,

դ) կազմակերպչական գործառույթ,

ե) արտաքին գործառույթ։

Իհարկե, Ազգային ժողովի գործառույթների (և համապատասխան լիազորությունների) տարանջատումը կրում է պայմանական բնույթ։ Դրանց միջև չկա անջրպետ։ Որոշ դեպքերում միևնույն լիազորությունը կարող է համապատասխանել տարբեր գործառույթների։ Այսպես՝Սահմանադրության 119-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը»։ Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռազմական դրություն կարող է հայտարարվել Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի

[149] Տե՛ս Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006, էջ 336:

առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում, ապա կարելի է եզրահանգել, որ այդ լիազորությունը վերաբերում է Ազգային ժողովի արտաքին գործառույթին: Սակայն հաշվի առնելով, որ ռազմական դրություն հայտարարում է գործադիր իշխանության բարձրագույն մարմինը՝ Կառավարությունը, իսկ Ազգային ժողովը վերացնում է Կառավարության ընդունած որոշումը, հիմքեր են առաջանում եզրահանգելու, որ այդ լիազորությունն ընդգրկված է Ազգային ժողովի վերահսկողական գործառույթների ոլորտում:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի կողմից ընդունվող հայտարարություններին և ուղերձներին (հոդ. 103, մասեր 1 և 4), ապա դրանք կարող են առնչվել խորհրդարանի ցանկացած գործառույթի հետ

Դիտարկենք այդ գործառույթների բովանդակությունը և դրանց իրականացումն ապահովող լիազորությունների համակարգը:

Ազգային ժողովի օրենսդիր գործառույթը Խորհրդարանի կարևորագույն գործառույթն է: Ինչպես արդարացիորեն նկատում է Գ. Դանիելյանը «Խորհրդարանի ողջամիտ կարգավիճակը ենթադրում է, որպեսզի այն հիրավի դիտարկվի օրինաստեղծ գործունեության քաղաքականությունը որոշող և իրականացնող կառույց»:[150] Այդ գործառույթի իրականացման գործընթացը կարգավորող սահմանադրական նորմերում կատարվել են որոշակի փոփոխություններ. ա) օրենսդրական նախաձեռնության իրավունք է վերապահվել Ազգային ժողովի խմբակցություններին (հոդ. 109, մաս 1), ինչպես նաև ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացիներին (հոդ. 109, մաս 6), բ) ներմուծվել է սահմանադրական օրենքների ինստիտուտը (հոդ. 103, մաս 2), գ) Ազգային ժողովի նախագահին իրավազորություն է վերապահվել՝ ստորագրելու և հրապարակելու այն օրենքները, որոնք ըստ Սահմանադրական դատարանի որոշման՝ համապատասխանում են Սահմանադրությանը, սակայն հնգօրյա ժամկետում չեն ստորագրվում և չեն հրապարակվում Հանրապետության նախագահի կողմից:

[150] **Դանիելյան Գ. , նշված աշխ., էջ 27 :**

Այստեղ հատուկ ուշադրության են արժանի Սահմանադրության 109-րդ հոդվածի իրավադրույթների ձևակերպումները։ Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված են պատգամավորները, Ազգային ժողովի խմբակցությունները և Կառավարությունը։ Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք»։ Այս երկու իրավադրույթների համեմատական վերլուծության արդյունքում անհասկանալի է մնում «օրենսդրական նախաձեռնություն» և «քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք» հասկացությունների հարաբերակցությունը։ Եթե ենթադրվում է, որ քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջարկված օրենքի նախագիծը Ազգային ժողովը նույնպես պարտավոր է իր կանոնակարգով սահմանված կարգով քննարկել և քվեարկության դնել, ապա պարզապես կարելի էր հոդվածի առաջին մասում թվարկել նաև հիսուն հազար քաղաքացիներին՝ որպես օրենսդրական նախաձեռնության սուբյեկտի։ Ճիշտ է, Սահմանադրության 204-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե Ազգային ժողովը մերժում է քաղաքացիական նախաձեռնությամբ ներկայացված «օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո՝ վաթսուն օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող»։

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ խոսքը երկու տարբեր սուբյեկտների տարբեր նախաձեռնությունների մասին է։ Առաջին դեպքում՝ հիսուն հազար քաղաքացու, ըստ էության, օրենսդրական նախաձեռնության իրավունքի, իսկ երկրորդում՝ երեք հարյուր հազար քաղաքացու՝ հանրաքվեի նախաձեռնության իրավունքի մասին։ Հետևաբար, իրավական կարգավորման հստակության ապահովման համար, թերևս, ճիշտ կլիներ պարզապես Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդրական նախաձեռնության իրավունք վերապահել նաև «ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացիներ[ին]»։

Առկա սահմանադրական կարգավորման պայմաններում Ազգային ժողովի կանոնակարգով կարող է և չսահմանվել Ազգային ժողովի կողմից քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջարկված նախագծի քննարկման որևէ ժամկետ, ինչի արդյունքում առոչինչ կդառնա ոչ միայն քաղաքացիական նախաձեռնության իրավունքով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունքը, այլև ընտրական իրավունք ունեցող առնվազն երեք հարյուր հազար քաղաքացիների՝ հանրաքվե նախաձեռնելու իրավունքը։

Ազգային ժողովի օրենսդիր գործառույթի իրականացման հետ կապված հարաբերությունների սահմանադրական կարգավորման համակարգի վերլուծության արդյունքում երևան է գալիս ևս մեկ անհստակություն։ Սահմանադրության 109-րդ հոդվածի 4-րդ մասին համաձայն՝ «Այն օրենքների նախագծերը, որոնց օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է Կառավարությանը, քվեարկության կարող են դրվել միայն Կառավարության համար ընդունելի ուղղումներով»։ Առաջին մոտեցմամբ տպավորություն է ստեղծվում, որ սահմանադրական նոր կարգավորումներով, բացի սահմանադրական օրենքներից, ներմուծվում է օրենքի մեկ այլ տեսակ՝ օրենքներ, որոնք կարող են ընդունվել միայն Կառավարության բացառիկ օրենսդրական նախաձեռնությամբ, և դրանով իսկ ընդլայնվում են Կառավարության՝ օրենսդրական նախաձեռնությանն առնչվող իրավազորությունները, և միևնույն ժամանակ սահմանափակվում են օրենսդրական նախաձեռնության այլ սուբյեկտների լիազորությունների շրջանակները։ Սակայն գործնականում տեղի է ունեցել հակառակը։

Բանն այն է, որ մինչև փոփոխությունները Սահմանադրության 75-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կառավարությունը նույնպես կարող էր պահանջել, որ իր ներկայացրած օրենքները քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով։ Եթե նախկինում կառավարությունը կարող էր պահանջել, որ իր կողմից ներկայացված ցանկացած օրենք քվեարկության դրվի իր համար ընդունելի ուղղումներով, ապա ներկա սահմանադրական կարգավորման պայմաններում կարող է այդպիսի պահանջ ներկայացնել միայն որոշ օրենքների (պետական բյուջեի մասին, համաներման մասին, վարչատարածքային բաժանման մասին օրենքների) ընդունման կապակցությամբ։

Խորհրդարանական կառավարման ցանկացած մոդելի օբյեկտիվ բնութագրման համար առանցքային նշանակություն ունի խորհրդարանի՝ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթի բազմակողմանի և խորը վերլուծությունը: Քննարկվող գործառույթի բովանդակության բացահայտման համար կարևոր է վերլուծել դրա իրականացման նպատակով Ազգային ժողովին վերապահված լիազորությունների համակարգը:

Այդ լիազորությունների համակարգում իր կարևորությամբ, թերևս, նախևառաջ պետք է առանձնացնել Սահմանադրության 108-րդ հոդվածով ամրագրված՝ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով քննիչ հանձնաժողովներ ստեղծելու լիազորությունը: Այդ հանձնաժողովի գործունեության մանրամասները պետք է սահմանվեն Ազգային ժողովի կանոնակարգով և միայն այդ մանրամասները սահմանելուց հետո հնարավոր կլինի անհրաժեշտ խորությամբ վերլուծել դրանց դերը Ազգային ժողովի վերահսկողական գործառույթի իրականացման գործում: Սակայն այն հանգամանքը, որ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովների լիազորություններ կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը (…)», կարծում ենք՝ ինքնին ենթադրում է, որ քննիչ հանձնաժողովները պետք է օժտված լինեն իրենց խնդիրների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընդարձակ իրավազորություններով:

Վերահսկողական գործառույթի իրականացման համար որոշակի նշանակություն կարող է ունենալ նաև պատգամավորների՝ Սահմանադրության 112-րդ հոդվածով ամրագրված իրավունքը՝ բանավոր և գրավոր հարցերով դիմելու Կառավարության անդամներին: Չնայած այն հանգամանքին, որ նույն հոդվածի համաձայն՝ պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում, իսկ գրավոր հարցերի պատասխաններն Ազգային ժողովի նիստում նույնիսկ չեն ներկայացվում, այդ իրավունքը պատգամավորներին և Ազգային ժողովին այնուամենայնիվ հնարավորություն է տալիս ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք կարող են օժանդակել վերահսկողական գործառույթի

արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, ստացված տեղեկությունների հիման վրա անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծվել քննիչ հանձնաժողովներ, այդ տեղեկությունները կարող են փոխանցվել համապատասխան իրավասու մարմիններին: Ավելին, ստացված տեղեկությունների հիման վրա չի բացառվում նույնիսկ պատգամավորների մեկ երրորդի կողմից Ազգային ժողովին վարչապետին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծի ներկայացումը:

Ազգային ժողովի վերահսկողական գործառույթների իրականացման համար ավելի արդյունավետ մեխանիզմ է Սահմանադրության 113-րդ հոդվածով նախատեսված խմբակցությունների իրավունքը՝ գրավոր հարցապնդումներով դիմելու Կառավարության անդամներին: Հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում, իսկ խմբակցության առաջարկությամբ պատասխանը քննարկվում է: Այս դեպքում արդեն հոդվածի 2-րդ մասով ուղղակիորեն նախատեսվում է, որ քննարկման արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է ներկայացվել վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ: Հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է նաև առաջարկել վարչապետին՝ քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:

Այդպիսով, Սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված լիազորությունների համակարգը (և պատգամավորներին վերապահված իրավունքները) գործնական հնարավորություն են տալիս այդ մարմնին ոչ միայն ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Կառավարության գործունեության և դրա արդյունքների մասին, այլև դրա (Կառավարության, վարչապետի կամ կառավարության այլ անդամների) նկատմամբ կիրառելու սահմանադրական պատասխանատվության միջոցներ: Այդպիսի սանկցիաների կիրառման հնարավորությունն անհրաժեշտ նախապայման է վերահսկողական գործառույթի արդյունավետ իրականացման համար: Պետք է նաև հաշվի առնել, որ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Կառավարության նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնելով՝ Ազգային ժողովը

դրանով իսկ, փաստորեն, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության ամբողջ համակարգի նկատմամբ։

Ազգային ժողովի վերահսկողական գործառույթի իրականացման ընթացքում ստացված տեղեկությունները կարող են նպաստել Ազգային ժողովի կողմից իր բոլոր մյուս գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը։ Վերահսկողության ընթացքում ստացված տեղեկությունները կարող են օգտագործվել, մասնավորապես, Ազգային ժողովի կողմից իր օրենսդրական, ֆինանսական, կազմակերպչական և այլ գործառույթների իրականացման գործընթացներում։

Ազգային ժողովի ֆինանսական գործառույթների հետ կապված երկու կարևորագույն լիազորություններն են պետական բյուջեի ընդունումը (հոդ. 110) և պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը (հոդ. 111)։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական բյուջեն օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտներն ու ծախսերը, բյուջեի հաստատման և դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը գործնականում ապահովում է Ազգային ժողովի կողմից ավելի լայն ֆինանսական վերահսկողական գործառույթի իրականացում։ Հատկանշական է, որ 111-րդ հոդվածի 1-ին մասով հատուկ նշվում է, որ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում ինչպես պետական բյուջեի կատարման, այնպես էլ օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի նկատմամբ։

Այդպիսի վերահսկողության արդյունավետության ապահովմանն է ուղղված Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթը, որի համաձայն՝ Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում և չեղյալ է հայտարարում նաև այն միջազգային պայմանագրերը, որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ։

Սահմանադրությամբ ամրագրված են ոչ միայն Ազգային ժողովի ֆինանսական գործառույթին առնչվող լիազորությունները, այլև դրանց իրականացման ընթացակարգերի հիմունքները, որոնք հետագայում կկոնկրետացվեն խորհրդարանի կանոնակարգի նորմերով։ Սահմանադրության 110-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային

ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ (մաս 1)։ Կառավարությունը պետական բյուջեի նախագիծը ներկայացնում է բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ (մաս 2)։ Պետական բյուջեն ընդունվում է մինչև բյուջետային տարին սկսվելը, իսկ այդ ժամկետում բյուջեն չընդունվելու դեպքում մինչև պետական բյուջեի ընդունումը ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով (մաս 3)։ Սահմանադրության 111-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ազգային ժողովը, Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ, քննարկում և որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ»։

Վերը նշվածը հիմքեր է տալիս եզրահանգելու, որ Ազգային ժողովի ֆինանսական գործառույթը գործնականում ընդգրկում է պետության բոլոր եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման ոլորտները։

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում էականորեն ընդարձակվել են Ազգային ժողովի կազմակերպչական գործառույթի շրջանակները։ Այդ գործառույթի իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով խորհրդարանին են վերապահվել մի շարք նոր լիազորություններ կենտրոնական պետական մարմինների ձևավորման և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նշանակման և պաշտոնից ազատելու ոլորտներում։[151]

Այստեղ հստակ կերպով առանձնանում են երկու հիմնական ուղղություններ։ Նախ՝ ընդլայնվել է համապատասխան պետական կառույցների ցանկը և Ազգային ժողովին են վերապահվել նոր կառույցների կազմավորման լիազորությունները։ Բացի դրանից՝ մի շարք պետական մարմինների կազմավորման և պաշտոնատար անձանց նշանակման լիազորություններ, որոնք կիսանախագահական կառավարման համակարգում վերապահված էին Հանրապետության Նախագահին կամ Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին համատեղ, նոր պայմաններում վերալիազորվել են Ազգային ժողովին։

[151] Կառավարության կազմավորման և հրաժարականի հետ կապված հիմնախնդիրները քննարկվում են ատենախոսության 3.3 բաժնում

Այսպես, Սահմանադրության 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով (…) կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ»: Այդ տարաբնույթ ինքնավար մարմինների անդամները, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, «նշանակվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

Փոփոխություններ կատարվեցին մինչ այդ գոյություն ունեցող սահմանադրական մարմինների կազմավորման կարգում: Սահմանվեց նոր կարգ, որի համաձայն՝ համապատասխան պաշտոնյաները՝ կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի անդամները, գլխավոր դատախազը, Հաշվեքննիչ պալատի նախագահը և մյուս անդամներն ընտրվում են ոչ թե Հանրապետության նախագահի առաջարկությամբ, այլ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ:

Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի միջև կատարվեց լիազորությունների վերաբաշխում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կազմավորման բնագավառում: Եթե մինչև սահմանադրական փոփոխությունները հեռարձակվող լրատվության միջոցների անկախ կարգավորող մարմնի անդամների կեսին նշանակում էր Հանրապետության Նախագահը, իսկ մյուս կեսին ընտրում էր Ազգային ժողովը (հոդ. 83.2), ապա նոր կարգով սահմանվեց, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի բոլոր անդամներին՝ իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը (հոդ. 197, մաս 2):

Այդպիսով, խորհրդարանական կառավարման համակարգի ներդրման գործընթացը ինքնաբերաբար հանգեցրել է Ազգային ժողովի կազմակերպչական գործառույթի ընդլայնմանը և այդ գործառույթի ապահովմանն ուղղված մի շարք նոր լիազորությունների ամրագրմանը:

Ազգային ժողովի արտաքին գործառույթի ապահովմանն ուղղված լիազորությունների շարքում նախ պետք է առանձնացնել միջազգային պայմանագրեր վավերացնելու, կասեցնելու և չեղյալ հայտարարելու լիազորությունը (հոդ. 116): Այդ լիազորության կարևորությունը պայմանավորված է միջազգային

հարաբերությունների ոլորտում միջազգային պայմանագրերի առանցքային նշանակությամբ:

Պայմանագիրը միջազգային հարաբերությունների կարգավորման քաղաքական և իրավական կարևորագույն միջոցներից մեկն է, որի օգնությամբ են լուծվում միջպետական հարաբերությունների առավել կարևոր և բարդ հիմնախնդիրները: Այն ապահովում է միջազգային իրավակարգի կայունությունը: Պայմանագրային նորմերը մեծ հնարավորություններ են ընձեռնում առկա միջպետական հարաբերությունների վերակառուցման և նոր հարաբերությունների հաստատման համար:[152] Ուստի դժվար է գերագնահատել Ազգային ժողովի՝ Սահմանադրության 116-րդ հոդվածով ամրագրված լիազորության վճռորոշ դերը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ոլորտում:

Սակայն արտաքին քաղաքականության բնագավառում Ազգային ժողովի դերը չի սահմանափակվում Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված լիազորությունների իրականացմամբ: Ընդհանրապես պետք է նկատել, որ ժողովրդավարական պետություններում խորհրդարաններն արտաքին քաղաքականության ոլորտում կարևոր և յուրահատուկ տեղ են զբաղեցնում: Խորհրդարանները միջպետական հարաբերություններում հանդես չեն գալիս որպես պետության ներկայացուցիչներ, չեն կարող պետության անունից կնքել միջազգային պայմանագրեր, խորհրդարանի ներկայացուցիչների հայտարարությունները պետության վրա որևէ պարտավորություններ չեն դնում: Դրա հետ մեկտեղ, խորհրդարաններն ակտիվորեն մասնակցում են միջպետական հարաբերություններին, ընդունում են այլ խորհրդարաններին հասցեագրվող ուղերձներ, մասնակցում են միջխորհրդարանական միությունների աշխատանքներին:[153]

Բոլոր այս միջոցներով խորհրդարաններն ակտիվորեն մասնակցում են պետության արտաքին քաղաքականության իրականացմանը: ՀՀ Ազգային ժողովի կողմից կնքվել են միջխորհրդարանական համաձայնագրեր Վրաստանի,

[152] Տե՛ս Международное право., отв. Ред. Ю. М. Колосов, В. И. Кузнецов, М., 1995, էջ 120-121; Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002, էջ 101-103; Международное право. Отв. ред. Егоров С.А. М., 2016, էջ 248-250:

[153] Տե՛ս Международное право. Под. ред. Л.Н.Шестакова. М., 2005, էջ 205:

Ղրղզստանի, Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության և մի շարք այլ պետությունների խորհրդարանների հետ: Միջխորհրդարանական հանձնաժողովներ են ձևավորված Բելառուսի, Կիպրոսի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի խորհրդարանների հետ: Ազգային ժողովում գործում են բարեկամական խմբեր ԱՄՆ-ի, Ավստրիաի, Գերմանիաի, Մոլդովայի և մի քանի տասնյակ այլ խորհրդարանների հետ: Ազգային ժողովը ԱՊՀ-ի, «Եվրանեստ»-ի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի և մի քանի այլ միջազգային խորհրդարանական կազմակերպությունների անդամ է:[154]

Ամփոփելով այս բաժնի վերլուծության արդյունքները՝ նշենք, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո պետական իշխանության համակարգում առաջնային մանդատ ունեցող միակ մարմինն Ազգային ժողովն է: Այս հանգամանքով են պայմանավորված Ազգային ժողովի իրավական կարգավիճակի էական գծերը, ինչպես նաև այդ մարմնի կենտրոնական տեղը և վճռորոշ դերը պետական համակարգում: Մասնավորապես, առաջնային մանդատի առկայությունն ինքնին ենթադրում է, որ որևէ պետական մարմին կամ պաշտոնատար անձ լիազորված չէ ցանկացած պայմաններում որոշում ընդունել Ազգային ժողովի արձակման մասին: Ազգային ժողովը կարող է արձակվել միայն իրավունքի ուժով՝ Սահմանադրությամբ հստակ և սպառիչ կերպով սահմանված իրավիճակներում:

Ազգային ժողովի նոր կարգավիճակի առանձնահատկություններից է նաև դրա նոր՝ կազմակերպչական գործառույթը: Մինչ փոփոխությունները Ազգային ժողովը մասնակիորեն մասնակցում էր միայն մի քանի պետական մարմինների կազմավորման գործընթացին (օրինակ, սահմանադրական դատարանի ինը անդամներից նշանակում էր հինգին) կամ նշանակումներ էր կատարում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ (օրինակ, նշանակում էր կենտրոնական բանկի նախագահին):[155]

Իրական բովանդակություն ստացավ Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունը. Կառավարության կամ վարչապետին անվստահություն հայտնելու դեպքում հրաժարականի այլընտրանք սահմանված չէ:

[154] Տե՛ս http://www.parliament.am/international.php?id=3

[155] Միակ բացառությունը մարդու իրավունքների պաշտպանն էր, որին Ազգային ժողովն ընտրում էր առանց այլ մարմինների իրավական միջամտության:

Նշված փոփոխությունների արդյունքում Ազգային ժողովը դարձավ պետական իշխանության ամբողջ համակարգի կենտրոնը, որի կողմից (կամ վճռորոշ մասնակցությամբ) ձևավորվում են պետական իշխանության մյուս բոլոր կառույցները։

3.2. Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակը ՀՀ խորհրդարանական կառավարման մոդելում

Կիսանախագահական կառավարման համակարգից անցումը դեպի խորհրդարանական կառավարման մոդել ինքնին ենթադրում է Հանրապետության նախագահի գործառույթների և լիազորությունների էական սահմանափակումներ։ Այս հանգամանքը հատուկ ընդգծված է Վենետիկի հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ» եզրակացության 35-րդ կետում, որտեղ շեշտվում է. «Հանձնաժողովի կողմից նախատեսված բարեփոխումների իրականացումը կպահանջի վերանայել նախագահական լիազորությունները։ Նման վերանայման նպատակը կլինի նախագահի լիազորությունները խորհրդարանական համակարգին համահունչ դարձնելը։ Այն պետք է նաև կանխի գործադրի ներսում իրավասության կամ իշխանության առնչությամբ վեճերը նախագահի և Կառավարության միջև։ Նախագահի լիազորությունները, մասնավորապես, Սահմանադրության 55-րդ հոդվածում նշվածները, պետք է կրճատել, և պետք է խուսափել նախագահի և Կառավարության լիազորությունների ցանկացած զուգահեռությունից»։[156]

Կարծում ենք, որ խորհրդարանական կառավարման մոդելում Հանրապետության նախագահի լիազորությունների կրճատումը պետք է նպաստի (և կնպաստի) ոչ միայն նախագահի և Կառավարության միջև վեճերի կանխմանը և թույլ կտա խուսափել նրանց միջև լիազորությունների «զուգահեռությունից», այլև վճռորոշ կերպով կնպաստի դատական իշխանության անկախության մակարդակի բարձրացմանը։[157]

---

[156] Տե՛ս http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/venetikezrakacutyunhay.pdf
[157] Մանրամասն տե՛ս ատենախոսության 3.4 բաժնում։

Այս հարցում կարելի է զուգահեռներ անցկացնել ԳԴՀ սահմանադրական զարգացման հետ: Վայմարյան Հանրապետության սահմանադրությամբ ձևավորվել էր դուալիստական համակարգ, որում նախագահը դիտարկվում էր խորհրդարանի հետ միասին և միաժամանակ որպես նրան հակակշիռ՝ հանդիսանալով սահմանադրական կարգերի հենք: ԳԴՀ խորհրդարանական սահմանադրությունը հրաժարվեց այդ դուալիստական (խորհրդարանանախագահական) կառուցվածքից՝ զրկելով նախագահին ինքնուրույն և որոշիչ մասնակցությունից բարձրագույն պետական ղեկավարման հարցերում:[158]

Հանրապետության նախագահի լիազորությունների կրճատումը, թերևս, անխուսափելիորեն պետք է զուգորդվեր նախագահի ընտրության կարգի փոփոխությամբ, քանի որ առաջնային մանդատ ունեցող և թույլ լիազորություններով օժտված նախագահի ինստիտուտում կա ներքին հակասություն, որը կարող է նաև հակասություններ առաջացնել (հիմնականում՝ քաղաքական բնույթի) նախագահ-խորհրդարան-կառավարություն հարաբերությունների համակարգում: Ուստի բնական է, որ փոփոխված Սահմանադրության 125-րդ հոդվածով սահմանվեց Հանրապետության նախագահի ընտրության նոր սկզբունք՝ նախագահի ընտրություն Ազգային ժողովի կողմից:

Հատկանշական է, որ Հանրապետության նախագահի ընտրության գործընթացում Ազգային ժողովի խմբակցությունները կամ մշտական հանձնաժողովները որևէ դերակատարում չունեն՝ չնայած հենց խմբակցությունները պետք է նպաստեն Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը (հոդ. 105, մաս 1), և խորհրդարանի գործունեության բոլոր մյուս ոլորտներում սահմանադրորեն ապահովված է խմբակցությունների ակտիվ մասնակցությունը: Մասնավորապես, խմբակցություններին վերապահված է օրենսդրական նախաձեռնության իրավունք (հոդ. 109, մաս 1), նրանք ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք (հոդ. 113, մաս 1), Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից (հոդ. 104, մաս 1) և այլն: Ինչ վերաբերում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներին, հենց այդ

[158] Տե՛ս Конрад Хессе, Основы конституционного права ФРГ, М., Юридическая литература, 1981, էջ 308:

հանձնաժողովների առաջարկությամբ են ընտրվում գլխավոր դատախազը (հոդ. 177, մաս 1), մարդու իրավունքների պաշտպանը (հոդ. 192, մաս 1) և կազմավորվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (հոդ. 195, մաս 2), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (հոդ. 197, մաս 2) և այլն։

Մինչդեռ Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունքը վերապահված է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդին (հոդ. 125, մաս 3)։ Կարծում ենք, որ նման մոտեցումը համոզիչ կերպով հիմնավորվում է Հանրապետության նախագահին կուսակցական (քաղաքական) ազդեցություններից զերծ պահելու նպատակով։

Նախագահի կարգավիճակի փոփոխությունը ենթադրում է նաև այդ պաշտոնը զբաղեցնող անձի նկատմամբ ներկայացվող պահանջների փոփոխություն։ Սահմանադրության 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք»։ Նույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով ամրագրված են ևս երկու պահանջներ. «Նույն անձը Հանրապետության նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ» (մաս 2), «Հանրապետության նախագահին իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ» (մաս 5)։

Փորձենք մեզ հետաքրքրող՝ ՀՀ կառավարման մոդելի կատարելագործման տեսանկյունից վերլուծել Հանրապետության նախագահին ներկայացվող պահանջների փոփոխությունները։

Նախ՝ պետք է արձանագրել, որ խստացվել է նախագահի անձին ներկայացվող տարիքային ցենզը (երեսունհինգ տարեկանից՝ քառասուն տարեկան) և մեղմացվել են քաղաքացիության և Հայաստանի Հանրապետությունում բնակության ցենզերը (տասը տարուց՝ վեց տարի)։ Այս փոփոխությունները բովանդակային առումով էական չեն և դրանք հիմնականում կապված են ՀՀ նախագահին ներկայացվող պահանջները խորհրդարանական կառավարման համակարգում նախագահի անձին ներկայացվող ավանդական պահանջներին համահունչ դարձնելու ձգտումով։ Թերևս, նույն

հանգամանքով է բացատրվում նաև միայն մեկ անգամ նախագահի պաշտոնում ընտրվելու սահմանափակումը։

Բովանդակային առումով կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ Հանրապետության նախագահ կարող է ընտրվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձը։ Դրանով իսկ բացառվում է երկքաղաքացիների՝ Հանրապետության նախագահի պաշտոն զբաղեցնելու հնարավորությունը։ Կարծում ենք, որ սա ճիշտ մոտեցում է, որով փաստորեն ուղղվեց նախորդ սահմանադրական փոփոխությունների ընթացքում թույլ տրված սխալը։ Կարևոր է նաև հայերեն լեզվին տիրապետելու պահանջը։

Սակայն առավել կարևոր է հոդվածի 5-րդ մասով սահմանված այն դրույթը, որի համաձայն՝ նախագահն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ։ Այս պահանջի ամրագրման նպատակն է զերծ պահել նախագահին նեղ կուսակցական և այլ մասնավոր շահերի ազդեցությունից և նպաստել այնպիսի իրավիճակի ստեղծմանը, որի պայմաններում Հանրապետության նախագահը կարող է իր «լիազորություններն իրականացնելիս լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետական և համազգային շահերով (…)» (հոդ. 127, մաս 3)։

Հանրապետության նախագահի լիազորությունների կրճատման նախապայման է նրա գործառույթների սահմանափակումը։ Մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները Հանրապետության նախագահի գործառույթները սահմանված էին Սահմանադրության 49-րդ հոդվածով, որի համաձայն՝ «Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը»։ Հանրապետության Նախագահի գործառույթ էր նաև Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորումը։ Փոփոխված Սահմանադրության 123-րդ հոդվածով ամրագրվեց

Հանրապետության նախագահի միայն մեկ գործառույթ՝ հետևել Սահմանադրության պահպանմանը։[159]

Պետական իշխանության մարմինների համակարգում Հանրապետության նախագահի նոր դերը բնորոշելու համար վերլուծենք նրա լիազորությունների համակարգը։

Նախ պետք է արձանագրել, որ Սահմանադրությամբ հատուկ առանձնացվում են Հանրապետության նախագահի լիազորությունների երկու խումբ՝ արտաքին քաղաքականության ոլորտում (հոդ. 132) և զինված ուժերի բնագավառում (հոդ. 133)։ Սակայն օրենքով սահմանված ժամկետով գլխավոր շտաբի պետի նշանակման լիազորությունն անհասկանալի պատճառներով ամրագրվել են ոչ թե Սահմանադրության 133–րդ հոդվածով, այլ 155-րդ հոդվածի 3-րդ մասով։ Բացի դրանից՝ Սահմանադրության հինգերորդ գլխի («Հանրապետության նախագահը») մի շարք այլ հոդվածներով Հանրապետության նախագահին վերապահված են տարաբնույթ այլ լիազորություններ, որոնց դասակարգումը կարող է ունենալ ոչ միայն որոշակի տեսական, այլև գործնական նշանակություն, քանի որ հնարավորություն կընձեռնի համակարգված կերպով վերլուծել նախագահի լիազորությունները։

Ինչպես ցանկացած այլ բարդ համակարգ, Հանրապետության նախագահի լիազորությունները կարելի է դասակարգել՝ հիմնվելով տարբեր չափանիշների վրա։ Թերևս, առավել համապարփակ ձևով այդ լիազորությունները կարելի է ստորաբաժանել երկու հիմնական խմբերի՝ ա) լիազորություններ, որոնք Հանրապետության նախագահը կարող է իրականացնել սեփական նախաձեռնությամբ և իրավունքի ուժով, այսինքն՝ լիազորություններ՝ այս եզրույթի բուն իրավաբանական իմաստով՝ որպես իրավունքի և պարտականության միասնական ամբողջություն և բ) լիազորություններ, որոնք Հանրապետության նախագահը կարող է իրականացնել միայն կառավարության կամ վարչապետի կողմից համապատասխան առաջարկություն ներկայացվելու դեպքում։ Կարծում ենք, որ որպես հատուկ խումբ կարելի է առանձնացնել Հանրապետության նախագահի

[159] Նկատենք, որ որոշակի հակասություն է նկատվում Սահմանադրության 123-րդ հոդվածի վերտառության՝ «Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները» և բովանդակության միջև. սահմանված է ոչ թե մի քանի, այլ միայն մեկ գործառույթ։

լիազորությունները դատական իշխանության կազմավորման և գործառնության ոլորտում։

Լիազորությունների առաջին խումբն են կազմում Ազգային ժողովի ընդունած օրենքի ստորագրումը և հրապարակումը կամ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելը (հոդ. 129), օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերի և հետկանչգրերի ընդունումը (հոդ. 132, մաս 3), օրենքով սահմանված դեպքերում և կարգով ՀՀ քաղաքացիություն շնորհելու և քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերի լուծումը (հոդ. 134), օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատապարտյալներին ներում շնորհելու հարցի լուծումը (հոդ. 135), օրենքով սահմանված դեպքերում և կարգով ՀՀ շքանշաններով և մեդալներով պարգևատրելը և պատվավոր կոչումներ շնորհելը (հոդ. 136), օրենքով սահմանված դեպքերում և կարգով դասային աստիճաններ շնորհելը (հոդ. 137)։

Այս խմբի լիազորություններից իր բովանդակությամբ առանձնանում է Սահմանադրության 129-րդ հոդվածով ամրագրված լիազորությունը, քանի որ միայն այս լիազորության իրականացումն է գործնականում համապատասխանում 123-րդ հոդվածով ամրագրված՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու նախագահի գործառույթին։ Պետք է նկատել, որ նոր պայմաններում նախագահի վետոյի իրավունքը փոխարինվել է օրենքի սահմանադրականությունը ստուգելու լիազորությամբ։

Այս խմբի հաջորդ լիազորությունը (հոդ. 132, մաս 3) կրում է զուտ արարողակարգային բնույթ։ Բոլոր մյուս լիազորություններն ունեն իրավակիրառ բնույթ, ենթադրում են անհատական իրավական ակտերի ընդունում։

Հանրապետության նախագահին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունների երկրորդ խումբը կարելի է դասակարգել երկու ենթախմբերի՝ Կառավարության առաջարկությամբ իրականացվող լիազորություններ և վարչապետի առաջարկությամբ իրականացվող լիազորություններ։ Առաջին ենթախումբն են կազմում Կառավարության հրաժարականի անհապաղ ընդունումը (հոդ. 130), միջազգային պայմանագրերի կնքումը (հոդ. 132, մաս 1, կետ 1),

Կառավարության առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերի հաստատումը, կասեցումը կամ չեղյալ հայտարարելը (հոդ. 132, մաս 2)։

Երկրորդ ենթախումբն են կազմում վարչապետի առաջարկությամբ իրականացվող լիազորությունները՝ կառավարության կազմի փոփոխումը (հոդ. 131), օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչների նշանակումը և հետ կանչելը (հոդ. 132 մաս 2), օրենքով սահմանված դեպքերում և կարգով բարձրագույն դիվանագիտական կոչումների շնորհումը (հոդ. 132, մաս 3), օրենքով սահմանված դեպքերում և կարգով զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակումն ու ազատումը (հոդ. 133, մաս 1), օրենքով սահմանված դեպքերում և կարգով բարձրագույն զինվորական կոչումների շնորհումը (հոդ. 133, մաս 2), օրենքով սահմանված ժամկետով գլխավոր շտաբի պետի նշանակումը (հոդ. 155, մաս 3)։

Այստեղ նկատվում է որոշակի օրինաչափություն։ Կառավարության առաջարկությամբ Հանրապետության նախագահի կողմից իրականացվող լիազորություններն առնչվում են օրենսդրական ոլորտին, իսկ վարչապետի առաջարկությամբ իրականացվող լիազորությունները՝ իրավակիրառ ոլորտին։

Իշխանության դատական թևի կազմավորման և գործունեության ոլորտում Հանրապետության նախագահի լիազորություններն են Ազգային ժողովին սահմանադրական դատարանի երեք դատավորների թեկնածուների առաջադրումը (հոդ. 166, մաս 1), Ազգային ժողովի առաջարկությամբ Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակումը (հոդ. 166, մաս 3), Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակումը (հոդ. 166, մաս 4), առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների նշանակումը (հոդ. 166, մաս 6), առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների նշանակումը (հոդ. 166, մաս 7), Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասով, 139-րդ հոդվածի 2-րդ մասով, 150-րդ հոդվածով, ինչպես նաև 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը։

Այդ լիազորությունների իրականացման հետ կապված հիմնախնդիրները մանրամասն քննարկվելու են ատենախոսության 3.3 բաժնում: Այստեղ միայն արձանագրենք, որ սահմանադրական փոփոխությունների ընթացքում փորձ է կատարվել դատական կորպուսի կազմավորման ընթացակարգերում ամրագրել որոշակի զսպումներ և հակակշիռներ՝ Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի միջև: Այսպես, Սահմանադրական դատարանի երեք դատավորներ Ազգային ժողովը նշանակում է Հանրապետության նախագահի առաջարկությամբ, իսկ մյուս վեց դատավորներից երեքականին՝ համապատասխանաբար Կառավարության և դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Միևնույն ժամանակ Հանրապետության նախագահը Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Ազգային ժողովի առաջարկությամբ, իսկ առաջին ատյանի և վերաքննիչ դատավորներին, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին ու Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

Հանրապետության նախագահի լիազորությունների բնույթի համարժեք մեկնաբանման համար սկզբունքային նշանակություն ունի Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, որի համաձայն՝ իր լիազորությունների կատարման առնչությամբ Հանրապետության նախագահը «կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմնին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է սահմանադրական դատարան»: Արդյունքում ստացվում է, որ Հանրապետության նախագահն իր լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերը լուծելիս էականորեն սահմանափակված է այլ մարմինների կողմից ներկայացվող առաջարկություններով կամ միջնորդություններով: Նա կարող է մերժել առաջարկությունը (միջնորդությունը) միայն երկու դեպքում՝ եթե իրավասու մարմինն ընդունում է իր առարկությունը կամ եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ համապատասխան ակտը հակասում է Սահմանադրությանը: Հակառակ դեպքում համապատասխան ակտը ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով (հոդ. 139, մաս 2):

Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման այս ընթացակարգը չի տարածվում միայն որոշ լիազորությունների վրա, որոնց իրականացման համար սահմանված է հատուկ կարգ։ Այսպես, Սահմանադրության 129-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նախագահը չի կատարում նույն հոդվածով սահմանված պահանջները (քսանմեկօրյա ժամկետում չի ստորագրում և հրապարակում Ազգային ժողովի ընդունած օրենքը կամ նույն ժամկետում չի դիմում Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով կամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանն օրենքի համապատասխանության մասին որոշում կայացնելուց հետո հնգօրյա ժամկետում չի ստորագրում և հրապարակում օրենքը), ապա Ազգային ժողովի նախագահը ստորագրում և հրապարակում է օրենքը։ Ակնհայտ է, որ այս մեխանիզմը սկզբունքային առումով չի տարբերվում Սահմանադրության 139-րդ հոդվածով սահմանված մեխանիզմից։ Միակ տարբերությունն այն է, որ 139-րդ հոդվածի կիրառման դեպքում համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով, իսկ երկրորդ դեպքում՝ Ազգային ժողովի նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո։ Թերևս, այդպիսի տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենքը կարող է ուժի մեջ մտնել միայն պաշտոնական հրապարակումից հետո, և հենց հրապարակման իրավազորությունն է գործնականում վերապահված Ազգային ժողովի նախագահին։

Բացառություն կազմող երկրորդ լիազորությունն ամրագրված է Սահմանադրության 130-րդ հոդվածով, որի համաձայն՝ «Սահմանադրության 158-րդ հոդվածով սահմանված դեպքերում Հանրապետության նախագահն անհապաղ ընդունում է Կառավարության հրաժարականը»։ Սա արդեն ոչ թե լիազորություն է՝ այս եզրույթի բուն իրավաբանական իմաստով, այլ պարտականություն, որը չկատարելու դեպքում Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել՝ «Սահմանադրության կոպիտ խախտման համար» (հոդ. 141, մաս 1)։ Հատկանշական է Վենետիկի հանձնաժողովի այն առաջարկը, որ վարչապետին անվստահություն հայտնելու դեպքում կառավարության հրաժարականը պետք է հետևի «իրավունքի ուժով»։

Բացառություն կազմող երրորդ լիազորությունն ամրագրված է Սահմանադրության 128-րդ հոդվածով, որի համաձայն՝ Հանրապետության նախագահը իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ կարող է ուղերձ հղել Ազգային ժողովին: Կարծում ենք, որ կան բավարար հիմքեր կան՝ եզրահանգելու համար, որ սա նախագահի այն եզակի լիազորություններից է, որը համապատասխանում է եզրույթի իրավաբանական իմաստին. նախագահը սեփական կամարտահայտությամբ կարող է ուղերձ հղել կամ չհղել:

Իրավական բովանդակությամբ՝ այս լիազորությանը համահունչ է Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության 138-րդ հոդվածով սահմանված՝ պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակման լիազորությունը: Այս դեպքում նույնպես նախագահը կարող է դրսևորել սեփական կամարտահայտությունը՝ այլ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից անկախ, միայն օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

Այսպիսով, Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակի հիմունքների և լիազորությունների համակարգի վերլուծության արդյունքում առաջ է գալիս այն եզրահանգումը, որ նախագահի լիազորություններն էականորեն սահմանափակված են: Ավելին, Սահմանադրությամբ ամրագրված են նույնիսկ այդ սահմանափակ լիազորությունների իրականացման այնպիսի ընթացակարգեր, որոնք նախագահին փաստորեն զրկում են սահմանված լիազորություններն ինքնուրույն իրականացնելու հնարավորությունից: Ուստի կարելի է համաձայնվել Վենետիկի հանձնաժողովի այն եզրահանգման հետ, որ նախագահն ունի շատ սահմանափակ ինքնավար լիազորություններ և, մասնավորապես, օրենսդրական գործընթացում նախագահի դերակատարությունը զուտ ձևական բնույթ է կրում:[160]

3.3. Կառավարությունը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում հստակեցվեց Կառավարության տեղը գործադիր իշխանության համակարգում: Բանն

[160] Տե՛ս http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm

այն է, որ Սահմանադրության 1995 թվականի տեքստի 85-րդ հոդվածով սահմանված էր. «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Մինչդեռ ակնհայտ է, որ գործադիր իշխանությունը կոչված է իրականացնելու լայնածավալ և տարաբնույթ գործառույթներ, որոնք կարող են իրականացվել ոչ թե մեկ մարմնի, այլ պետական մարմինների ամբողջական համակարգի միջոցով: Ինչպես նշում է Ռ. Վ. Ենգիբարյանը, «Երկրի կառավարությունը գործադիր իշխանության մարմինների բազմակողմանի և բազմաստիճան բուրգի գագաթն է, որը ներառում է կառավարությանը հաշվետու բազմազան և տարաբնույթ՝ ոչ միայն կենտրոնական, այլև տարածքային և տեղական մարմիններ և կազմակերպություններ»:[161]

Ուստի վերը նշված սահմանադրական ձևակերպումը տեսականորեն ճիշտ չէր և գործնականում չէր համապատասխանում առկա իրողություններին: 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների ժամանակ այդ սխալը որոշ չափով շտկվեց: Քննարկվող դրույթը հանվեց Սահմանադրության տեքստից և փոխարենը 85-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվեց, որ «Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների»: Դրանով իսկ որոշակիորեն սահմանազատվեցին կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների լիազորությունները:

Սակայն գործադիր իշխանության համակարգում կառավարության տեղի անհստակության հարցը պահպանվեց: Վերջապես 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 146-րդ հոդվածի 1-ին մասով հստակորեն ամրագրվեց. «Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է»: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվեց Կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների փոխհարաբերությունների սկզբունքը. «Կառավարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը»: Հստակեցվեց նաև պետական կառավարման մարմինների համակարգը. «Պետական

[161] Տե՛ս Енгибарян Р. В. Конституционное развитие в современном мире: основные тенденции. М., 2010, էջ 405:

կառավարման մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով» (հոդ. 159)։

Սահմանադրական այդ դրույթների ամրագրումն ունի կարևոր նշանակություն Կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների հարաբերությունների իրավական կարգավորման, մասնավորապես՝ դրանց միջև իրավասությունների տարանջատման համար, որի սկզբունքները սահմանվեցին Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով. «Կառավարության իրավասությանն են ենթակա գործադիր իշխանությանը վերաբերող բոլոր այն հարցերը, որոնք վերապահված չեն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների»։

Միևնույն ժամանակ, Սահմանադրության 152-րդ հոդվածով սահմանվեցին վարչապետի և Կառավարության մյուս անդամների իրավասությունները։ Քննարկվող բոլոր փոփոխություններով հստակեցվեցին պետական կառավարման մարմինների համակարգը, Կառավարության տեղն ու դերը այդ համակարգում, Կառավարության և համակարգի մյուս մարմինների փոխհարաբերությունները, ինչպես նաև Կառավարության անդամների (վարչապետի, փոխվարչապետների, Կառավարության մյուս անդամների) իրավասությունների շրջանակները և փոխհարաբերությունների հիմքերը։

Խորհրդարանական կառավարման համակարգի ներդրման կապակցությամբ էական փոփոխություններ կատարվեցին Կառավարության գործունեության իրավական կարգի սահմանման բնագավառում։ Եթե մինչև սահմանադրական փոփոխությունները կառավարության կառուցվածքը սահմանվում էր օրենքով, իսկ գործունեության կարգը՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով, ապա նոր պայմաններում նախատեսվեց, որ «նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը Կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով» (հոդ. 147, մաս 2)։ Ավելին, հենց Սահմանադրությամբ ամրագրվեց փոխվարչապետների և նախարարների առավելագույն թիվը։

Դրանով իսկ Կառավարությունն ստացավ իր կառուցվածքի և գործունեության կարգի սահմանման ընթացակարգի և բովանդակության վրա վճռորոշ ազդեցություն

գործելու հնարավորություն, քանի որ, ինչպես արդեն նշել էինք, Սահմանադրության 109-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ այն օրենքների նախագծերը, որոնց օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է Կառավարությանը, քվեարկության կարող են դրվել միայն Կառավարության համար ընդունելի ուղղումներով, իսկ 147-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումից միանշանակ բխում է, որ նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը սահմանող օրենքների նախագծերի մասով օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է Կառավարությանը: Եթե դրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ Կառավարությունը իր ներկայացրած օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը, և Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման նախագիծն ընդունվելու դեպքում դրա ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված, ապա ակնհայտ է դառնում, որ գործնականում Կառավարությունը հնարավորություն ունի կանխորոշելու համապատասխան օրենքների ոչ միայն ընդհանուր բովանդակությունը, այլ նաև կարգավորման մանրամասները:

Կառավարության սահմանադրորեն ամրագրված գործառույթներն առանձնացնելու, դրանք Կառավարության լիազորություններից տարանջատելու համար հիմք պետք է ընդունել Սահմանադրության՝ «Կառավարության կարգավիճակը և գործառույթները» վերտառությամբ 146-րդ հոդվածի իրավադրույթները: Հոդվածի 1-ին մասով տրվում է Կառավարության կարգավիճակի ընդհանուր բնութագիրը, 4-րդ մասը վերաբերում է Կառավարության լիազորություններին: Հետևաբար, Կառավարության գործառույթներն ամրագրված են հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում: Դրանք են իր ծրագրի հիման վրա պետության արտաքին և ներքին քաղաքականության մշակումն ու իրականացումը (մաս 2), պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը (մաս 3):

Իհարկե, այս սահմանադրական բնորոշումը չափազանց ընդհանուր է ձևակերպված: Ըստ էության, ոչ թե սահմանված են Կառավարության կոնկրետ գործառույթները, այլ դրա գործունեության հիմնական ոլորտները՝ ներքին քաղաքական և արտաքին քաղաքական: Մինչդեռ այդ երկու ոլորտներում

Կառավարությունը գործնականում իրականացնում է բազմապիսի կոնկրետ գործառույթներ: Մասնավորապես, Կառավարության գործառույթների շարքին պետք է դասել Կառավարության տնտեսական և ֆինանսական գործառույթները (հոդ. 154), երկրի պաշտպանության գործառույթը (հոդ. 155) և մի շարք այլ գործառույթներ (սոցիալական, մշակութային, բնապահպանական և այլն):

Այդ բազմազան և բազմաբովանդակ գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու համար Կառավարությունը պետք է օժտված լինի համապատասխան լիազորություններով, որոնք, բնականաբար, հնարավոր չէ ամրագրել սահմանադրական մակարդակով: Ուստի հիմնավորված է քննարկվող հոդվածի 4-րդ մասով ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ «Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով»: Հետևաբար, Կառավարության լիազորությունները կարելի է տարանջատել երկու հիմնական խմբի՝ սահմանադրական լիազորություններ և օրենքներով վերապահված լիազորություններ:

Բազմաթիվ օրենքներով Կառավարությանը վերապահված են բազմաթիվ և տարաբնույթ լիազորություններ հասարակական կյանքի գործնականում բոլոր ոլորտներում: Լիազորությունների այդ լայնածավալ համակարգը հնարավոր չէ վերլուծել մեկ ատենախոսության շրջանակներում: Բացի դրանից՝ այդպիսի վերլուծությունը դուրս է տվյալ ատենախոսության հետազոտական խնդիրների շրջանակից:

Խորհրդարանական կառավարման կոնկրետ մոդելի առանձնահատկությունների բնորոշման համար կարևոր նշանակություն ունի Կառավարության հենց սահմանադրական լիազորությունների գիտական հետազոտությունը, քանի որ հենց այդ լիազորությունների համակարգով են բնորոշվում Կառավարության տեղն ու դերը պետական իշխանության մարմինների համակարգում, խորհրդարան-Կառավարություն-Հանրապետության նախագահ-դատական իշխանություն քառանկյունի հարաբերությունների բնույթը, հետևաբար նաև կառավարման մոդելի առանձնահատկությունները:

Ատենախոսության թեմայի նպատակներից ելնելով՝ Կառավարության սահմանադրական լիազորությունները կարելի է բաժանել որոշ խմբերի:

Նախ պետք է առանձնացնել այն լիազորությունները, որոնք Կառավարությանը վերապահված էին ինչպես մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները, այնպես էլ սահմանադրական բարեփոխումներից հետո. օրենսդրական նախաձեռնության իրավունքը (հոդ. 109), Ազգային ժողովին պետական բյուջեի նախագիծ ներկայացնելու լիազորությունը (հոդ. 110) և այլն: Նմանատիպ լիազորություններ Կառավարությանը, որպես կանոն, վերապահվում են ինչպես կիսանախագահական, այնպես էլ խորհրդարանական կառավարման բոլոր մոդելներում: Ուստի այդ լիազորությունների հատուկ վերլուծության կարիքը բացակայում է:

Երկրորդ խումբն են կազմում այն լիազորությունները, որոնք կիսանախագահական կառավարման համակարգում վերապահված էին Հանրապետության Նախագահին, իսկ խորհրդարանական կառավարման անցման առնչությամբ վերալիազորվել են Կառավարությանը կամ վարչապետին: Կառավարությանը փոխանցված հենց այդ լիազորությունների համակարգն է կազմում խորհրդարանական կառավարման բովանդակությունը: Այդ լիազորություններն են՝

- միջազգային պայմանագրեր վավերացնելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու մասին Ազգային ժողովին առաջարկություն ներկայացնելու լիազորությունը (հոդ. 116),
- համաներման մասին օրենք ընդունելու վերաբերյալ Ազգային ժողովին առաջարկություն ներկայացնելու լիազորությունը (հոդ. 117),
- պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին Ազգային ժողովին առաջարկություն ներկայացնելու լիազորությունը (հոդ. 118),
- ռազմական դրություն հայտարարելու լիազորությունը (հոդ. 119),
- արտակարգ դրություն հայտարարելու լիազորությունը (հոդ. 120),
- նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին օրենքի նախագիծ ներկայացնելու լիազորությունը (հոդ. 147),
- զինված ուժերը կառավարելու և զինված ուժերի կիրառման մասին որոշում ընդունելու լիազորությունը (հոդ. 155):

Խորհրդարանական կառավարման մոդելի ներդրման առնչությամբ Կառավարությանը կամ վարչապետին վերապահվեցին նաև նախկինում Հանրապետության Նախագահի կողմից սեփական հայեցողությամբ լուծվող հարցերի վերաբերյալ Հանրապետության նախագահին առաջարկություններ ներկայացնելու լիազորություններ: Այսպես, սահմանադրական փոփոխությունների արդյունքում միայն Կառավարության առաջարկությամբ Հանրապետության նախագահը կարող է կնքել միջազգային պայմանագրեր, օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաստատել, կասեցնել կամ չեղյալ հայտարարել վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը (հոդ. 132): Նույն հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ է նշանակում և հետ կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին, ինչպես նաև նշանակում և ազատում զինված ուժերի և այլ ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը և շնորհում բարձրագույն զինվորական կոչումներ (հոդ. 133):

Լիազորությունների այդպիսի ընդլայնման արդյունքում ՀՀ Կառավարությունը պետական կառավարման համակարգում ձեռք է բերում այն կարգավիճակը և դերը, որն ընդհանրապես բնորոշ է կառավարությանը խորհրդարանական կառավարման բոլոր մոդելներում և որի մասին բազմիցս նշվել է իրավաբանական գրականության մեջ: Կառավարությունն իրականացնում է բարձրագույն քաղաքական ղեկավարությունը և պետության գործերի ընդհանուր կառավարումը: Կառավարության գործունեության մեջ արտահայտվում են և գործնականում իրացվում են առավել ընդհանուր և էական հասարակական շահերը: Այն հանդես է գալիս որպես պետության արտաքին և ներքին քաղաքականության իրացումը, սահմանադրական կարգի պահպանումը և պաշտպանությունն ապահովող հիմնական պետական մարմին: Կառավարությունը վճռորոշ դեր է կատարում պետության քաղաքականության հիմնական նպատակների մշակման և ձևակերպման, դրանց հասնելու հիմնական ուղիների և միջոցների որոշման գործում:[162]

[162] Տե՛ս Конституционное право зарубежных стран. М.,2008, էջ 334; Енгибарян Р.В., նշված աշխ., էջ 385, 404 և այլն:

Խորհրդարանական կառավարման ձևի անցնելիս բնականաբար կիրառվեցին Կառավարության կազմավորման և քաղաքական պատասխանատվության (հրաժարականի) հետ կապված հարաբերությունների սահմանադրական կարգավորման սկզբունքային նոր մոտեցումներ։ Սահմանվեց Կառավարության կազմավորման խորհրդարանական եղանակ։

Վարչապետի ընտրության ու նշանակման և Կառավարության կազմավորման գործընթացները Սահմանադրության 149-րդ և 150-րդ հոդվածներով հստակ սահմանազատված են։

Տարբեր են նաև մոտեցումները Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ Կառավարության հրաժարականի և որպես հետևանք՝ վարչապետի պաշտոնը թափուր մնալու կամ վարչապետի պաշտոնն այլ պատճառներով թափուր մնալու դեպքերում։

Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին։ Ուրիշ է կարգավորումն այն դեպքում, երբ վարչապետի պաշտոնը թափուր է մնում ոչ թե Ազգային ժողովի ընտրությունների հետ կապված, այլ Սահմանադրության 158-րդ հոդվածով նախատեսված մյուս պատճառներով՝ Կառավարությանը վստահություն չհայտնելու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացնելու և այլն։ Այս դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո յոթնօրյա ժամկետում Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ։ Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ։ Վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից առաջադրված վարչապետի թեկնածուները։ Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով (հոդ. 149, մաս 2, 3)։

Թերևս, սահմանադրական կարգավորումների այդպիսի տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրորդ դեպքում վարչապետի պաշտոնի թափուր մնալը կարող է հանգեցնել (կամ լինել հետևանք) Ազգային ժողովում մեծամասնության քայքայման, երբ ընտրությունների արդյունքում ձևավորված «կայուն մեծամասնությունը» այլևս ի վիճակի չէ ներկայացնելու վարչապետի նոր

թեկնածու։ Ուստի, կարծում ենք, որ այս կարգավորման հիմնական նպատակն է Ազգային ժողովի հաճախակի արձակումներից խուսափելը։

Այս առումով հատկանշական է այն դրույթը, որի համաձայն՝ վարչապետի ընտրության երկրորդ փուլում թեկնածուների առաջադրման իրավունքը վերապահվում է ոչ թե խմբակցություններին, այլ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին։ Դրանով խորհրդարանական նոր մեծամասնության ձևավորման հնարավորություն է ընձեռվում՝ արդեն նույնիսկ անկախ այն հանգամանքից՝ որ խմբակցության անդամ են այդ մեծամասնությունը կազմող առանձին պատգամավորները։ Իսկ կոալիցիոն սկզբունքով կառավարության ձևավորմանը առավել համահունչ է նաև կառավարության գործունեության կոլեգիալ կարգը։[163]

Ավելացնենք, որ նոր ընտրությունների ժամանակ վարչապետ չընտրվելու դեպքում Ազգային ժողովի՝ իրավունքի ուժով արձակումը յուրահատուկ միջոց է, որի նպատակն է ապահովել խորհրդարանական մեծամասնության կայունությունը կամ ձևավորել, արդեն Ազգային ժողովում, Կառավարությանն աջակցող նոր մեծամասնություն։

Կառավարության կազմավորման հարցում վճռորոշ է վարչապետի դերը։ Զևական-իրավական տեսանկյունից Հանրապետության նախագահն է նշանակում փոխվարչապետներին և նախարարներին։ Սակայն նախագահը կարող է մերժել համապատասխան պաշտոնների նշանակումները միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում այն մասին, որ վարչապետի կողմից առաջադրված թեկնածուն չի համապատասխանում Սահմանադրությամբ Կառավարության անդամին ներկայացվող պահանջներին։ Հանրապետության նախագահի կողմից կառավարության անդամի նշանակումը մերժելու ցանկացած այլ դեպքում «համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով»։ Այդպիսով, վարչապետի կողմից առաջադրված՝ Սահմանադրությամբ Կառավարության անդամին ներկայացվող պահանջներին համապատասխանող անձը Կառավարության անդամ է նշանակվում կամ

[163] Դանիելյան Գ. Կոալիցիոն կառավարություն (իրավական ասպեկտներ)// Պետություն և իրավունք, 2012, N 1-2 (55-56), էջ 59։

Հանրապետության նախագահի կողմից, կամ իրավունքի ուժով: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Կառավարության կազմում փոփոխություններ են կատարվում վարչապետի առաջարկությամբ, և այս դեպքում նույնպես Հանրապետության նախագահը գործնականում չի կարող մերժել այդպիսի փոփոխության կատարման մասին վարչապետի առաջարկությունը (հակառակ դեպքում 139-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով «համապատասխան ակտը ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով»), ապա ակնհայտ է դառնում վարչապետի վճռորոշ դերը պետական ինստիտուտների համակարգում:

Պետք նկատել, որ սահմանադրորեն ամրագրված ՀՀ խորհրդարանական կառավարման մոդելում կառավարության կազմավորման կարգը կիրառվում է միայն սահմանափակ թվով երկրներում՝ ԳԴՀ, Իսպանիա, Ճապոնիա: Այդ կարգին առավել բնորոշ է Հանրապետության նախագահի նվազագույն մասնակցությունը կառավարության կազմավորման գործընթացին:[164] Այս առումով կարելի է հիշատակել Կոնրադ Հեսսեի նկատառումն այն մասին, որ ԳԴՀ հիմնական օրենքը, կառավարության կազմավորման հարցում նվազեցնելով նախագահի դերը և ուժեղացնելով դաշնային կանցլերի (վարչապետի) և Բունդեսթագի դերեր, փորձել էր խուսափել Վայմարյան Հանրապետության այն սխալներից, որոնց պատճառով կառավարությունը բավարար չափով կայուն չէր:[165] Ըստ էության, նոր փոփոխությունները միտված են դեպի համեմատաբար նոր՝ պատասխանատու կառավարման հայեցակարգ:[166]

Խորհրդարանական կառավարման համակարգերում կառավարության կազմավորումն առավել հաճախ կատարվում է այլ կերպ: Պետության գլուխը (որպես կանոն, տարբեր խորհրդարանական կուսակցությունների ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո) հանձնարարում է խորհրդարանական մեծամասնություն կազմող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջնորդին՝ որպես վարչապետի թեկնածուի, ընտրել թեկնածուներ՝ կառավարության կազմում

[164] Տե՛ս Dominique Chagnollaud de Sabouret, Droit Constitutionnel Contemporain, Dalloz, Paris, 2015, էջ 301-302; Philippe Foillard, Droit constitutionnel et institutions politiques, Groupe Larcier s. a., Bruxelles, 2015, էջ 141:

[165] Տե՛ս Хессе К. Основы конституционного права ФРГ. М., Юридическая литература, 1981, էջ 297-298:

[166] Arvydas Andruskevicius, Deividas Kriauciunas, Giedre Lastauskiene, Responsible Government // Crisis, The Rule of Law and Human Rights in Lithuania, edited by Egidijus Kuris, Siauliai, 2015, p. 56-61

ներգրավվելու համար: Հաջորդ փուլում կառավարության անդամի թեկնածուների ցանկը՝ ապագա կառավարության գործունեության ծրագրի հետ, ներկայացվում է խորհրդարանին (կամ խորհրդարանի ստորին պալատին)՝ վստահության քվե ստանալու համար: Խորհրդարանի վստահության քվեն ստանալուց հետո պետության գլուխը հրապարակում է համապատասխան ակտ, որով ավարտվում է կառավարության կազմավորման ընթացակարգը:[167]

Կառավարության լիազորությունների ժամկետները սկզբունքորեն համապատասխանում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետներին. նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ նշանակվում է վարչապետ (հոդ. 149, մաս 1), իսկ վարչապետ նշանակվելուց հետո տասնհինգօրյա ժամկետում կազմավորվում է Կառավարությունը (հոդ. 150): Կառավարությունը Հանրապետության նախագահին ներկայացնում է իր հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի օրը:

Սակայն այդ ժամկետները գործնականում հաճախ կարող են չհամընկնել, քանի որ խորհրդարանական կառավարման բոլոր սահմանադրություններով (այդ թվում՝ ՀՀ 2015 թվականին փոփոխված Սահմանադրությամբ) ամրագրված են ինչպես խորհրդարանի վաղաժամկետ արձակման, այնպես էլ Կառավարության հրաժարականի հիմքեր և ընթացակարգեր:

Կարծում ենք, որ ՀՀ կառավարման ձևի հետագա կատարելագործման համար որոշակի նշանակություն կարող է ունենալ Կառավարության հրաժարականի հիմքերի և ընթացակարգերի տեսական վերլուծությունը:

Կառավարության հրաժարականի հիմքերն ամրագրված են Սահմանադրության՝ «Կառավարության հրաժարականը» վերտառությամբ 158-րդ հոդվածով: Այդ հիմքերն են՝

1) նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի սկսվելը,

2) Կառավարությանը վստահություն չհայտնելը,

3) Կառավարության ծրագրին հավանություն չտալը,

---

[167] Մանրամասն տե՛ս. Конституционное право зарубежных стран., էջ 150-151; Енгибарян Р.В., նշված աշխ., էջ 407-409:

4) վարչապետի կողմից հրաժարական ներկայացնելը,

5) վարչապետի պաշտոնը թափուր մնալը:

Առաջին հիմքով Կառավարության հրաժարականի որևէ ընթացակարգ Սահմանադրությամբ սահմանված չէ՝ դրա անհրաժեշտության բացակայության պատճառով: Պարզապես նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի օրը Կառավարությունն իր հրաժարականն է ներկայացնում Հանրապետության նախագահին:

Կառավարության վստահության հարցը դնելու, քննարկելու և Ազգային ժողովի կողմից որոշում ընդունելու ընթացքում ձևավորվող հարաբերությունները կարգավորված են Սահմանադրության 157-րդ հոդվածով: Կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշում ընդունելու դեպքում Կառավարության ներկայացրած նախագիծը համարվում է ընդունված, իսկ վստահություն չհայտնելու դեպքում՝ Կառավարությունը Հանրապետության նախագահին ներկայացնում է իր հրաժարականը:

Նույն հոդվածով նախատեսված են Կառավարության այդ լիազորության իրականացման որոշ սահմանափակումներ: Կառավարությունն օրենքի նախագծի առնչությամբ իր վստահության հարցը նույն նստաշրջանի ընթացքում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ: Կառավարությունը չի կարող դնել իր վստահության հարցը սահմանադրական օրենքի ընդունման առնչությամբ, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Կարծում ենք, որ այս հոդվածի իրավադրույթները որոշակի ճշգրտման կարիք ունեն:

Նախ անհրաժեշտ է ճշտել Կառավարության կողմից իր վստահության հարցը դնելու պահը: Տեսականորեն Կառավարությունը կարող է իր վստահության հարցը դնել նախագիծը ներկայացնելու պահին կամ Ազգային ժողովում նախագծի քննարկման որոշակի փուլում կամ Ազգային ժողովի կողմից նախագիծը քվեարկության դնելուց հետո՝ չընդունելու դեպքում:

Բացի դրանից, ըստ Սահմանադրության՝ Կառավարության համար ընդունելի ուղղումներով քվեարկության կարող են դրվել միայն այն օրենքների նախագծերը, որոնց օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է Կառավարությանը: Սակայն գործնականում Կառավարությունը կարող է իր վստահության հարցը դնել նաև այն օրենքների առնչությամբ, որոնց օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը իրեն չի պատկանում: Արդյունքում առաջանում է նոր՝ նախորդի հետ փոխկապակցված խնդիր: Ազգային ժողովը կարող է ընդունել Կառավարության համար կարևոր օրենքը վերջինիս համար անընդունելի ուղղումներով: Ուստի նպատակահարմար կլիներ քննարկվող հոդվածի 2-րդ մասով ամրագրել, որ Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման նախագիծն ընդունելու դեպքում ներկայացված օրենքի նախագիծը համարվում է ընդունված «Կառավարության համար ընդունելի ուղղումներով»:

Ծրագրին հավանություն չտալու հիմքով հրաժարականը վերաբերում է միայն նոր ձևավորված Կառավարությանը: Վարչապետի նշանակումը բոլոր դեպքերում Ազգային ժողովի մեծամասնության կամարտահայտության արդյունք է: Ազգային ժողովի՝ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթն ինքնին ենթադրում է, որ Կառավարությունը պետք է գործի Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ծրագրի շրջանակներում: Նոր Կառավարության ձևավորման գործընթացը կարելի է համարվել ավարտված միայն այն դեպքում, երբ նրա ծրագիրը արժանանում է Ազգային ժողովի հավանությանը: Միայն Ազգային ժողովի կողմից ծրագրին հավանություն տրվելուց հետո Կառավարությունը կարող է իրականացնել սահմանադրորեն ամրագրված իր գործառույթները: Եթե Ազգային ժողովը հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին, ապա Կառավարությունը ներկայացնում է իր հրաժարականը:

Սակայն դրանով գործընթացը չի կարող ավարտվել: Սահմանադրության 151-րդ հոդվածին համապատասխան՝ եթե Ազգային ժողովը Կառավարության ծրագրին հավանություն չտալուց հետո չի կարողանում ընտրել նոր վարչապետ կամ հավանություն չի տալիս նոր վարչապետի կողմից ձևավորված Կառավարության ծրագրին, ապա այն արձակվում է: Այդպիսի կարգավորումը տրամաբանորեն հիմնավորված է, քանի որ երկու անգամ անընդմեջ երկու տարբեր

Կառավարությունների կողմից ներկայացված ծրագրերին հավանություն չտալը վկայում է այն մասին, որ առկա է ոչ թե կառավարական, այլ խորհրդարանական ճգնաժամ: Դա վկայությունն է այն հանգամանքի, որ Ազգային ժողովում այլևս չկա կայուն մեծամասնություն, որն ի վիճակի է ապահովելու հավանություն՝ իր կողմից ընտրված երկու տարբեր վարչապետների ղեկավարած Կառավարության ծրագրերին:

Վարչապետը կարող է իր հրաժարականը ներկայացնել սեփական նախաձեռնությամբ: Այդ դեպքում որևէ խնդիր չի առաջանում: Սահմանադրության 130-րդ հոդվածին համապատասխան՝ Հանրապետության նախագահն անհապաղ ընդունում է Կառավարության հրաժարականը:

Վարչապետի հրաժարականը կարող լինել Ազգային ժողովի կողմից նրան անվստահություն հայտնելու հետևանք (հոդված 115): Վարչապետին անվստահություն հայտնելու մասին նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Որոշման նախագծով միաժամանակ պետք է առաջարկվի նոր վարչապետի թեկնածու: Վարչապետին անվստահություն հայտնելու մասին որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Որոշումն ընդունվելու դեպքում համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել:

Սահմանադրությամբ նախատեսված են նաև այդպիսի նախագիծ ներկայացնելու հետ կապված որոշ սահմանափակումներ: Վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան մեկ տարի հետո: Եթե համապատասխան որոշումն Ազգային ժողովի կողմից չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո: Բացի դրանից՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկել: Բոլոր այս սահմանափակումները տրամաբանորեն հիմնավորված են և ունեն մեկ նպատակ՝ նպաստավոր պայմաններ ստեղծել Կառավարության հնարավորինս կայուն և բնականոն գործունեության համար:

Կարծում ենք՝ բացի վերը քննարկված դեպքերից՝ վարչապետի պաշտոնը թափուր կարող է մնալ վարչապետի մահվան դեպքում կամ այն դեպքում, երբ

վարչապետի կողմից իր պաշտոնը զբաղեցնելուց հետո առաջանում են հանգամանքներ, որոնց հետևանքով վարչապետն այլևս չի համապատասխանում Կառավարության անդամին ներկայացվող պահանջներին։

Սահմանադրության 148-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կառավարության անդամը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները»։ Սահմանադրության 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատգամավորի լիազորությունները դադարում են, մասնավորապես, ՀՀ քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքերում։

Ակնհայտ է, որ նշված դեպքերում պետք է դադարեն նաև վարչապետի կամ Կառավարության այլ անդամի լիազորությունները։ Ակնհայտ է նաև, որ լիազորությունների դադարման փաստն իրավաբանորեն պետք է արձանագրվի։ Պատգամավորի դեպքում դա կարող է լինել այլ անձի պատգամավորական լիազորությունները ճանաչելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը։ Կառավարության անդամի դեպքում հնարավոր է կիրառել Սահմանադրության 131-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ «Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում»։ Վարչապետի դեպքում համապատասխան մեխանիզմը բացակայում է։ Սահմանադրությամբ չի նախատեսված այն մարմինը կամ պաշտոնատար անձը, որը լիազորված է արձանագրել, որ, ասենք, վարչապետի կողմից ՀՀ քաղաքացիությունը կորցնելու հիմքով այդ պաշտոնը թափուր է մնացել։

Այսպիսով, ՀՀ Կառավարության կազմավորման և հրաժարականի հիմքերի ու կարգի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ այս մոդելում (ինչպես ցանկացած այլ խորհրդարանական կառավարման մոդելում) գործադիր իշխանություն իրականացնող Կառավարությունը պատասխանատու է խորհրդարանի առջև, որն իր հերթին արձակվում է իրավունքի ուժով, եթե չի կարողանում ընտրել վարչապետ կամ հավանություն տալ Կառավարության ծրագրին։ Պետք է նաև նկատել, որ այդ գործընթացներում, ինչպես նաև կառավարության գործունեության կազմակերպման ոլորտում վարչապետի դերակատարությունը հիմքեր են տալիս արձանագրելու, որ 2015 թվականի

սահմանադրական փոփոխությունների արդյունքում ձևավորվող խորհրդարանական կառավարման համակարգը կրում է վարչապետակենտրոն բնույթ և մեծ ընդհանրություններ ունի ԳԴՀ պետական կառավարման մոդելի հետ։

3.4. Դատական իշխանության անկախության ապահովման հիմնախնդիրները

Պետական կառավարման ցանկացած մոդելի դեպքում կարևորագույն խնդիրներից է դատական իշխանության անկախության ապահովումը։ Այդ խնդրի կարևորությունը պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ ինչպես արդարացիորեն նշում է Գ. Հարությունյանը, նոր ժողովրդավարության երկրներում սահմանադրական ձևախեղումների բնորոշ գծերից մեկը դատական իշխանության ոչ բավարար անկախությունն է։[168] Հատկանշական է նաև, որ Վենետիկի հանձնաժողովը, միաժամանակ արձանագրելով, որ ցանկացած կառավարման համակարգ կարելի է համապատասխանեցնել ժողովրդավարական համակարգերին, առանձնացնում է դատական իշխանության անկախության ապահովումը՝ որպես կենտրոնական նշանակություն ունեցող երեք խնդիրներից առաջինը։[169]

Փոփոխված Սահմանադրությամբ պահպանվել է ՀՀ դատարանների նախկին համակարգը՝ Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը։ Նախատեսվել է նաև օրենքով մասնագիտական դատարաններ ստեղծելու սահմանադրական հիմքը։

Միևնույն ժամանակ, սահմանադրական մակարդակով են ամրագրվել մի շարք դրույթներ, որոնք նախկինում կամ սահմանված էին օրենքներով, կամ ընդհանրապես նորամուծություններ են ՀՀ իրավական համակարգի համար։

Դատական իշխանության անկախության ամրապնդման հիմնական ուղղությունը դատավորների կարգավիճակի որակական ամրապնդումն է և որպես այդ նպատակի իրացման միջոց՝ դատավորների ընտրության և նշանակման, նրանց լիազորությունների դադարեցման, պատասխանատվության ենթարկելու

[168] Տե՛ս Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան 2016, էջ 474:
[169] Տե՛ս http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm, կետ 67:

ընթացակարգերում տարբեր պետական մարմինների միջև լիազորությունների այնպիսի տարանջատումը, որն առավելագույնս նպաստում է այդ մարմինների միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի արդյունավետությանը:

Դրական պետք է գնահատել այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական զարգացման գործընթացում առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվեցին դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները: Ընդ որում, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և առաջին ատյանի ու վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուների համար սահմանված են տարբերակված պահանջներ:

Սահմանադրական դատարանի դատավորների և Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները հիմնականում նույնական են: Այդ դատարանների դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Ներկայացվող պահանջների տարբերությունը միայն նրանում է, որ Վճռաբեկ դատարանի դատավոր կարող է նշանակվել մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող անձը (հոդ. 165, մաս 2), իսկ Սահմանադրական դատարանի դատավոր ընտրվելու համար պահանջվում է առնվազն տասնհինգ տարվա փորձառություն (հոդ. 165, մաս 1):

Առաջին ատյանի դատավորների թեկնածուներին և վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջներն ամրագրված են Սահմանադրության 165-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ այդ դատարանների դատավոր կարող է նշանակվել «միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը»: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուների համար նույնպես ամրագրել տարիքային ցենզ (օրինակ՝ երեսուն տարին լրացած) և մասնագիտական աշխատանքի ցենզ (օրինակ՝ մասնագիտական աշխատանքի

առնվազն հինգ տարվա փորձառություն) կամ առնվազն այդ երկու ցենզերից որևէ մեկը։

Այդպիսի ցենզեր կարող են սահմանվել նաև դատական օրենսգրքով, քանի որ քննարկվող հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատավորների թեկնածուների համար Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ»։ Սակայն պետք է նշել, որ այդպիսի ձևակերպումը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին. անհասկանալի է մնում՝ ինչպիսի լրացուցիչ պահանջներ կարող են սահմանվել այդ ակտերով։ Այս դրույթը կարելի է մեկնաբանել այն տեսանկյունից, որ լրացուցիչ պահանջները պետք է կոնկրետացնեն սահմանադրորեն ամրագրված դրույթները։ Օրինակ՝ Սահմանադրական դատարանի դատավոր ընտրվելու համար Սահմանադրությամբ սահմանված բարձրագույն կրթության պահանջը կարող է լրացվել մագիստրոսական պարտադիր կրթության պահանջով։ Սակայն կարելի է մեկնաբանել նաև այն տեսանկյունից, որ օրենքներով կարող են սահմանվել սկզբունքորեն այլ բնույթի պահանջներ (օրինակ՝ պետական կառավարման մարմիններում աշխատանքի փորձառություն կամ Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի համար՝ Վճռաբեկ կամ վերաքննիչ դատարանի դատավորի աշխատանքի փորձառություն և այլն)։ Ակնհայտ է, որ սրանք իրենց բնույթով տարբեր պահանջներ են։ Մի դեպքում կոնկրետացվում են սահմանադրորեն ամրագրված դրույթները, իսկ երկրորդ դեպքում՝ հարցը վերաբերում է իրենց բնույթով նոր պահանջների մասին։

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվել են դատավորների, դատարանների նախագահների, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման (ընտրության) տարբեր ընթացակարգեր։ Այդպիսի մոտեցման առավելությունը նախևառաջ այն է, որ դատական կորպուսի ձևավորման լիազորությունների ամբողջ համակարգն այլևս ապակենտրոնացված է։ Ընդ որում, այդ ընթացակարգերի առանձնահատկությունն այն է, որ կոնկրետ անձը չի կարող ընտրվել դատավոր կամ դատարանի (պալատի) նախագահ միայն մեկ պետական մարմնի կամարտահայտության արդյունքում, կամ ինչպես Վենետիկի

հանձնաժողովն է մեկնաբանում, սահմանվել է ընտրության (նշանակման) «խառը» համակարգ։[170]

Պետք է նկատել, որ հատկապես դատական կորպուսի կազմավորման ընթացակարգերով է առավելապես պայմանավորված դատական իշխանության անկախության աստիճանը։ Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոնկրետ գործերի քննության արդյունքում որպես դատական իշխանության անկախության աստիճանի չորս չափանիշներից մեկը առանձնացրել է դատավորների նշանակման եղանակը։[171]

Այսպես, Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով։ Սակայն ինը անդամներից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ։ Իհարկե, Ազգային ժողովը կարող է և չընտրել առաջարկվող թեկնածուին։ Բայց վերջին հաշվով նա ստիպված կլինի ընտրություն կատարել առաջադրված թեկնածուների շարքից։

Դժվար է որպես լավագույն տարբերակ գնահատել Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման կարգը։ Համաձայն Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ։ Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից»։ Կարծում ենք՝ այս ընթացակարգն արհեստականորեն բարդացված է։ Ըստ էության, Հանրապետության նախագահին որևէ գործառույթ վերապահված չէ։ Ուստի կարելի է պարզապես Ազգային ժողովին վերապահել Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության գործառույթը՝ պահպանելով նույն ընթացակարգը։ Հնարավոր էր նաև այն տարբերակը, որ Հանրապետության նախագահն է Բարձրագույն դատական խորհրդի

[170] Տե՛ս http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm, կետ 164։
[171] Տե՛ս CASE OF FINDLAY v. UNITED KINDOM (App. 22107/93), 25 of February 1997, par. 73 (http://hudoc.echr.coe.int/eng?i= 001-58016); Affaire RYWIN c. POLOGNE (Reguetes 6091/06, 4047/07, 4070/07, 18/02/2016), § 220 (http://hudoc.echr.coe.int/eng?i=001-160614)։

կողմից յուրաքանչյուր տեղի համար ներկայացված երեք թեկնածուներից ընտրում և նշանակում Վճռաբեկ դատարանի դատավոր: Վերջին դեպքում էականորեն կսահմանափակվեր իր էությամբ քաղաքական մարմնի ներգործության հնարավորությունը Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման գործընթացի վրա և որպես հետևանք՝ կնվազեր դատավորների քաղաքականացման վտանգը:

Նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների նշանակման հենց այդպիսի կարգ՝ այն տարբերությամբ, որ վերջին դեպքում Հանրապետության նախագահը պարզապես ձևակերպում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից ներկայացված թեկնածուի նշանակումը՝ առանց այլընտրանքային թեկնածուների և զրկված լինելով մի քանի թեկնածուներից մեկին ընտրելու հնարավորությունից:

Սահմանադրական դատարանի անկախության աստիճանը բարձրացնելու նպատակ է հետապնդում այդ դատարանի նախագահի ընտրության նոր կարգը, համաձայն որի՝ հենց Սահմանադրական դատարանն է իր կազմից վեց տարի ժամկետով ընտրում Սահմանադրական դատարանի նախագահին և փոխնախագահին՝ առանց վերընտրվելու իրավունքի:

Սահմանադրությամբ սահմանված է Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների նշանակման՝ հիմնական հատկանիշներով միասնական կարգ: Նրանց նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի (պալատի) կազմից: Սակայն այստեղ կա նաև որոշակի տարբերություն: Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները նշանակվում են վեց տարի ժամկետով՝ առանց վերանշանակման իրավունքի, մինչդեռ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահները նշանակվում են երեք տարի ժամկետով և կարող են նորից նշանակվել այդ պաշտոնում:

Սահմանադրության քննարկվող հոդվածի 5-րդ մասով սահմանված է Վճռաբեկ դատարանի նախագահի ընտրության կարգը: Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների

մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով՝ առանց վերընտրության իրավունքի:

Կարծում ենք, որ դատավորների և դատարանների նախագահների նշանակման (ընտրության) հարաբերությունների սահմանադրական կարգավորման ոլորտում առկա է էական իրավական բաց: Բանն այն է, որ սահմանված չէ վարչական դատարանի դատավորների և նախագահի նշանակման կամ ընտրության որևէ ընթացակարգ: Մինչդեռ Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դատական համակարգում և չի դասվում ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանների թվում, իսկ գործնականում այն կարելի է դիտարկել, որպես մասնագիտացված դատարան: Ելնելով վերը նշվածից՝ կարծում ենք, որ ճիշտ կլիներ Սահմանադրության քննարկվող հոդվածում ավելացնել առանձին մաս, որով կսահմանվեր (թեկուզ ամենաընդհանուր ձևով) «մասնագիտացված դատարան» եզրույթը և դրա կազմավորման կարգը: Ավելացնենք, որ մեր այս առաջարկը համահունչ է ՀՀ Սահմանադրության նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի այն առաջարկին, ըստ որի՝ անհրաժեշտ է համապատասխան հոդվածով ամրագրել «մասնագիտացված դատարանների» սահմանումն ու հատկանիշները:[172]

Սահմանադրությամբ ամրագրված դատական կորպուսի կազմավորման ընթացակարգերի հետ կապված՝ առկա է նաև հատուկ քննարկման արժանի ևս մեկ հիմնախնդիր: Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորն ընտրվում է Ազգային ժողովի կողմից տասներկու տարի ժամկետով: Ավելին, միևնույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ: Մինչդեռ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով՝ պաշտոնավարման ժամկետը համարվում է դատավորի անկախության երաշխիքներից մեկը:[173] Այս առումով քննարկվող դրույթի համապատասխանությունը ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին բավականին

[172] Տե՛ս http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm, կետ 149:
[173] Տե՛ս CASE OF FINDLAY v. UNITED KINDOM (App. 22107/93), 25 of February 1997, par. 73 (http://hudoc.echr.coe.int/eng?i= 001-58016); Affaire LUKA c. ROUMANIE, (Reguete 34197/02),21/07/2009, § 37 (http://hudoc.echr.coe.int/eng?i= 001-93648):

խնդրահարույց է, քանի որ դրանով իսկ կարող է կրճատվել Սահմանադրական դատարանի առանձին գործող անդամների պաշտոնավարման ժամկետը:

Դատական իշխանության անկախության ապահովման և, մասնավորապես, դատավորների իրավական կարգավիճակի ամրապնդման համար կարևոր նշանակություն ունի դատավորների պատասխանատվության ոլորտի հարաբերությունների սահմանադրական կարգավորումը: Այդպիսի պատասխանատվության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ «Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ»:

Դատավորի կողմից իր լիազորությունների իրականացման կապակցությամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի կամ Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Դատավորը առանց Բարձրագույն դատական խորհրդի կամ Սահմանադրական դատարանի համաձայնության կարող է զրկվել ազատությունից միայն այն դեպքում, երբ բռնվել է հանցագործություն կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Սակայն այս դեպքում անհապաղ պետք է տեղյակ պահվի Սահմանադրական դատարանի նախագահը կամ Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

Պետք է նկատել, որ մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները դատավորին անձեռնմխելիությունից զրկելու համաձայնությունը տալիս էր Հանրապետության նախագահը: Կարծում ենք, որ փոփոխված իրավակարգավորումը կարող է առավելագույնս նպաստել դատական իշխանության անկախության ամրապնդմանը և համապատասխանում է Վենետիկի հանձնաժողովի այն դիրքորոշմանը, որի համաձայն՝ դատավորին անձեռնմխելիությունից զրկելը պետք է հնարավոր լինի միայն դատական համակարգի մարմինների կողմից:[174]

Որոշ խնդիրներ են առաջանում կարգապահական խախտում կատարելու հիմքով դատավորին պատասխանատվության ենթարկելու և, մասնավորապես, նրա լիազորությունների դադարեցման իրավակարգավորման ոլորտում: Այս ոլորտի

[174] Տե՛ս http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm, կետ 154:

հարաբերություններն ամենաընդհանուր ձևով կարգավորված են Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասով, որի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում»: Այստեղ առաջանում են մի շարք հիմնախնդիրներ: Պետք է սահմանվի այն սուբյեկտը, որը լիազորված է որոշելու համապատասխան իրավաբանական փաստերը՝ անհամատեղելիության պահանջների խախտում, քաղաքական գործունեությամբ զբաղվելը, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինությունը: Կարծում ենք, որ այդ փաստերի հաստատման լիազորությունները պետք է վերապահվեն ոչ թե Սահմանադրական դատարանին կամ Բարձրագույն դատական խորհրդին, այլ ընդհանուր իրավասության դատարաններին: Այս առաջարկությունը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով: Նախ՝ քննարկվող լիազորությունները Սահմանադրական դատարանին կամ Բարձրագույն դատական խորհրդին վերապահելը էականորեն կբարձրացնի այդ մարմինների ծանրաբեռնվածության մակարդակը, ինչի արդյունքում կխաթարվի այդ մարմինների իրենց անմիջական գործառույթներն իրականացնելու հնարավորությունը: Բացի դրանից՝ չնայած Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննարկելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան, այնուամենայնիվ այդ խորհրդի տասն անդամներից հինգը պրոֆեսիոնալ դատավորներ չեն, ինչը կարող է հանգեցնել սխալ որոշումներ կայացնելուն: Շատ կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ քննարկվող իրավաբանական փաստերի հաստատումն ընդհանուր իրավասության դատարաններին վերապահելու դեպքում կարգապահական պատասխանատվության ենթարկվող դատավորները կստանան համապատասխան որոշումները վերաքննության և վճռաբեկության կարգով վերանայելու հնարավորություն, ինչը նույնպես կարող է նպաստել ճիշտ որոշումների կայացնելուն:

Այս խնդրին ուշադրություն է հատկացվել նաև Վենետիկի հանձնաժողովի եզրակացության մեջ, որտեղ նշվում է, որ պետք է նախատեսել դատավորի լիազորությունների դադարեցման մասին «Բարձրագույն դատական խորհրդի որոշման դատական բողոքարկման հնարավորություն»:[175] Կարծում ենք, որ մեր կողմից առաջարկվող տարբերակն ավելի նպատակահարմար է՝ թեկուզ միայն այն պատճառաբանությամբ, որ ընդհանուր իրավասության դատարանները Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման դեպքում դժվար թե կարողանան անկաշկանդ որոշումներ կայացնել:

Որոշակի խնդիրներ են առաջանում՝ կապված դատավորի լիազորությունների դադարեցման վերջին հիմքի՝ «էական կարգապահական խախտում կատարելու դեպքում» ձևակերպման հետ: Կարծում ենք, որ այդպիսի չափազանց ընդհանրական ձևակերպումը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Իհարկե, սահմանադրական մակարդակով հնարավոր չէ կոնկրետ բնորոշել «էական կարգապահական խախտում» հասկացությունը, սակայն, կարծում ենք, որ այնուամենայնիվ հնարավոր է հենց Սահմանադրությամբ սահմանել որոշակի չափորոշիչներ՝ կարգապահական խախտումը էական որակավորելու համար: Մասնավորապես, էական խախտում կարող է համարվել գործի փաստացի հանգամանքներով ակնհայտորեն չհիմնավորված, մարդու և քաղաքացու հիմնական սահմանադրական իրավունքների և ազատությունները խախտող կամ անդառնալի հետևանքների հանգեցնող դատական ակտերի ընդունումը:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում էականորեն ամրապնդվել է Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը. ընդլայնվել է նրա լիազորությունների շրջանակը և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Մեր հետազոտական խնդիրների շրջանակներից դուրս է Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի հետ կապված հիմնախնդիրների հետազոտումը: Միևնույն ժամանակ, այս ոլորտում ավելացված կարևորագույն լիազորություններից մեկը անմիջականորեն պայմանավորված է կիսանախագահական կառավարման համակարգից խորհրդարանականի անցման հանգամանքով:

[175] Տե՛ս http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm, կետ 153:

Այդպիսի անցմամբ է պայմանավորված Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող» վեճերի լուծման լիազորությունը: Բանն այն է, որ հզոր նախագահական ինստիտուտի առկայությամբ կիսանախագահական կառավարման մոդելի պայմաններում սահմանադրական մարմինների միջև լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը լուծվում էին Նախագահի կողմից՝ վերջինիս՝ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 49-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովման լիազորության շրջանակներում: Խորհրդարանական կառավարման պայմաններում Հանրապետության նախագահի լիազորությունների սահմանափակումը, ինչպես նաև սահմանադրական մարմինների շրջանակի ընդլայնումը հանգեցրեցին իրավական բացի առաջացման, որով և պայմանավորված է Սահմանադրական դատարանի քննարկվող լիազորության ամրագրումը:

Խորհրդարանական կառավարման անցնելու հետ կապված՝ դատական իշխանության անկախության ամրապնդման հիմնական ուղղություններից է ներկայումս գործող Արդարադատության խորհրդի դերի և իրավական կարգավիճակի էական ամրապնդումը: Նախագահին օժանդակող այդ մարմինը սահմանադրական փոփոխությունների արդյունքում պետք վերակազմավորվի որպես անկախ պետական մարմին, որի հիմնական առաքելությունն է դատարանների և դատավորների անկախության երաշխավորումը: Ուստի պետք է արձանագրել, որ այդ նոր կազմավորվելիք սահմանադրական մարմնի հիմնական գործառույթը պետք է համապատասխանի «Բարձրագույն դատական խորհուրդ» կոչմանը:

Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգը, թերևս, կարող է ապահովել այդ խորհրդի կողմից իր առաքելության արդյունավետ իրականացումը: Խորհրդի տասն անդամներից հինգին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից, մյուս հինգ անդամներին՝ Ազգային ժողովը՝ «պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և

մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից»: Սահմանադրության 174-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի բոլոր անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

Բարձրագույն դատական խորհրդի այդպիսի կազմը (հիսուն տոկոսը՝ դատավորներ, հիսուն տոկոսը՝ դատական կորպուսից դուրս գտնվող բարձր որակավորում ունեցող փորձառու իրավաբաններ) առավելագույն չափով կարող է ապահովել մի կողմից դատավորների անկախության և օբյեկտիվ շահերի պաշտպանությունը, իսկ մյուս կողմից դատավորների հնարավոր նեղ կորպորատիվ շահերի ազդեցության չեզոքացումը:

Սահմանադրության 174-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանի դատարաններից և չեն կարող ընդգրկվել դատարանների նախագահները կամ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները: Այդպիսի կարգավորման նպատակն է ապահովել տարբեր ատյանի դատարանների դատավորների յուրահատուկ շահերի ներկայացումը և պաշտպանությունը և, որ առավել կարևոր է, չեզոքացնել խորհրդի դատավոր անդամների մի մասի ազդեցությունը մյուս դատավոր անդամների կամարտահայտության վրա և դրանով իսկ ապահովել խորհրդի կողմից օբյեկտիվ որոշումների ընդունման հնարավորությունը:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից ինքնավար որոշումների ընդունմանը մեծապես կնպաստի Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասի իրավադրույթը, որի համաձայն՝ հենց Խորհուրդն է իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից: Դեռևս պահպանվող իրավակարգավորումը, երբ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 94.1.-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Արդարադատության խորհրդի նիստերը վարում է Վճռաբեկ դատարանի նախագահը՝ թեկուզ և առանց քվեարկության իրավունքի, վերջինիս բավականին լայն հնարավորություններ է տալիս ներազդելու Արդարադատության խորհրդի կողմից

կայացվող որոշումների բովանդակության վրա, առաջին հերթին՝ Արդարադատության խորհրդի դատավոր անդամների կամարտահայտությունը ուղղորդելու միջոցով։

Բարձրագույն դատական խորհրդի լիազորություններն ընդհանուր կերպով բնութագրելիս կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ խորհրդարանական կառավարման մոդելի անցման կապակցությամբ Սահմանադրության 175–րդ հոդվածի 1-ին մասի մի քանի կետերով այդ մարմնին փոխանցվեցին մի շարք լիազորություններ, որոնք կիսանախագահական կառավարման համակարգում վերապահված էին Հանրապետության Նախագահին։ Այդ լիազորություններն են դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների հաստատումը (կետ 1), ինչպես նաև դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու (կետ 5), իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու (կետ 6), դատավորի լիազորությունների դադարեցման (կետ 8) հարցերի լուծումը։

Բարձրագույն դատական խորհրդին վերապահվեց նաև իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները հաստատելու և Կառավարությանը՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար ներկայացնելու լիազորությունը, ինչը դատարանների մասով մինչ այդ վերապահված էր դատական դեպարտամենտին։ Ինչ խոսք, այդ լիազորության փոխանցումը Բարձրագույն դատական խորհրդին էապես կվերացնի դատարանների ֆինանսական կախվածությունը դատական դեպարտամենտից և, վերջին հաշվով, Վճռաբեկ դատարանից և նրա նախագահից։ Հենց Բարձրագույն դատական խորհրդի անկախության աստիճանի բարձրացմանը կնպաստի նաև իր աշխատակազմն օրենքին համապատասխան ձևավորելու լիազորության սահմանադրական ամրագրումը։

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով Բարձրագույն դատական խորհրդին վերապահված է նաև սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճեր առաջանալու դեպքում Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը։ Դժվար է

միանշանակ գնահատել այդպիսի իրավակարգավորման արդյունավետությունը: Տեսականորեն, թերևս, ավելի նպատակահարմար կլիներ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը վերապահել հենց այն մարմիններին, որոնց միջև առաջանում է լիազորությունների առնչությամբ վեճ: Սակայն սահմանադրորեն ամրագրված մոտեցման վերաբերյալ վերջնական և օբյեկտիվ գնահատական կարող է տրվել միայն համապատասխան պրակտիկայի ձևավորումից հետո:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության ապահովման արդյունավետության տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի ոչ միայն համապատասխան լիազորությունների ամբողջական համակարգի ամրագրումը, այլ նաև այդ լիազորությունների իրականացման և ընդհանրապես գործունեության հստակ կարգի սահմանումը: Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորություններ և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով: Մասնավորապես, Դատական օրենսգրքով են սահմանվելու այն սուբյեկտները, որոնք կարող են խորհրդին առաջարկություններ ներկայացնել, ասենք, կոնկրետ անձին դատավորների առաջխաղացման ցուցակում ընդգրկելու կամ դատավորին մեկ այլ դատարան գործուղելու մասին: Այդ իրավազորությունը կարող է վերապահվել Վճռաբեկ դատարանի նախագահին կամ Բարձրագույն դատական խորհրդի նախագահին կամ Բարձրագույն դատական խորհրդի ցանկացած անդամի: Կախված այդ հարցի լուծումից՝ հետևանքները կարող են լինել տարբեր: Կարևոր նշանակություն ունի նաև դատարանների ծախսերի նախահաշիվների սահմանման կարգը և այլն: Ուստի դատական իշխանության անկախության աստիճանն էականորեն պայմանավորված է Դատական օրենսգրքով սահմանվող ընթացակարգերի արդյունավետությամբ:

Ամփոփելով այս բաժնի դրույթները՝ կարելի է արձանագրել, որ կիսանախագահական կառավարման համակարգի փոխարինումը խորհրդարանական կառավարման մոդելով ինքնին բավականին լայն հնարավորություններ է ստեղծել ՀՀ դատական իշխանության գործառնության օբյեկտիվության, արդյունավետության և իշխանության այդ թևի անկախության մակարդակի որակական բարձրացման համար: Սահմանադրությամբ արդեն

ամրագրված են դրա համար անհրաժեշտ հիմքերը։ Կարևոր է ընթացիկ օրենսդրությամբ, առաջին հերթին՝ Սահմանադրական դատարանի մասին օրենքում և Դատական օրենսգրքում, մաքսիմալ չափով իրացնել այդ հնարավորությունները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսական հետազոտության արդյունքները հանգեցնում են հետևյալ եզրակացություններին.

1. Պետական կառավարման ձևի հիմնախնդիրների քննարկմանը գրականության մեջ ավանդաբար հատկացվել է մեծ ուշադրություն, սակայն գիտական հետազոտությունների տվյալ ոլորտում կան բանավեճերի տեղիք տվող բազմաթիվ հարցեր: Այդպիսի իրավիճակը բացատրվում է առաջին հերթին այն հանգամանքով, որ պետական կառավարման ձևերին բնորոշ է մեծ բազմազանությունը և դինամիկան:

2. 1991 թվականի աշնանը Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական օրենքների հիման վրա ձևավորված մոդելի համար հատկանշական էին միջհամակարգային (իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև) և ներհամակարգային (գործադիր և դատական իշխանության համակարգերի ներսում) բազմաթիվ հակասություններ:

3. ՀՀ 1995 թվականի Սահմանադրությամբ և դրա դրույթներին համապատասխան ձևավորված օրենսդրությամբ ամրագրված կիսանախագահական կառավարման մոդելում նախագահական իշխանությունը դուրս էր իշխանության երեք թևերի համակարգից և ծավալվում էր պետական իշխանության կազմակերպման և իրականացման բոլոր ուղղություններով: Դրա հետ մեկտեղ, այն լիազորությունները, որոնցով օժտված էր Հանրապետության նախագահը մյուս բոլոր իշխանությունների հետ փոխհարաբերություններում, հավասարակշռված չէին իշխանության մյուս թևերի կառույցներին վերապահված՝ նախագահին «զսպող և հակակշռող» լիազորություններով:

4. 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության կիսանախագահական կառավարման մոդելը էական բարեփոխումների ենթարկվեց: Փոփոխությունների հիմնական ուղղությունը Հանրապետության նախագահի և իշխանությունների երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև հավասարակշռության ապահովումն էր: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում ձևավորված կառավարման մոդելը (խորհրդարանական-նախագահական) իրավական լուծումների առումով կարելի է դասել հետխորհրդային տարածքում առավել հավասարակշռվածների շարքին: Միևնույն ժամանակ քաղաքական, առաջին հերթին՝ կուսակցական համակարգի կայացվածության ոչ բավարար աստիճանը, ժողովրդավարության, քաղաքական և իրավական մշակույթի ոչ բավարար մակարդակը գործնականում Հանրապետության նախագահին հնարավորություն էին տալիս էականորեն ներազդելու պետական իշխանության բոլոր երեք թևերի կազմավորման, կազմակերպման և գործունեության վրա:

5. Տեսականորեն, խորհրդարանական կառավարման ձևն ունի ժողովրդավարության ապահովման հզոր ներուժ: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ յուրաքանչյուր կառավարման ձևի արդյունավետությունը պայմանավորված է բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Այդ գործոնների շարքում պետք է հատուկ առանձնացնել քաղաքական համակարգի, առաջին հերթին՝ կուսակցությունների կայացվածության աստիճանը:

Պառլամենտարիզմի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է կուսակցությունների՝ պետական իշխանություն իրականացնելու ունակությունից: Որոշակի կոնկրետ պայմաններում խորհրդարանական կառավարման առանձին հատկանիշներ կարող են բացասական դրսևորումներ ստանալ: Օրինակ՝ կուսակցությունների բազմաթիվությունը կարող է հանգեցնել խորհրդարանական աճող անկայունության:

6. 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո պետական իշխանության համակարգում առաջնային մանդատ ունեցող միակ մարմինն Ազգային ժողովն է: Այս հանգամանքով են պայմանավորված Ազգային ժողովի իրավական կարգավիճակի էական գծերը, ինչպես նաև այդ մարմնի կենտրոնական դիրքն ու վճռորոշ դերը պետական համակարգում:

7. Սահմանադրական փոփոխությունների արդյունքում իրական բովանդակություն ստացավ Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունը. Կառավարությանը կամ վարչապետին անվստահություն հայտնելու դեպքում հրաժարականից բացի այլընտրանք սահմանված չէ: Նշված փոփոխությունների արդյունքում Ազգային ժողովը դարձավ պետական իշխանության ամբողջ համակարգի կենտրոնը, որի կողմից (կամ վճռորոշ մասնակցությամբ) ձևավորվում են պետական իշխանության մյուս բոլոր կառույցները:

8. Կիսանախագահական կառավարման համակարգից անցումը խորհրդարանական կառավարման մոդելին ինքնին ենթադրում է Հանրապետության նախագահի գործառույթների և լիազորությունների էական սահմանափակումներ: Բացի դրանից՝ Հանրապետության նախագահն իր լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերը լուծելիս էականորեն սահմանափակված է այլ մարմինների (առաջին հերթին՝ Կառավարության և վարչապետի) կողմից ներկայացվող առաջարկություններով կամ միջնորդություններով: Այդպիսի սահմանափակումները ոչ միայն պետք է նպաստեն (և կնպաստեն) նախագահի և Կառավարության միջև վեճերի կանխմանը և թույլ կտան խուսափել նրանց միջև լիազորությունների «զուգահեռությունից», այլև վճռորոշ կերպով կնպաստեն դատական իշխանության անկախության մակարդակի բարձրացմանը:

9. 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով Կառավարության գործառույթների և լիազորությունների կտրուկ ընդլայնման արդյունքում Կառավարությունը հանդես է գալիս որպես պետության արտաքին և ներքին քաղաքականությունը մշակող և իրացնող, սահմանադրական կարգի պահպանումը և երկրի պաշտպանությունն ապահովող հիմնական պետական մարմին:

10. Խորհրդարանական կառավարման ձևի անցնելու համատեքստում բնականաբար կիրառվեցին Կառավարության կազմավորման և քաղաքական պատասխանատվության (հրաժարականի) հետ կապված հարաբերությունների սահմանադրական կարգավորման սկզբունքային նոր մոտեցումներ: Սահմանվեց Կառավարության կազմավորման խորհրդարանական եղանակ, որի պայմաններում Կառավարության կազմավորման հարցում վճռորոշ է վարչապետի դերը:

11. Պետական կառավարման ցանկացած մոդելի պարագայում կարևորագույն խնդիր է դատական իշխանության անկախության ապահովումը: Դատական իշխանության անկախության ամրապնդման հիմնական ուղղությունը դատավորների կարգավիճակի որակական ամրապնդումն է և որպես այդ նպատակի իրացման միջոց՝ դատավորների ընտրության և նշանակման, նրանց

լիազորությունների դադարեցման, պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում տարբեր պետական մարմինների միջև լիազորությունների այնպիսի տարանջատումը, որն առավելագույնս նպաստում է նրան, որ այդ մարմինների միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմը գործի արդյունավետ կերպով։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Նորմատիվ իրավական ակտեր և փաստաթղթեր

1. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 1995։
2. ՀՀ Սահմանադրություն (2005 թվականի փոփոխություններով), Երևան, 2005։
3. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ // ՀՀՊՏ, հատուկ թողարկում, 2015։
4. ՀՀ սահմանադրական օրենք «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» // ՀՀԳԽՏ, 1991/18։
5. ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» // ՀՀԳԽՏ, 1991/15։
6. ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» // ՀՀԳԽՏ, 1991/22։
7. ՀՀ օրենք «Սեփականության մասին» // ՀՀԳԽՏ, 1990/20։
8. ՀՀ օրենք «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» //[1] ՀՀԳԽՏ, 1991/4։
9. Հռչակագիր «Հայաստանի անկախության մասին» // ՀՀԳԽՏ, 1990/16։
10. ՀՀ օրենք «Կառավարության կազմավորման և հրաժարականի մասին» // ՀՀՊՏ 1998, 11.30/30 (63)։
11. ՀՀ Նախագահի հրամանագիր «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» // ՀՀԱԺՏ 1995 / 1-2։
12. ՀՀ Նախագահի հրամանագիր «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» // ՀՀՊՏ 2007.07.25/37 (561), հոդ. 829։
13. ՀՀ Նախագահի Հրամանագիր «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանցնաժողով ստեղծելու մասին» // president.am/hy/decrees/item/947

14. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների Հայեցակարգ // parliament.am/library/sahmanadrakan%20 barepoxumner/hajecakarg.pdf
15. ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» // ՀՀՊՏ 2008.06.25/40 (630), հոդ. 651:
16. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախնական կարծիք «Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ» // http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm
17. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) եզրակացություն «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ» // http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/venetikezraka cutyunhay.pdf
18. Конституция Российской Федерации с комментариями Конституционного Суда РФ, 4-е издание, М., 2004, 200 էջ:
19. Конституции государств Центральной и Восточной Европы, М., 1997, 578 էջ:
20. Современные зарубежные конституции: Сборник документов. М., 1996, 284 էջ:
21. CASE OF FINDLAY v. UNITED KINDOM (App. 22107/93), 25 of February 1997, par. 73 (http://hudoc.echr.coe.int/eng?i= 001-58016):
22. Affaire LUKA c. ROUMANIE, (Reguete 34197/02),21/07/2009, § 37 (http://hudoc.echr.coe.int/eng?i= 001-93648):
23. Affaire RYWIN c. POLOGNE (Reguetes 6091/06, 4047/07, 4070/07, 18/02/2016), § 220 (http://hudoc.echr.coe.int/eng?i=001-160614):
24. http://www.parliament.am/international.php?id=3
25. http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/venetikezraka cutyunhay.pdf
26. http://www.president.am/hy/decrees/item/2566/

27. http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm

բ) Մասնագիտական գրականություն

1. Այվազյան Հ. Ս. Ժամանակակից պետության գործառույթները (տեսական և կիրառական հիմնախնդիրներ), իրավ. գիտ թեկն. գիտ. աստիճ. հայցման ատենախ., Երևան 2011, 132 էջ։
2. Դանիելյան Գ. Կոալիցիոն կառավարություն (իրավական ասպեկտներ)// Պետություն և իրավունք, 2012, N 1-2 (55-56), էջ 59-64։
3. Դանիելյան Գ. , Այվազյան Վ. , Մանասյան Ա. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում . /գիտագործնական հետազոտություն/. Երևան, 2015, 240 էջ :
4. Սարգսյան Մ., ՀՀ կառավարման ձևի բարեփոխման հրամայականը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համատեքստում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 67-85։
5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Այվազյան Ն. Ա., Երևան, 2012, 736 էջ։
6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբ. Հարությունյան Գ., Վաղարշյան Ա., Երևան, 2010, 1086 էջ։
7. Հարությունյան Գ. Գ., Սահմանադրական մշտադիտարկում, Երևան, 2016, 351 էջ։
8. Հարությունյան Գ. Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2016, 672 էջ։
9. Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, 708 էջ։

10. Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, 300 էջ։
11. Պողոսյան Վ., Կառավարման կիսանախագահական ձևի առանձնահատկությունները Հայաստանում. ընտրված նյութերի ժողովածու, ԵԱՀԿ, 2004, էջ 41-54։
12. Պողոսյան Վ., Թովմասյան Հ., Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005, 121 էջ։
13. Ստեփանյան Վ., Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում // Օրենք և իրականություն, 2003, N 16, էջ 1-2։
14. Ստեփանյան Վ., Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն // Օրենք և իրականություն, 2003, N 19-20, էջ 1-3։
15. Ստեփանյան Վ., Հանրապետական կառավարման ժամանակակից ձևերի համեմատական վերլուծություն // Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 27-33։
16. Սիմոնյան Հ., Տարածքային կառավարման մարմինների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում. իրավ. գիտ թեկն. գիտ. աստիճ. հայցման ատենախ., Երևան, 2009, 180 էջ։
17. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002, 504 էջ։
18. Авакьян С.А., Правовое регулирование деятельности местных Советов. М., 1980, 232 էջ։
19. Авдеев Д.А. Особенности российской модели формы правления // Государство и право, 2010, N 12, էջ 14-21։
20. Алексеев С.С. Линия права. М., 2006, 461 էջ։
21. Алексеев С.С. Право на пороге нового тысячилетия. М., 2000, 256 էջ։
22. Арутюнян А. Институт Президента Республики Армения. Ереван, 1996, -311 էջ։
23. Арутюнян А. Конституционализм: проблемы постсоветской реальности. М., 2013, 160 էջ։

24. Арутюнян Г.Г., Баглай М.В., Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006, 544 էջ:
25. Ачкасов В.А. Президент РФ и Государственная Дума: перспективы взаимоотношений // Правоведение. 1995, N 4, էջ 67-71:
26. Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М., 2007, 784 էջ:
27. Венгеров А. Б. Теория государства и права. М., 2005, 528 էջ:
28. Воеводин Л.Д. Юридическийстатус личности в России. М., 1997, 304 էջ:
29. Гаганова Н.А. Концепция разделения властей и идея субсидарности // Государство и право, 2003, N 3, էջ 88-92.
30. Герье В. И. О конституции и парламентаризме в России. М., 1906, 31 էջ:
31. Гессен В. М. Основы конституционного права. Пг., 1917, 439 էջ:
32. Гумплович Л. Общее учение о государстве. СПб, 1910, 516 էջ:
33. Ж. Джангирян. Разделение властей в Республике Армения: конституционная модель и практика. М., 2003,- 240 էջ:
34. Енгибарян Р. В. Конституционное развитие в современном мире: основные тенденции. М., 2010, 496 էջ:
35. Зазнаев О.И. Полупрезидентская система: теоретические и прикладные аспекты. Казань, 2006, 374 էջ:
36. Зорькин В.Д. О президенте в конституционном строе РФ // Конституционный вестник, 1990, N 2, էջ 46-55.
37. Ильин И.А. Почему мы верим в Россию. Соб. соч. Доп. т.6, М., 2001, 560 էջ:
38. Калинович А. Формы правления в правовом государстве (теоретико-правовой аспект). Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Санкт-Петербург, 2008, 175 էջ:
39. Ковалевский М.М. Избранные труды в 2-х ч. М., 2010, Ч 2, 445 էջ:
40. Конституционное (государственное) право зарубежных стран. Отв. ред. Страшун Б.А., т. 1-2, изд. 3-е. М., 2000, 784 էջ:
41. Конституционное право зарубежных стран. Под об. ред. М. В. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. М., 2008, 1056 էջ:

42. Конституция Российской Федерации: Коментарий. Под. общ. ред. Топорнина Б.Н., Батурина Ю.М., Орехова Р.Г. М., 1994, 623 էջ:
43. Котляровский С.А. Конституционное государство (Опыт политико-морфологического анализа). СПб, 1907, 251 էջ:
44. Кравец И.А. Формирование российского конституционализма (проблемы теории и практики). М. Новосибирск, 2001, 362 էջ:
45. Краснов М.А. Россия как полупрезидентская республика: проблема баланса полномочий // Государство и право, 2003, N 10, էջ 16-23.
46. Кутафин О. Е. Шеремет К. Ф. Компетенция местных советов. М., 1986, 223 էջ:
47. Лукьянова Е.А. Некоторые проблемы Конституции Российской Федерации // Конституционное и муниципальное право, 2007, N 15, էջ 4-9:
48. Манов Г.Н. О понятии форма государства // Учен. зап. Таджикского у-та, 1956, Т.3. Вып. 4, էջ 7-14:
49. Медушевский А. Н. Сравнительное конституционное право и политические институты. М., 2002, 512 էջ:
50. Международное право. Отв. ред. Колосов Ю.М., Кузнецов В.И. М., 1995, 608 էջ:
51. Международное право. Отв. ред. Егоров С.А. М., 2016, 848 էջ:
52. Международное право. Под. ред. Л.Н.Шестакова. М., 2005, 464 էջ:
53. Мещеряков А.Н. Конституционные способы воздействия Президента Российской Федерации на исполнительную власть и связанные с ними особенности российской формы правления // Конституционное и муниципальное право, 2005, N 5, էջ 19-22:
54. Михалева Н. А. Конституционное законодательство стран СНГ на современном этапе (динамика развития) // Государство и право, 2004, N 9, էջ 73-80:
55. Морозова Л.А. Теория государства и права. М., 2002, 414 էջ:
56. Ноздрачев А.Ф. Конституционные основы исполнительной власти в РФ // Исполнительная власть в РФ. Под ред. Ноздрачева А.Ф., Тихомирова Ю. А., М.,1996, էջ 3-24:
57. Общая теория государства и права. Том 1. Государство. Под. ред. М.Н. Марченко. М., 2007, 528 էջ:

58. Ожегов С.И., Шведова Н.Ю. Толковый словарь русского языка. М. 1999, 944 էջ:
59. Окуньков Л.А. Президент РФ. Конституция и политическая практика. М., 1996, 39 էջ:
60. Авакьян С.А. Конституция России: природа, эволюция, современность. М., 1997, 512 էջ:
61. Сахаров Н. А. Институт президентства в современном мире. М., 1994, 324 էջ:
62. Соломанина Ю.В. Республиканская форма правления в России: история и современность. Автореф. дисс. канд.юрид. наук. Владимир, 2007, 25 էջ:
63. Стародубский Б. А. О классификации форм буржуазных государств. Свердловск, 1989, 480 էջ:
64. Танчев Е. Разделение властей и принцип господства права в сравнительной и болгарской перспективе // Конституционные ценности в теории и судебной практике. Сборник докладов. М., 2009, 233 էջ:
65. Тихомиров Ю. А. Теория компетенции. М., 2004, 355 էջ:
66. Хессе К. Основы конституционного права ФРГ. М., 1981, 368 էջ:
67. Чиркин В.Е. Конституция: российская модель. М., 2004, 134 էջ:
68. Чиркин В.Е. Основы сравнительного правоведения. М, 1996, 112 էջ:
69. Чиркин В.Е. Конституционные проблемы власти народа // Государство и право, 2004, N 9, էջ 5-12:
70. Шайо А. Конституционные ценности в теории и судебной практике: введение, // Конституционные ценности в теории и судебной практике. Сборник докладов. М., 2009, 233 էջ:
71. Шайо А. Самоограничение власти: краткий курс конституционализма. М., 2001, 292 էջ:
72. Шаблинский И.Г. К истории рождения российского конституционализма // Государство и право, 2008, N 6, էջ 110-115:
73. Шапавал В.Н. Сравнительное конституционное право. Киев, 2007, 416 էջ:
74. Шмавонян Г.А. Президентская власть и разделение властей в полупрезидентской республике: опыт Армении // Государство и право, 2000, N 1, էջ 87-97:

75. A New Political System Model // European Journal of Political Research. Vol. 8, issue 2, 1980, էջ 165-187:
76. Alfred Stepan, and Cindy Skach, Constitutional frameworks and democratic consolidation. Parliamentarianism versus presidentialism, World Politics, vol. 46, No. 1, 1993, էջ 1-22:
77. Arvydas Andruskevicius, Deividas Kriauciunas, Giedre Lastauskiene, Responsible Government // Crisis, The Rule of Law and Human Rights in Lithuania, edited by Egidijus Kuris, Siauliai, 2015, 352 էջ:
78. Bebler A., Introduction // Bebler A. and Seroka J. (eds.). Contemporary Political Systems. Classifications and Typologies. Boulder and London: Lynne Rienner Publishers, 1990, 384 էջ:
79. Dominique Chagnollaud de Sabouret, Droit Constitutionnel Contemporain, Dalloz, Paris, 2015, 386 էջ:
80. Duverger M. A., Institution politiques et droit constitutionnel. Paris, 1970, 872 էջ:
81. Harutyunyan G., Constitution and constitutionalism in the context of constitutional culture of the new millennium // New millennium constitutionalism: paradigms of reality and challenges, Yerevan, NJAR, 2013, 472 էջ:
82. Johari J.C., Principles of Modern Political Science. New Deli. Sterling Publ. Private Ltd., 1989, 856 էջ:
83. Jon Elster, Bargaining over the Presidency. // EECR.Vol 2. N 4. Fall 1993 / Vol 3, N 1. Winter, 1994, էջ 95-98:
84. Tuori K., Issues of Constitution-Making-Recent Experiences // New millennium constitutionalism: paradigms of reality and challenges, Yerevan, NJAR, 2013, 472 pages
85. Marcel Morabito, Histoire constitutionnelle de la France, Lextenso editions, LGDJ, Issy-les-Moulineaux, 2014, 550 էջ:
86. Osiatynski W. A., Note on General Wojciech Jaruzelski // EECR.Vol 2. N 4. Fall 1993 / Vol. 3, N 1. Winter, 1994, էջ 47-50:
87. Philippe Ardant, Bertrand Mathieu, Droit Constitutionnel et Institutions Politiques, Lextenso editions, LGDJ, Issy-les-Moulineaux, 2015, 572 էջ:

88. Philippe Foillard, Droit constitutionnel et institutions politiques, Groupe Larcier s. a., Bruxelles, 2015, 458 էջ:
89. Bartole S., Conditionality and living constitution // New millennium constitutionalism: paradigms of reality and challenges, Yerevan, NJAR, 2013, 472 էջ:
90. Stephen Holmes, Superpresidentalism and its problems // EECR. Vol 2. N 4.Fall 1993/Vol 3. N 1. Winter. 1994, էջ 123-126: